



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

4318

~~211~~

VII — 530

XI



~~213~~

III

~~III~~


~~221~~

2623

~~822~~

~~V~~

259



Handwritten initials



ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

Ս Ր Բ Ե Ջ Ը Ն Գ Ե Տ Մ Ո Ւ Թ Ե Ը Ն

Ի ԳԵՏՍ ԱԸԱԿԵՐՏԱՅ

ԱՐՔՈՒՆԻ ԴՊՐՈՑԱՑ ՅԱՅՍԿՈՅՍ ԿՈՎԿԱՍՈՒ.

4318

Ի 1,050 ԱՄ

ՅՈՎԱԷՓ ԱՐԿԻ ԲԱԿԱՆԱՅ ՕՐԲԵԼԻ

ԿՐՕՆՈՒՍՈՅՑ ԳԱՐԱՆԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՏՓԻՒՍԱՅ:



ՏԻՊ ԵՐԿՐՈՐԻ.

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԷՐԵՆԵՍԱՅ ԲԱՐՓՔՆԵԶԹԻ.

1859.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ
Ценсурный Комитетъ законенное число экземпляровъ.
Тифлисъ, 25-го октября 1858 г.

Ценсоръ *Кайтмазовъ.*

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

Ս Ր Ի Ե Ջ Ե Ն Պ Ե Տ Մ Ո Ւ Թ Ե Ե Ն

1. ԱՍՏՈՒԱԾ ՍՏԵՂԾԱՆԷ ԶԱՇԽԱՐՀՍ Ի ՊԵՑ ԱՐՈՒՐՍ:

Աստուած ստեղծ զերկինս և զերկիր ՚ի վեց աւուրս. յԱռաջին աւուր արար զլոյս. յերկրորդում աւուր արար զհաստատութիւն, զոր և կոչեաց երկին. յերրորդում աւուր ժողովեաց զջուրսն ՚ի մի, և եհան յերկրէ զբոյսս և զծառս. ՚ի Չորրորդում աւուր արար զարեգակն, զլուսին և զաստեղս. ՚ի Հինգերորդում աւուր զթուջունս, որք թրուջին ընդ օդս երկնի և զձկունս, որք լողան ՚ի ջուրս. ՚ի Վեցերորդում աւուր արար զամենայն տեսակս կենդանեաց, և ապա զմարդն. և հանգեալ Աստուած յաւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց :

2. ԱՍՏՈՒԱԾ ՍՏԵՂԾԱՆԷ ԶԱՐԴՐՍ Ի ՀՈՂՈՑ ԵՐԳՐԻ:

Աստուած ստեղծ զմարմին մարդոյ ՚ի հողոյ երկրի և ետ նմա հողի կենդանի, արար զնա ըստ պատկերի և ըստ նմանութեան իւրում, և կոչեաց զնա Ադամ. և պրկ Տէր Աստուած թմբրութիւն ՚ի վերայ Ադամայ, և առ մի ՚ի կողից նորա, և անտի սպեղծ զկին, զոր ետ Ադամայ օգնական :

3. ԱՍՏՈՒԱԾ ԴՆԷ ԶՄԱՐԴՆ Ի ԴՐԱԽՏԻՆ ՓԱՓԳՈՒԹԵԱՆ:

Եր Տէր Աստուած զԱդամ և զԵւայ 'ի դրախտին փափկութեան, որ և կոչի Դրախտ երկրային. անդ էին ամենայն ծառք գեղեցիկ 'ի տեսանել և քաղցր 'ի կերակուր. 'ի միջի նոցա էր և ծառն զիտութեան բարւոյ և չարի: Պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ և ասէ, յամենայն ծառոց՝ որ է 'ի դրախտիդ՝ կերիցես, բաց 'ի ծառոյն զիտութեան բարւոյ և չարի, զի յորժամ ուտիցես 'ի նմանէ, մեռանիցիս:

4. ԱՂԱՄ ԵՒ ԵՒՆՏ ՄԵՂԱՆՁԵՆ:

() Ըն, որ էր իմաստնագոյն քան զամենայն դազանս՝ ասէ ցկինն. զի է զի ոչ ուտես 'ի պաղոյ ծառոյդ այգորիկ. ասէ կինն ցօձն, այսպէս ասաց մեզ Տէր, եթէ հուպ լինիջիք այդմ, մեռիջիք: Ամենևին ասէ օձն, ոչ թէ մեռանիցիք, այլ բացցին աչք ձեր, և լինիջիք իբրև Աստուած ճանաչել զչար և զբարի: Կինն խաբեալ այսու բանիւ էառ զպտուղն և եկեր, և ետ անն իւրում ընդ իւր, և կերան: Եւ լուան զձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ, և թաքեան Ադամ և Եւայ 'ի մէջ ծառոց դրախտին: Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ և ասէ, Ադամ ո՞ւր ես. ասէ Ադամ, լուայ զձայն քո և երկեայ, քանզի մերկ էի և թաքեայ: Եւ ասէ ցնա Տէր Աստուած, ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես, գուցէ կերար 'ի ծառոյն այնմիկ, յորմէ և եթ պատուիրեցի քեզ՝ չուտել. ասէ Ադամ, կինս՝ զոր ետուր ինձ. սա՛ ետ ինձ, և կերայ. ասէ Տէր Աստուած ցկինն, զի ոչ գործեցեր զայդ, և ասէ կինն, օձն խաբեաց զիս և կերայ:

5. ԱՍՏՈՒԱԾ ԱՆԻԾԱՆԷ ԶՕԶ ԵՒ ԽՈՍԱՆԱՅ ԱՌԱՔԵԼ ԶՓԳԻԶ:

Ըսէ Տէր Աստուած ցօձն, փոխանակ զի խաբեցեր դու

զկինն, անիծեալ լիջիր դու յամենայն անասնոց երկրի, ՚ի վերայ լանջաց և որովայնի քո դնասցես, և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. և եղից թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ, նա սպասեսցէ քում գլխոյ, և դու սպասեսցես նորա դարշապարի: Իսկ ցկինն ասէ, բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո. ցաւօք ծընցիս զորդի, և այր քո տիրեսցէ քեզ:

6. ԱՂԱՄ ԱՐՏԱՔԱՒ Ի ԴՐԱՒՏԻՆ:

Հուսկ ուրեմն ասէ Տէր ցԱզամ, փոխանակ զի լուար ձայնի կնոջ քո՝ և կերար ՚ի ծառոյ անտի՝ յորմէ պատուիրեցի քեզ չուտել, անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո, փուշ և տտասկ բուսուսցէ քեզ, և քրտամբք երեսաց քոց կերիցե՞ս զհաց քո, մինչև դարձցիս յերկիր ուստի առար:

Եւ ապա եհան և արձակեաց զԱզամ ՚ի դրախտէն գործել զերկիր. և հրամայեաց քերովբէից պահել զձանապարհըս ծառոյն կենաց:

7. ՈՐԴԻՔ ԱՂԱՄԱՅ ԿԱՅԻՆ ԵՒ ԱՐԷԼ:

Ազամայ ծնան յԵւայէ երկու որդիք, որոց անուանքն էին Կային և Արէլ. առաջինն էր երկրագործ. իսկ երկրորդըն հովիւ խաշանց:

Եւ եղև յետ աւուրց երկոքին եղբարք մատուցին պատարագ Աստուծոյ, Կային ՚ի պտոց երկրի. և Արէլ յանդրանկաց խաշանց խւրոց:

Հաճոյ թուեցաւ Աստուծոյ պատարագն Արէլի, իսկ Կայինին՝ ոչ, զի մատոյց զայն բռնադատ յօժարութեամբ. Ասէ Տէր Աստուած ցԿային, ընդէ՛ր նախանձիս ընդ եղբարք քո, ոչ ապաքէն եթէ ուղիղ ոչ մատուցեր՝ մեղար,

այլ դու դարձիր յեղեռնութենէ սրտիդ, և մի՛ չար ինչ
խորհեսցիս՝ զի մի՛ պատուհասակո՞ծ լինիցիս :

8. ԳԱՏԻՆ ՍՊԱՆԱՆԷ ԶԱՐԷԼ :

Իսկ Կայինի ո՛չ լուեալ ձայնի Տեառն, և ծածկեալ ՚ի
ներքս ՚ի սրտին զբէն, ասէ ցԱբէլ եղբայր իւր, ե՛կ երթի-
ցուք ՚ի դաշտ առ ՚ի զբօսնորւլ :

Եւ իբրև չոգան ՚ի դաշտ անդր, կատաղեալ Կային բար-
կութեամբ ընդդէմ՝ եղբօրն իւրոյ՝ յարեալ ՚կ վերայ նորա
և սպան զնա անդ :

Յայնժամ ասէ Տէր Աստուած ցԿային, ո՛ւր է Աբէլ
եղբայր քո. և նա ասէ՝ չգիտե՛մ, միթէ պահապան իցեմ՝
եղբօրն իմոյ :

9. ԳԱՏԻԺ ԳԱՏԻՆԻ :

Եւ ասէ Աստուած, զի՞նչ գործեցեր զայդ՝ ո՛ Կային,
արիւն եղբօր քո՝ զոր հեղին ձեռք քո, բողոքէ առիս յերկ-
րէ : Արդ անիծեալ լիջիր դու ՚ի վերայ երկրի, որ էարբ
զարիւն Աբէլի ՚ի ձեռաց քոց. գործեսցես զերկիր բազում
և մեծ աշխատանօք՝ և ո՛չ յաւելցէ տալ քեզ զպտուղ
իւր. երերեալ և տատանեալ եղիցիս ՚ի վերայ երկրի :

10. ՇԻՆՈՒՄՆ ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆԻ :

Իբրև սկսաւ բազմանալ թիւ մարդկան ՚ի վերայ երկրի,
բազմացան յայնժամ չարիք և մեղք մարդկան, ընդ որ
սորջացեալ Աստուծոյ ՚ի սրտի իւրում՝ վճռեաց կորուսա-
նել ջրհեղեղաւ զազգ մարդկան :

Իայց նոյ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, զի էր այր
արդար և առաքինի : Եւ արար ըստ հրամանի Տեառն ըզ-
տապան մի մեծ ՚ի նմանութիւն նաւու, և ծեփեաց զայն

նաւթիւ ներքոյ և արտաքոյ. և էառ ընդ իւր յամենայն ա-
նասնոց երկրի՝ երկու երկու անգր ՚ի տապանն:

11. ԶՐՀԵՂԵՂ ՅԱՄԻ ԱՇԽԱՐՀԻ 1656:

Եւմուտ Նոյ և որդիք իւր, կին նորա և կանայք որդւոց
նորա ընդ նմա ՚ի տապանն, և պատառեցան ամենայն աղ-
բերք անգնդոց, և լցաւ ամենայն երկիր ջրով:

Յայնժամ էած Տեր անձրև ՚ի վերայ երկրի զքառասուն
տիւ և զքառասուն գիշեր: Սաստկանայր ջուրն ՚ի վերայ
երկրի յոյժ յոյժ մինչև Հնդետասան կանգուն բարձրացաւ
՚ի վեր՝ և ծածկեաց զամենայն լեռինս աւուրս հարիւր և
յիսուն: Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն ՚ի վերայ
երկրի, և ապա սակաւ առ սակաւ սկսաւ նուազել ջուրն. և
տապանն նստաւ ՚ի լեռինն Արարատայ:

12. ԳԱՒՃԱՆ ԶՐՀԵՂԵՂԻՆ:

Յամսեանն մետասաներորդի, որ օր առաջին էր ամսոյն,
երևեցան զլուխք լերանց. ապա եբաց Նոյ զպատուհան
տապանին՝ և արձակեաց զագռաւ մի, որ ոչ դարձաւ անդ-
րէն յետս. յետ այնորիկ արձակեաց զաղաւնի, որոյ ոչ
գտեալ հանգիստ ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա ՚ի
տապանն, զի ջուրն զեռ ունէր զամենայն երեսս երկրի.
յետ եօթն աւուրց դարձեալ արձակեաց զաղաւնին ՚ի տա-
պանէ անտի, և դարձաւ առ նա տղաւնին ընդ երեկս, և ու-
նէր տերև ձիթենւոյ ՚ի բերան իւր. յայնժամ գիտաց Նոյ,
թէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ:

13. ՆՈՏ ԵԼԱՆԷ Ի ՏԱԳԱՆԷ:

Եւ Նոյ և կին նորա, որդիք նորա և կանայք որդւոց նո-
րա ընդ նմա, ամենայն գազան և ամենայն սողուն շարժուն՝
և ամենայն թռչուն ըստ ազգի իւրեանց ելին ՚ի տապանէ

անտի: Յայնժամ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ, և եհան
ողջակէզ ՚ի վերայ սեղանոյն: Ասէ Տէր Աստուած ցՆոյ,
ոչ ևս յաւելից հարկանել զամենայն մարմին կենդանի:
Զաղեղն իմ եդից յամպս, և այն եղիցի ՚ի նշանակ յաւի-
տենական ուխտին ընդիս և ընդ ամենայն երկիր: Եւ եղի-
ցի ՚ի գումարել իմ զամպս ՚ի վերայ երկրի, երևեսցի ա-
ղեղն իմ յամպս, և յիշեցից զուխտ իմ՝ որ ընդիս և ընդ
քեզ. և ոչ ևս եղեցի ջրհեղեղ ՚ի սատակել զամենայն
մարմին:

14. ԱՊԵՊԵՆՈՒՄՆ ՎԱՐՈՒՅ ԱԶԳԻ ՄԱՐԴԱՆ:

Ի՞նչոր ազգք սերեցան յորդոց Նոյի. ՚ի Սեմայ սերե-
ցան Ասիացիք, ՚ի քամայ Ափրիկեցիք և ՚ի Յաբեթայ Եւ-
րոպացիք: Զրհեղեղն՝ որ պատիժ էր մարդկան, ոչինչ
ազգեաց ՚ի սիրտս նոցա, զի ՚ի սուղ ժամանակի եղեն մար-
դիկ վատթարագոյն քան զառաջինն. զի մոռացեալ զԱստ-
ուած՝ զարարիչն իւրեանց, սկսան պաշտել զարեգակն և
զլուսին, անարգել զծնողս, խօսիլ զստուծիւն, առնել ըզ-
խորամանգութիւն, զգողութիւն և զմարդասպանութիւն,
և միով բանիւ ասել՝ ապականեցին զանձինս իւրեանց ա-
մենայն զազրագործութեամբ:

15. ԿՈՉՈՒՄՆ ԱՐԲԷՆՄՈՒ ՅԱՄԻ ԱՇԽԱՐՀԻ 2083:

Այլ սակայն էին անձինք ոմանք՝ որք ունէին առ Աստ-
ուած զճշմարիտ հաւատս, յորոց միջի էր Աբրահամ ՚ի
ցեղէն Սեմայ. ընդ որում եդ Աստուած զուխտ՝ օրինակ
զայս. «Ե՛լ յերկրէ քումմէ և յազգէ քումմէ և ՚ի տանէ
հօր քո, և ե՛կ յերկիր, զոր տաց քեզ և զաւակի քո ՚ի
ժառանգութիւն, բազմացուցից զզաւակ քո, եղիցիս հայր
ազգաց բազմաց, և ՚ի քէն օրհնեսցին ամենայն ազգք
երկրի »:

16. ԾԵՈՒՆԴ ԻՍԷՆՍԵՑ:

Աբրահամ ծերացեալ էր արդէն, և Սառայ կին նորա էր ամուլ. այլ սակայն խոստացաւ Աստուած տալ նմա որդի. «Եղեցի քեզ, ասէ Աստուած, որդի 'ի Սառայէ կնոջէ քումմէ». զայս լուեալ Սառայի՝ ծիծաղեցաւ ընդ միտս իւր, և ոչ հաւատաց նոյն ժամայն բանին՝ զոր ասաց նմա Աստուած. վասն որոյ և յանդիմանեցաւ յԱստուծոյ: Իսկ Աբրահամ հաւատաց խոստմանն Աստուծոյ. յետ անցանելոյ ամի միոյ՝ ծնաւ որդի Աբրահամու, զոր կոչեաց նա Իսահակ:

17. ԱԲՐԱՀԱՄ ԲԵՐԷ ՅՈՂՋԱԿԷՉ ԶՈՐԴԻՆ ԻՒՐ ԶԻՍԷՆՍԵՑ:

Յետ ժամանակաց ինչ սկսաւ աճիլ մանուկն Իսահակ: Աստուած կամելով փորձել զհաւատս Աբրահամու, ասէ ցնա. «Առ դու զմիակ որդիդ զԻսահակ՝ զոր սիրես, և հանցես զնա յողջակէզ 'ի վերայ միոյ 'ի լերանց՝ զոր ցուցից քեզ»: Աբրահամ նոյն ժամայն հնազանդեալ հրամանի Տեառն՝ եղ զփայտն ողջակիզին 'ի վերայ Իսահակայ, և ինքրն էառ 'ի ձեռն իւր զսուր և զհուր: Յետ այսր ամենայնի՝ ասէ Իսահակ ցհայր իւր, «Հայր՝ ահա հուր՝ և ահա փայտ, ուր է ոչխար յողջակէզ.» ետ նմա պատասխանի Աբրահամ, Աստուած տեսցէ զիւր ոչխար յողջակէզ՝ որդեակ:

18. ԱՍՏՈՒՆԾ ԱՐԳԵԼՈՒ ԶԶԵՌՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ:

Աբրահամ ժամանեալ 'ի տեղին յայն, յոր ասաց նմա Աստուած շինել զսեղան և դնել 'ի վերայ զփայտն, կայեալ զձեռս Իսահակայ, եղ զնա 'ի վերայ փայտիցն և ձգեաց զձեռն առնուլ զսուրն 'ի զննուլ զորդին իւր:

Յայնժամ գոչեաց յերկնից հրեշտակ Տեառն և ասէ.

«Աբրահամ Աբրահամ, մի՛ մխեր զձեռն քո ՚ի պատանեակդ, զի այժմ՝ զհիտացի թէ ունիս զճշմարիտ հաւատս, և երկիւղած ես յԱստուծոյ. զի ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ. վասն որոյ և ես օրհնեցից զքեզ և բազմացուցից զզաւակ քո որպէս զաստեղս երկնից: Համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես զխոյ մի կախեալ ըզժառոյն, և գնացեալ նորա էառ զխոյն, և եհան զնա յողջակէզ՝ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ:

19. ԵՂԻԱԶԱՐ ԵՐԵՑ ԾԱՌԱՅՆ ԱՐԲԱՍՏՈՒ ԳՆԱՅ Ի ՄԻՀԱԳԵՏՈ, ԱՌ Ի ԲԵՐԵԼ ԱՆՏԻ ԶԿԻՆ ՂԱՍՆ ԻՍԱՀԱԿԱՅ:

Յետ այնորիկ առաքեաց Աբրահամ զժառայ իւր զԵղիազար առ ազգակիցս իւր, որք էին ՚ի Միջագետս առ ՚ի ածել անտի զկին վասն որդւոյ իւրոյ Իսահակայ: Էառ ժառայն զտասն ուղտս յուղտուց տեառն իւրոյ՝ և գնաց, առեալ ընդ իւր զբազում պարզևս առ ՚ի ընծայել հարսին և ծնողաց նորին: Մինչդեռ ժամանեաց ՚ի Միջագետս, եթող զուղտն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ընդ երեկս, յորում պահու սովորութիւն էր կանանց երկրին այնորիկ հանել զջուր:

20. ԵՂԻԱԶԱՐ ԽԵՒՐԻ ԵԱՍՏՈՒԾՈՅ ԶԻ Ի ՀԱՄԱԶԳԵԱՅ ՂԻՃԱԿԵՍՏԻ ԿԻՆ ԻՍԱՀԱԿԱՅ:

Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, յաջողեա՛ ինձ այսօր. և արա՛ զի կոյսն՝ որում ես ասացից, թէ խոնարհեցո՛ զսափոր քո զի արբից, արբուսցէ ինձ. զայն պատաստեցեր ծառային քում Իսահակայ:

Մինչև և կատարեալ էր նորա զխօսն ՚ի մտի իւրում՝ եկն անդ նոյն ժամայն Ռեբեկայ կոյս զեղեցիկ երեսօք յոյժ. էջ յաղբիւր և ելից զսափորն իւր: Յայնժամ ըն-

Թացաւ ծառայն յառաջ և ասէ. արբո՛ ինձ սակաւ մի ջուր
'ի սափորոյ այտի. ասէ Ռեբեկայ, արբ Տէր. և փութացեալ
իջոյց զսափորն 'ի վերայ բազկաց իւրոց և արբոյց նմա:
Յետ արբուցանելոյ զծառայն, փութացաւ և եհան ջուր
վասն ուղտուց նորա. իսկ Եղիազար միտ դնէր և լուռ կայր,
եթէ յաջողեաց Տէր զճանապարհ նորա՝ Թէ ոչ:

21 ԵՂԻԱԶԱՐ ՀԱՐՅԱՆԷ ՅՌԵԲԵԿԱՅ ԹԷ ՈՅՐ ԴՈՒՍՏԻ Է ՆԱ:

Եւ եղև իբրև դադարեցին ուղտքն յըմպելոյ, առ Եղիա-
զար գինդս ոսկիս և երկուս ապարանջանս և ետ Ռեբեկայի.
ապա եհարց զնա՝ և ասէ, զ՛յր դուստր ես դու, պատմե՛ս
ինձ Թէ իցէ՞ 'ի տան քում մեզ տեղի իջեվանաց. ասէ ցնա
Ռեբեկայ, դուստր Բաթուէլի եմ ես, և հաւն իմ է եղբայր
Արրահամու. իսկ յարդ և խոտ շատ է մեր՝ նա և տեղի իջե-
ւանաց:

Չայս լուեալ Եղիազարու՝ ուրախ եղև յոյժ յանձն
իւր, և երջանիկ զանձն իւր համարէր 'ի ճանապարհի:

22 ԲԱԹՈՒԷԼ ԹՈՒՆ ԱԲԲԱՀԱՄՈՒ ԸՆԴՈՒՆԷ ԶԵՂԵԱԶԱՐ Ի ՏՈՒՆ

ԻՒՐ:

Ընթացաւ Ռեբեկայ 'ի տուն և պատմեաց մօրն զամե-
նայն, որ միանգամ պատահեցաւ ընդ նմա: Իբրև լուաւ
զբանսն Ռեբեկայի Լաբան եղբայր նորա՝ ընթացաւ առ այրն
արտաքս յաղբիւր և ասէ ցնա. ե՛կ, մո՛ւտ 'ի տուն, օրհ-
նեա՛լ Տեառն, զե՛կաս արտաքոյ, ես պատրաստեցի քեզ
զտուն և զտեղի վասն ուղտուցդ: Եմո՛ւտ այրն 'ի տուն ան-
դըր. և եղին հաց առաջի նորա:

23 ՌԵԲԵԿԱՅ ԽՕՈՒ Ի ՀԱՐՍՆՈՒԹԻՒՆ:

Եղիազար հանգեալ 'ի վաստակոց սակաւիկ մի՝ փութա-
ցաւ պատմել ծնողացն Ռեբեկայի զպատճառ ճանապար-



Տորդութեան իւրոյ, և խնդրեաց ՚ի նոցանէ՝ զի հաճեսցին տալ զՌեբեկայ ՚ի կնութիւն Իսահակայ: Պատասխանի ետուն յայնժամ ծնողքն և ասեն, ՚ի Յեաննէ ել բանդ, և մեք ո՛չ կարեմք հակառակ կալ կամաց նորա. ահաւաղիկ Ռեբեկայ, առ և գնա՛, և եղիցի կին որդւոյ տեանն քո Իսահակայ: Իբրև լուաւ զայս Եղիազար, գոհացաւ զԱստուծոյ և եհան անօթս ոսկւոյ և արծաթոյ և հանդերձս՝ զոր ետ Ռեբեկայի, և ընծայեաց նոյնպէս բազում ինչ և եղբարց նորա և մօրն, և ապա ցնծացան և ուրախ եղեն յոյժ:

24. ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌԵԲԵԿԱՅԻ:

Յարուցեալ Եղիազար ընդ առաւօտն վաղբաջ՝ ասէ. արձակեցէ՛ք զիս, զի երթայց առ տէր իմ. զի սպասէ ինձ: Յայնժամ ասն եղբարքն, կոչեսցուք զաղջիկն և հարցցո՛ւք զնա. կոչեցին զՌեբեկայ՝ և ասեն, երթա՛ս ընդ առնրս ընդ այսմիկ. և նա ասէ՝ երթամ:

Յուղարկեցին յայնժամ զնա և զինչս նորա ընդ Եղիազարու, ցանկալով նմա զամենակերպ երջանկութիւն և զբարեյաջողութիւն:

25. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԻՍԱՀԱԿԱՅ:

Իսահակ ելեալ յերեկոյի զբօսնուլ ՚ի դաշտին, ամբարձ զաչս իւր և ետես, զի գային ուղտք տասն. և Ռեբեկայ տեսեալ զԻսահակ՝ զի զբօսնոյր, էջ վաղվաղակի յուղտոյ անտի, և եհարց ցծառայն, ո՞վ է այրն, որ գայ ՚ի դաշտին ընդ առաջ մեր. ասէ ծառայն. նա է տէր իմ. և նորա նոյնժամայն առեալ զձորձս իւր էարկ զիւրև. և իբրև հասին առ Իսահակ, Եղիազար պատմեաց նմա զամենայն զոր ինչ գործեաց. և նա էած զՌեբեկայ ՚ի տուն մօրն իւրոյ, և էառ զնա ինքեան ՚ի կնութիւն, որով և մխիթարեցաւ:

26. ԵՍՍԻ ՎԼԱՍՈՒԷ ԶԻՐԸԻՌՆՍ ԸՆԴՐԱՆՊՈՒԹԵԱՆ ԻՐՐՈՅ ՅԸ-

ԳՈՎԱՐԱՅ:

Ուրեկայ ծնաւ ՚ի միասին զերկու որդիս, զԵսաւ և զՅակովբ, յորոց առաջինն էր այր հմուտ յորսս և թաւամազ, իսկ կրտսերն այր առանց պաճուճանաց, ընդասուն: Յաւուր միում մինչ եփեալ էր Յակովբայ թան վասըն իւր յոսպոյ, եկն ՚ի դաշտէ Եսաւ նքթեալ՝ և ասէ ցեղբայր իւր, տուր ինձ ճաշակել ՚ի շիկաթանէդ յայդմանէ, զի նքթեալ եմ. ասէ Յակովբ ցԵսաւ, տաց քեզ, եթէ վաճառեսցես ինձ զերաւունս անդրանկու թեանդ: Ասէ ցնա Եսաւ, ահաւասիկ ես երթամ ՚ի վախճանել, և առիմէ՞ր ինձ անդրանկութիւնս. եթէ այդպէս իցէ, ասէ ցնա Յակովբ, երդուի՛ր ինձ այսօր. երդուաւ նմա Եսաւ, և այնպէս վաճառեաց նմա զերաւունս անդրանկութեան իւրոյ:

27. ԻՍՍՀԸԿ ԱՌԱՔԷ ԶԵՍՍԻ ՅՈՐՍ:

Իսահակ սիրէր զԵսաւ, զի միշտ կերակրէր զնա որսով. իսկ Ռեբեկայ սիրէր զՅակովբ: Յաւուր միում յորժամ ծերացեալ էր Իսահակ, և տկարացեալ էին աչք ՚ի տեսանելոյ, կոչեաց զԵսաւ զորդի իւր և ասէ, արդ՝ ան դու զաղեղըն և զկապարճս, և ելեալ ՚ի դաշտ որսա՛ ինձ որս, և արա՛ ինձ խորտիկս՝ որպէս սիրեմ ես, և բե՛ր՝ մատո՛ ինձ, զի կերայց և օրհնեցից զքեզ մինչչև մեռեալ իցեմ: Ել և փութացաւ Եսաւ յորս ըստ բանից հօր իւրոյ:

28. ՌԵԲԵԿԱՅ ՓՈՒՆՆԱԿ ԵՍՍԻՆՅ ՀՐԱՄԱՅԷ ՅԸԿՈՎԱՐԱՅ ԳՆԱԸ ԱՌ

ՀԱՅՐ ԻՐ:

Առաւ Ռեբեկայ զամենայն, զոր ինչ խօսեցաւ Իսահակ ընդ որդւոյ իւրում Եսաւայ. կոչեաց ապա առ ինքն զՅակովբ և ասէ, գնա՛ դու ՚ի դաշտն և բե՛ր ինձ անտի երկունս

ուլս փափուկս և ընտիրս, արարից զնոսս խորտիկս հօր քու՛մ՝ որպէս և սիրէ, և զու մատուցես նմա, և կերիցէ և օրհնեսցէ զքեզ :

Ասէ Յակովբ ցմայր իւր, եղբայր իմ Եսաւ այր թաւ է՝ և ես լերկ, զուցէ շօշափեսցէ զես հայր իմ, և լինիցիմ առաջի նորա իբրև արհամարհոտ, և ածիցեմ ՚ի վերայ իմ անէծս փոխանակ օրհնութեան :

29. ՌԵԲԵԿԱՅ ՊԵՏՐԱՍԵՆ ՎԱՍՆ ԻՍԱՀԱԿԱՅ ԶԿԵՐԱԿՈՒՐ :

Սի՛ երկնչիւր որդեակ իմ, ասէ Ռեբեկայ, յիմ վերայ անէծքն այն, բայց միայն լուր ձայնի իմում և ե՛րթ՝ անձ ինձ. զնաց Յակովբ, էառ, ած մօր իւրում, և արար խորտիկս՝ որպէս և սիրէր հայր նորա : Յայնժամ առեալ Ռեբեկայ զպատմուճանն ազնիւ որդւոյ իւրոյ երիցու, զգեցոյց Յակովբայ, և զուլենիսն ագոյց ՚ի բազուկս նորա, և ՚ի վերայ մերկ պարանոցի նորա . արդ՝ ե՛լ զնա՛, ասէ, առ հայր քո և մատո նմա զխորտիկն, զոր սիրէ յոյժ :

30. ԻՍԱՀԱԿ ՀԱՄԱՐԻ ԶՅԱԿՈՒԲ Ի ՏԵՂԻ ՈՐԴԻՈՅՆ ԻՌՈՅ ԵՍԱՒԱՅ :

Տարաւ Յակովբ և մատոյց զխորտիկն հօր իւրում, զոր պատրաստեալ էր մայր նորա : Յայնժամ եհարց Իսահակ զնա և ասէ, ո՞վ ես զու՝ որդեակ . ե՛ս եմ, ասէ Յակովբ, Եսաւ անդրանիկ որդին քո, արարի զոր ինչ հրամայեցեր ինձ՝ հայր իմ . արի՛ նի՛ստ և կե՛ր յորոսյ իմնէ : Զիարդ կարացեր, ասէ Իսահակ, գտանել այդպէս վաղվաղակի՛ որդեակ իմ : ասէ Յակովբ՝ որպէս պատրաստեաց Տէր առաջի իմ . մօ՛տ եկ՝ ասէ Իսահակ ցՅակովբ, զի շօշափեցից զքեզ՝ որդեակ, եթէ զու իցես որդի իմ Եսաւ, թէ ոչ : Մատեաւ Յակովբ առ Իսահակ հայր իւր, որ շօշափեալ զնա ասէ . ձայնդ՝ ձայն Յակովբայ, և ձեռքդ՝ ձեռք Եսաւայ : Ո՛չ ծանեաւ զնա Իսահակ, զի ձեռք նորո էին իբրև զձեռ-

սըն Եսաւայ թաւ, և ետ նմա զամենայն օրհնութիւնս անդրանկութեանն :

31. ԵՍԱԻ ԴԱՌՆԱՑ ՅԵՏՍ ՅՈՐՄՈՑ ԵՒ ՀԱՅՅԻ ԶՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի
ՀՕՐԷ ԻՒՐՄԷ :

Յետ սակաւ ինչ միջոցի եկն Եսաւ յորսոյ, և մատոյց Տօր իւրում զխորտիկն, զոր պատրաստեալ էր : Յայնժամ մեծաւ զարմացմամբ ասէ նմա Իսահակ, ո՞վ էր այն, որ երբեր և մատոյց ինձ զկերակուր՝ և կերայ յամենայնէ մինչև չե քո եկեալ էր, և օրհնեցի զնա : Զայն լուեալ Եսաւայ աղաղակեաց ՚ի ձայն մեծ դառնացեալ յոյժ, և ասէ ցճայր իւր, օրհնեան արդ և զիս հայր :

32. ՓԱԽՈՒՍ ՅԱԿՈՎՐԱՅ :

Յայնմ օրէ վառեալ Եսաւայ բարկութեամբ ընդդէմ եղբօր իւրոյ՝ սպասէր դիպող ժամու, զի սպանցէ զնա : Երկուցեալ Ռեբեկայի զի մի՛ անկցի սիրելի որդին իւր ՚ի ձեռաց Եսաւայ. որդեակ իմ՝, ասէ, արի՛ դնա՛ առ Լաբան եղբայրն իմ՝ և բնակեսցես ընդ նմա առուրս բազումն մինչև անցցէ սրտմտութիւն բարկութեան եղբօր քո : Ել Յակովբ ըստ պատուիրանի մօրն և գնաց ՚ի Միջագետս. ՚ի գնալն ՚ի Ճանապարհին եհաս ՚ի տեղի մի, ուրանօր յոգնեալ կարի իմն՝ կամեցաւ սակաւ ինչ հանգչիլ ՚ի վաստակոց, ուստի առեալ ՚ի քարանց տեղւոյն եդ ընդ սնարս իւր, և ննջեաց :

33. ՏԵՍԻ ԵԱԿՈՎՐԱՅ :

Ետես Յակովբ ՚ի տեպեանն զսանդուխս, հաստատեալ յերկրէ՝ որոյ գլուխն հասանէր մինչև ցերկինս, և հրեշտակք Աստուծոյ հլանէին և իջանէին ընդ այն. լուաւ անդէն զի ասէր նմա Աստուած. Ե՛ս եմ՝ Տէր Աստուած Տօր

քո, մի՛ երկնչիր, զի զերկիրդ՝ յորում գուգ ննջեցեր, քեզ տաց և զաւակի քում. և ես ահաւասիկ ընդ քեզ եմ, եղեց քեզ պահապան յամենայն ճանապարհս քո և դարձուցից զքեզ ՚ի հայրենիս քո, ո՛չ թողից զքեզ մինչև արարից զամենայն ինչ, զոր խօսեցայ ընդ քեզ: Յարեաւ Յակովբ ՚ի քնոյ անտի և երկիր եպագ Տեանն:

34. ՅԱԿՈՎԲ ՀԱՍՆԻ: Ի ՄԻՋԱԳԵՏՍ:

Յակովբ անընդհատ ճանապարհորդեալ եհաս ՚ի Միջագետս, ուրանօր ամբարձեալ զաչս իւր ետես, զի էին երեք հօտք խաշանց մակաղեալ առ ջրհորովն. ՚ի ջրհորոյ անտի սովորութիւն էր արբուցանել զխաշինս. և վէմ մեծ կայր ՚ի վերայ բերանոյ ջրհորոյն: Մերձեցեալ Յակովբ առ հովիւսն, ասէ. ե՛ղբարք՝ ուստի՞ էք դուք. և նոքա ասեն ՚ի խառանէ եմք:

Ղարձեալ հարցանէ զնոսա. գիտէ՞ք դուք զԼաբան. այ՛ո գիտեմք՝ ասեն նոքա. ո՞ղջ է նա. և նոքա ասեն՝ ո՞ղջ է: Եւ ահա դուստր նորա Ռաբել գայ ընդ խաշինսն:

35. ԼԱԲԱՆ ՏԱՅ ՅԱԿՈՎԲԱՅ Ի ԿՆՈՒԹԻՒՆ ԶԴՈՒՍՏԻ ԻՐ ՌԱԲԵԼ:

Մինչդեռ խօսէր Յակովբ ընդ հովիւսն, ահա՛ Ռաբել դուստր Լաբանու գայր ընդ խաշինս, զոր արածէր նա ՚ի դաշտի: Իբրև ետես Յակովբ զազգակիցն իւր զՌաբել, մատուցեալ տապալեաց զվէմն ՚ի բերանոյ ջրհորոյն՝ և ասէ ցնա. ես եմ՝ որդի Ռեբեկայի, և համբուրեաց ընդ նմա:

Ռաբել վիութացաւ պատմել հօր իւրում, որ իբրև ետես զորդի քեռն իւրոյ՝ գիրկս արկ և համբուրեաց զնա. և ետ նմա ՚ի կնութիւն զդուստր իւր Ռաբել:

36. ՅԱԿՈՎԸՐ ԴԱՌՆԱՏ Ի ՀԱՅՐԵՆԻՍ ԻՐԻ:

Յակովբ կացեալ զժամանակս բազումս առ Լաբան. յղիացաւ յոյժ ստացուածովք և եղև բաւական հարուստ. յետ անցանելոյ բազում՝ աւուրց ըստ ազգեցութեան Աստուծոյ վերադարձաւ ՚ի հայրենիս իւր: Եբկնչէր յոյժ Յակովբ յեղբօրէ իւրմէ, և առ ՚ի յինքն յանկուցանել զսիրտ նորա, առաքեաց առ նա զհրեշտակս՝ զի ՚ի դիմաց իւր մատուցեն նմա պատարագս: Իսկ Եսաւ մոռացեալ զամենայն վրէժ իւր՝ փութացաւ ել ինքն ընդ յառաջ Յակովբայ, գիրկս արկ նմա. և փարեալ զպարանոցաւ նորա՝ համբուրեաց զնա, և լացին երկոքեան:

37. ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓԱՏ:

Յակովբ ունէր զերկոտասան որդիս, յորոց մին էր և Յովսէփ, զոր սիրէր առաւել քան զամենայն որդիս իւր, քանզի որդի ծերութեան նորա էր, և արար նմա պատմուճան ծաղկեայ: Վասն այսորիկ իսկ Յովսէփ ատելի էր յաչս եղբարց իւրոց, մանաւանդ յորժամ պատմեաց եղբարց իւրոց զերկօսին երազս իւր, որք և կատարեցան իսկ. յետ այնորիկ այնչափ սկսան ատել զնա, մինչև ոչ կարէին խօսիլ ինչ ընդ նմա խաղաղութեամբ:

38. ԵՐԱՋ ՅՈՎՍԷՓԱՏ:

Եւ յսպիսի էր երազն Յովսէփայ, զոր պատմեաց եղբարց իւրոց. թուէր ասէ՝ եթէ որայ կապէաք ՚ի դաշտի մերում, և ահա կանգնեցաւ որայն իմ, եկաց ուղղորդ. իսկ որայքն ձեր դարձան և պապին երկիր իմում որայի: Յետ այնորիկ տեսի միւս և ս այլ երազ. որպէս թէ արեգակն, լուսին և մետասան աստեղք երկիրպագսնէին ինձ: Յայնժամ ասեն եղբարքն ցմիմեանս, զի՞նչ նշանակ իցէ երազս այս, միթէ

Թագաւորելով Թագաւորեսցէ 'ի վերայ մեր, կամ տիրելով տիրեսցէ մեզ, և յաւելին ևս առել զնա. զի հայրն միտ զնէր ընթացից բանիցն :

39. ԵՂԲԱՐՔԻՆ ՅՍՊՍԷՓԱՅ ԽՈՐՀԻՆ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՍՊԱՆԱՆԵԼ
ԶՆԱ :

Յաւուր միում, մինչդեռ եղբարքն Յովսէփայ արածէին զխաշինս իւրեանց 'ի դաշտի անդ, Յովսէփ մնացեալ էր 'ի տան ընդ հօր իւրում. ասէ ցնա հայրն, եկ առաքեցից ըզքեզ առ եղբարս քո, զի բերցես ինձ զըոյց, եթէ ողջ իցեն նոքա : Տեսին զնա եղբարքն յառաջագոյն 'ի հեռատանէ, մինչ մօտ եկեալ էր առ նոսա, և խորհուրդ վատ 'ի մէջ առին սպանանել զնա : Եւ ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր, ահա՛ երազատեսն գայ, եկայք սպանցուք ըզնա և ընկեսցուք 'ի մի 'ի գբոց աստի, և հօր մերում ասացուք, թէ գազան չար եկեր զնա, տեսցուք զինչ լինիցին երազքն նորա :

40. ՌՈՒԲԷՆ Ի ՁԵՌԱՅ ԵՂԲԱՐՅՆ ԶԱՆԱՅ ԱԶԱՆԵԼ ԶՅՈՎՍԷՓ :

Ռուբէն՝ որ երիցագոյնն էր, իբրև լուաւ զայս՝ սկսաւ յորդոր լինել եղբարց իւրոց 'ի բաց կալ յայդպիսի չարագործութենէ. մեծ անօրէնութիւն է՝ ասէ, հեղուղ զարիւն պատանւոյս այսօրիկ, զի նա եղբայր մեր է. այլ լաւ է արկանել զգա 'ի գուբ մի յանապատի աստ. եղեալ 'ի մտի անշուշտ ազատել զնա 'ի ձեռաց եղբարց իւրոց, և հանեալ 'ի գբոյ անտի հասուցանել զնա առ հայր իւր : Ամենքին վճռեցին առնել ըստ բանից նորա :

41. ՅՈՎՍԷՓ ՎԱՃԱՌԻ ՅԵՂԲԱՐՅ ԻՐՈՑ :

Իբրև եկն Յովսէփ առ եղբարսն իւր, մերկացուցին ըզպատմուձանն նորա ծաղկեայ՝ զոր զգեցեալն էր, և առին

ընկեցին զնա 'ի գուբ, և ինքեանք նստեալ յետոյ մինչդեռ
 ուտէին զՏաց, զաչս 'ի վեր ամբարձեալ տեսին, զի վաճա-
 ոականք ելեալ 'ի Գաղաաղէ գնային յԵգիպտոս, և ուղտը
 նոցա լի էին խնկովք անուշահոտութեան: Յայնժամ ըստ
 խորհրդոյ Յուդայի վճռեցին ամենեքեան վաճառել զՅով-
 սէի վաճառականացն այնոցիկ. որք և վաճառեցին զՅով-
 սէի քսան դահեկանի վաճառականացն, և նորա իջուցին
 զնա յԵգիպտոս:

42. ԵՂԲԸՐԲԵ ՅՈՎՍԷՓԱՅ ԱՌԱԲԵՆ ԶՊԵՏՐՈՒՃԱՆ ԿՈՐԱ ԱՌ
 ՀԱՅՐԵ ԻՐԵԱՆՅ:

Յայնժամ առեալ եղբարցն զպատմուճանն Յովսէիայ՝
 թաթաւեցին յարեան ուլու, զոր զենեալն էին. և առա-
 քեցին զայն առ հայրն իւրեանց՝ ասելով այսպէս. զայդ
 գտաք. ծանի՛ր եթէ որդւոյ՞ քո իցէ պատմուճանդ՝ թէ ոչ:

Տեսեալ զայն հօրն աղաղակեաց անդէն և ասէ, պատ-
 մուճանս որդւոյ իմոյ է, դազան չար եկեր զնա. դազան
 յափշտակեաց զՅովսէի: Եւ պատառեալ զհանդերձս իւր,
 սուգ զգեցաւ վասն որդւոյն իւրոյ աւուրս բազումս:

Եւ ժողովեցան ամենայն ուստերք նորա և դստերք առ
 'ի մխիթարել զնա. բայց Յակովբ ոչ կամէր մխիթարիլ և
 ասէր. իջեց ես սովին սգով առ որդի իմ՝ 'ի գերեզման:

43. ՊԵՏԸՓՐԻ ԴԵՆ ԶՅՈՎՍԷՓ:

Վաճառականքն տարեալ զՅովսէի յԵգիպտոս՝ վաճա-
 ռեցին Պետաիբեայ ներքինւոյ՝ դահճապետին Փարաւօնի:
 Եւ Տէր էր ընդ Յովսէիայ. և զամենայն ինչ՝ զոր առնէր,
 Աստուած յաջողէր նմա:

Եգիտ Յովսէի շնորհս առաջի Տեառն իւրոյ, որ և կա-
 ցոյց զնա 'ի վերայ տան իւրոյ, զամենայն ինչ որ իւր էր՝

տալով 'ի ձեռս Յովսէփայ, և ոչ գիտէր զամենայն՝ որ
ինչ կայր 'ի տան իւրում, բայց միայն զհացն՝ զոր ուտէր :

44. ՅՈՎՍԵՓ ԱՐՄԱՆԻ Ի ԲԱՆՏ :

Յովսէփ էր ազնիւ երեսօք և գեղեցիկ յոյժ տեսլեամբ :
Կին Պետափրէի արկ զաչս իւր 'ի վերայ Յովսէփայ. և յոր-
գորէր զնա մեղանչել ընդ իւր : Իսկ Յովսէփ ամենևին ոչ
կամէր գործել զայնպիսի մեղս ընդ կնոջ Տեառն իւրոյ :

Յաւուր միում մտեալ էր Յովսէփ 'ի տունն՝ գործել
զգործ ինչ, բունն եհար յայնժամ կինն զձորձոց նորա և
ասէ. կատարեա՛ զկամս իմ, իսկ նորա թողեալ զձորձս իւր
'ի ձեռս նորա՛՝ փախուցեալ էլ արտաքս : Իսկ կինն 'ի բար-
կու թենէ սրտին աղաղակեաց 'ի ձայն բարձր, առ որ սպա-
սաւորք տանն հասին փութանակի և լուան զչարաչար ամ-
բաստանութիւն զՅովսէփայ, որում և այր նորա ընծայեալ
հաւատ, և ոչ քննեալ զտայօգ բանս կնոջն՝ սրամտու-
թեամբ մեծաւ հրամայեաց արկանել զՅովսէփ 'ի բանտ :

45. ԵՐՊՈՒ ՆԵՐՔԻՆԻՔ ԱՐՔԱՅԻՆ ՓԱՐԱՌՈՅԻ Ի ԲԱՆՏԻ ՏԵՍԱՆԵՆ
ԶԵՐԱԶ :

Ի բանտի անդ էին երկու ներքինիք արքային Փարաւօնի,
յորոց մին էր տահառապետ, և միւսն մատակարար : Սաքս
երկոքին տեսին զերազ 'ի միում գիշերի. մտեալ առ սոսա
Յովսէփայ ընդ առաւօտն, ետես զի խողեալ էին. ուստի
եհարց զնոսա, ընդէ՞ր տրտում են երեսք ձեր այսօր. պա-
տասխանի ետուն նոքա և ասնն, երազ տեսաք, և ոչ որ է
որ մեկնեցէ մեզ զայն. ասէ ցնոսա Յովսէփ, ոչ ապաքէն
'ի ձեռս Աստուծոյ իցէ մեկնութիւն նոցա. պատմեցէ՛ք ինձ
զերազսն ձեր :

46. ՅՈՎԱԿԻՓ ՄԵԿՆԷ ԶԵՐԱԶՍԻ:

Յայնժամ սկսաւ պատմել առաջին ՚ի նոցանէ զերազ իւր այսպէս. թուէր ինձ ՚ի տեսլեան իմում, որթ մի առաջի իմ, և յորթն երեք ուռք՝ կանաչք յոյժ. ունէր զերիս ողկոյլս հասեալս, ողկոյլ խաղողոց. և բաժակն Փարաւօնի ՚ի ձեռին իմում, առնուի զխաղողն, ճմլէի ՚ի բաժակն անդ և մատուցանէի նմա: Բարի եղիցի քեզ՝ ասէ Յովսէփ, զկնի երից աւուրց կացուսցէ զքեզ Փարաւօն անդէն ՚ի նմին տակառապետութեան քում, ըստ առաջին իշխանութեանն քո, այլ աղաչեմ զքեզ՝ յիշեալի՛ր զիս առաջի Փարաւօնի: Յետոյ սկսաւ պատմել Յովսէփայ զերազ իւր մատակարարն. թուէր ինձ՝ ասէ, թէ երիս խանս նաչջոյ ունէի ՚ի զլսի իմ, և ՚ի վերնում խանին յամենայնէ, զոր ուտէր արքայ՝ գործ մատակարարաց, և թըռչունք ուտէին զնա ՚ի խանէ անտի: Պատասխանի ետ Յովսէփ, այս է մեկնութիւն երազիդ. յետ երից աւուրց բարձրցէ Փարաւօն զլլուիս քս ՚ի քէն, կախեսցէ զքեզ զիայտէ՛ և կերիցեն թոչունք զմարմինն քո:

47. ԿՍՏՈՒՐՈՒՄ ԵՐԱԶՈՅՆ ԸՍՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՅՈՎԱԿԻՓԱՅ:

Եւ եղև յաւուրն երրորդի օր ծննդեան էր Փարաւօնի. և առնէր ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց: Յիշեաց յայնժամ արքայն զնախարարս իւր, որք էին ՚ի բանտի: Եւ կացոյց անդէն զտակառապետն յիշխանութեան իւրում, իսկ զմատակարարն կախեաց զիայտէ, որպէս և մեկնեացն Յովսէփ: Բայց ոչ յիշեաց տակառապետն ըզ-Յովսէփ, այլ մոռացաւ զնա:

48. ԱՐՔԱՅՆ ՓՆՐԱՒՈՆ ՏԵՍԱՆԷ ԶԵՐԱԶ:

Յետ երկուց ամաց ետես Փարաւօն զերազ: Թուէր՝ թէ կայցէ յեղը գետոյ, և որպէս թէ ՚ի գետոյ անտի ելանէին

եօթն երինջք՝ գեղեցիկք և ընտիրք մարմնով, և արածէին ՚ի խաղի անդ: Այլ ևս եօթն երինջք ելանէին յետ նոցա ՚ի գետոյ անտի, զազերք և վտիտք մարմնով, և ուտէին զեօթն երինջսն գեղեցիկս տեսլեամբ և զընտիրս: Ջարթեաւ Փարաւօն և անդէն եմուտ ՚ի քուն: Ետես զերազ երկրորդ անգամ. զի ահա եօթն հասկք ելանէին ՚ի միում փնջի, ընտիրք և գեղեցիկք. այլ ևս եօթն հասկք՝ ոսինք և խորշակահարք ելանէին յետ նոցա և կլանէին զեօթն հասկսն՝ զընտիրս և զատորս:

49. ՏԱԿԱՌԱՊԵՏՆ ԼՐՔԱՅԻՆ ՅԻՇԻ ԶՅՈՎՍԻՓ ԱՌԱԶԻ ՆՈՐԱ:

Օ, արթեաւ Փարաւօն յառաւօտու և խոովեցաւ յոյժ յանձն իւր. ուստի առաքեալ կոչեաց զամենայն երազահանսն Եգիպտոսի, և պատմեաց նոցա զամենայն զոր ինչ ետեսն, բայց ոչ որ էր, որ մեկնէր զայն: Խօսեցաւ յայնժամ տակառպետն առաջի Փարաւօնի և ասէ. զյանցանըս իմ յիշեցուցանեմ այսօր. յորժամ ես և մատակարարն էաք ՚ի բանտի, տեսաք երկոքեանս ևս զերազ ՚ի միում գիշերի: Էր անդ պատանի մի Եբրայեցի ընդ մեզ, որ իմաստութեամբ մեկնեաց զերազսն մեր, զի որպէս և մեկնեացն, նոյնպէս և կատարեցաւ:

50. ՅՈՎՍԻՓ ՄԵԿԻԻ ԶԵՐԱԶՆ ՓԱՐԱՒՕՆԻ:

Առաքեաց Փարաւօն և կոչեաց զՅովսէփ՝ և պատմեաց նմա զերազսն իւր: Յայնժամ ասէ Յովսէփ ցՓարաւօն, երկոքին երազք քո զմի և եթ ինչ նշանակեն: Եօթն երինջքն գեղեցիկք՝ և եօթն հասկք գեղեցիկք, եօթն ամբ են բազում առատութեան, որք եկեսցեն փութով. իսկ եօթն երինջքն տգեղք և վտիտք՝ և եօթն հասկք ոսինք և խորշակահարք, են եօթն ամբ սովու, որ սպառեսցէ զամենայն երկիրս Եգիպտոսի: Եւ արդ՝ արքայ՝ տե՛ս, խընդ-

րեա՛ զայր մի իմաստուն և խորհրդական, և կացուցես զնա
'ի վերայ ամենայն երկրիս Եզիպտացւոց, զի ժողովեացէ
զամենայն կերակուրս եօթն ամաց բարեաց եկելոց՝ 'ի
չտեմարանս արքունի, առ 'ի պահել զկեանս ժողովրդեան՝
'ի ժամանակս սովու :

51. ՓԼԲԵՒՅՆ ՅԸՆՁՆ ԸՈՆԷ ՅՈՊՍԷՓԵՅ ԶՊԻՃԵՊ ԵԳԻՊՏՈՍԻ :

Կարի հաճոյ թուեցան բանքն առաջի Փարաւօնի, մինչև
ասէ ցՅովսէփի. որովհետև եցոյց քեզ Աստուած զայդ ա-
մենայն, չի՛ք ոք Եզիպտոս իմաստնագոյն և խորհրդական
առաւել քան զքեզ : Դու լիցիս իշխող 'ի վերայ տան ի-
մոյ, և բերանոյ քում հնազանդ լիցի ամենայն ժողովուրդ
իմ, բայց միայն աթոռովս 'ի վերոյ եղէց քան զքեզ :

Յայնժամ հանեալ Փարաւօն զմատանին իւր 'ի ձեռանէ
իւրմէ՝ եզ 'ի ձեռին Յովսէփայ, զգեցոյց նմա զպատմուճան
բեհեզեայ, արկ զմանեակ ոսկի 'ի պարանոց նորա, և եհան
զնա յերկրորդ կառս իւր : Յովսէփի էր ամաց երեսնից,
յորժամ ընկալաւ զկատարեալ իշխանութիւն յարքայէ
անտի :

52. ՅՈՊՍԷՓ ՎԼՍՆ ԵՕԹՆ ԼՄԱՅՆ ԺՈՂՈՊԷ ԶԲԱԶՈՒՄ ՅՈ-
ԲԵԼՆՍ :

Եւ Յովսէփի յերեսաց Փարաւօնի և շրջեցաւ ընդ ամե-
նայն երկիրս Եզիպտոսի. և ժողովեաց զամենայն կերակու-
րըս ամաց եօթանցն՝ յորս էր լիութիւն, վասն եօթն ա-
մաց սովոյ :

Ընցին եօթն ամքն լիութեան՝ և սկսան գալ եօթն ամք
սովուճ, և խստանալ յամենայն երկիրն Եզիպտացւոց : Եւ
յայնժամ սկսաւ աղաղակել ամենայն ժողովուրդն առ Փա-
րաւօն վասն հացի. ասէ Փարաւօն ցնոսա, երթայք առ

Յովսէփ. զի բացեալ նորա զամենայն շտեմարանս ցորենոյ վաճառէր ամենայն Եգիպտացւոցն :

53. ՅԱՊՈՎԲ ԱՌԱՔԷ ԶՈՐԴԻՍ ԻՐ ՅԵԳԻԳՏՈՍ Ի ԳՆԵԼ ԶՅՈՐԵԱՆ :

Յամենայն աշխարհաց սկսան այնուհետև գալ յԵգիպտոս՝ առ ՚ի գնել զկերակուր : Նոյնպէս և Յակովբ պաշարեալ գողով ՚ի պահասութենէ հացին՝ առաքեաց զորդիս իւր անդ՝ գնել զհաց : Ապա իջին եղբարքն Յովսէփայ. բայց զԲենիամին զեղբայրն Յովսէփայ, որ միամօր էր, ո՛չ արձակեաց ընդ եղբարսն նորա Յակովբ, քանզի երկրնչէր, թէ՛ մի՛ գուցէ պատահիցէ նմա ՚ի ճանապարհի հիւանդութիւն : Մանաւանդ զի Բենիամին ծնեալ էր ՚ի միոյ մօրէ ընդ Յովսէփայ, վասն այն իսկ աւելի սիրէր զնա հայրն՝ քան զայլ որդիս իւր :

54. ՅՈՎՍԷՓ ԸՆԵՆՈՒ ԶԵՂԲԱՐՍ ԻՐ, ԲԸՅՅ ՈՉ ՅԱՅՏԵՆ ԶԱՆՉԸՆ ԻՐ ՆՈՅԱ :

Յետ այնորիկ եկեալ եղբարքն Յովսէփայ, պագանէին խոնարհ առաջի նորա ՚ի վերայ երեսաց զերկիր : Իբրև ետես Յովսէփ զեղբարսն իւր՝ ծանեաւ, բայց ո՛չ կամեցաւ նոյնժամայն յայտնել նոցա զանձն իւր : Ուստի խօսեցաւ ընդ նոսա խստագոյնս և ասէ. ուստի՞ գայք, և վասն է՞ր. պատասխանի ետուն նոքա և ասեն. եկեալ եմք յերկրէն քանանացւոց՝ գնել զկերակուրս : Ո՛չ այդպէս է, ասէ Յովսէփ, այլ լրտեսք էք դուք, որք եկեալ էք դիտել զել և զմուտ աշխարհիս : Եւ նոքա ասեն. ո՛չ տէր, ո՛չ ինչ չար խորհուրդ է մեր, երկոտասան եղբայր եմք, որդիք ան միոյ յերկրին քանանացւոց. կրտսերն առ հօր իւրում է այսօր, և միւսն չէ ՚ի միջի :

55. ՅՈՎԱՆՓ ԹՈՂՈՒ ԸՌ ԻՆՔՆ ԶՇՄԱՌՈՆ:

Չլինեն ընդ Բենիամինի անդ ՚ի միասին ընդ նոսա, պատճառեաց զմեծ թախծութիւն Յովսէփայ. մինչ կամեցեալ ՚ի ձեռս բերել զնա զհարգ և իցէ, ասէ ցնոսա. եթէ արք խաղաղութեան էք՝ եղբայր մի ՚ի ձէնջ աստ մնացէ առիս, մինչև ածիցէք աստ զեղբայրն ձեր զկրտսեր. իսկ դուք տարայք զվաճառ ցորենոյդ ձերոյ, որով հաւատարիմ լիցին բանք ձեր, ապա թէ ոչ՝ մեռանիցիք: Յայնժամ ասեն իւրաքանչիւր ոք ցմիմեանս, այո՛, քանզի ՚ի մեղս եմք վասն եղբոր մերոյ, զի արհամարհեցաք զհեզութիւն հոգւոյ նորա յորժամ աղաչէրն զմեզ, վասն այսորիկ եկին ՚ի վերայ մեր այս չարիք: Ո՛չ գիտէին՝ թէ լսէր Յովսէփ, զի թարգման կայր ՚ի միջի. և անցեալ մեկուսի ՚ի նոցանէ՝ ելաց Յովսէփ:

56. ՅՈՒՂԻ ԱՆՊԱՆԻՆ ԵՂԲՈՐՔՆ ՅՈՎԱՆՓԱՅ:

Հրաման ետ Յովսէփ ընուլ զամանս նոցա ցորենով՝ և զնել զարծաթն իւրաքանչիւր ՚ի քրձի իւրում, և տալ նոցա զպաշար վասն ճանապարհի: Ապա արձակեաց զնոսա բաց ՚ի Շամաօնէ՝ զոր պահեաց առ իւր: Եւ այնպէս յուղի անկան եղբարքն Յովսէփայ, և յորժամ եկին առ հայրն իւրեանց, պատմեցին նմա զամենայն ինչ, որ անց ընդ նոսա: Եւ եղև ՚ի բանալն նոցա զբուրձս, իրբև տեսին զծրար արծաթոյ իւրաքանչիւր ոք ՚ի քրձի իւրում, զարմացան յոյժ ինքեանք և հայրն նոցա:

57. ՅԱՊՈՎ ԲՁ ՅՈՒՆՐԻ ԱՌԱՔԵՆ ԶԲԵՆԻԱՄԻՆ:

Իբրև լուաւ Յակովբ յորդուոց իւրոց, թէ՛ խոստացեալ են նոքա տանել զԲենիամին յԵգիպտոս՝ առ տէրն երկրին, ասէ խոր թախծութեամբ. զիս անորդ՛ արարիք: Յովսէփ

չէ՛ ՚ի միջի, այլ մեռեալ է. զՇմաւօն թողիք յԵզիպտոս, և զԲենիամին կամիք տանիլ ընդ ձեզ :

Յիմ վերայ եկին այս ամենայն չարիք, ո՛չ առաքեցից զԲենիամին ընդ ձեզ, զի եղբայր սորա մեռաւ. և սա միայն մնացեալ է. եթէ դէպ լինիցի և դմա հիւանդանալ ՚ի ճանապարհին՝ զոր երթայցէք, իջուցանէք զծերուծիւն իմ տրտմուածեամբ ՚ի դժոխս :

58. ՈՐԴԻՔՆ ՅԱԿՈՎՐԱՅ ԱՌԱՆՅ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՈՉ ԿԱՄԻՆ ԳՆԱԼ

• ՅԵԳԻՊՏՈՍ :

Եւ եղև իբրև սպառեցին ուտել զցորեանն, զոր բերին յերկրէն Եզիպտացոց. ասէ ցնոսա հայրն իւրեանց, դարձեալ երթայք, գնեցէ՛ք սակաւ մի կերակուր : Պատասխանի ետուն որդիքն և ասեն, ո՛չ կարեմք երթալ յԵզիպտոս, զի այրն խօսեցաւ ընդ մեզ և ասէ, ո՛չ տեսանիցէք զերեսս իմ՝ եթէ ո՛չ եղբայրն կրտսեր ընդ ձեզ իցէ : Զի՞նչ չարիք հասուցիք ՚ի վերայ իմ, ասէ հայրն. զի՞ պատմեցիք առնն՝ թէ գոյ ձեր եղբայր : Եւ նորա ասեն. հարցանելով եհարց զմէնջ այրն և զազգէ մերմէ, և թէ տակաւին կենդանի՞ իցէ հայրն ձեր, թէ իցէ՞ ձեր եղբայր. պատմեցաք նմա ընդ հարցանելն նորա. միթէ գիտէա՞ք՝ թէ ասելոց էր ցմեզ, ածէ՛ք զեղբայրն ձեր :

59. ՅԱԿՈՎՐ ԵՅՕԺԱՐԻ ԱՌԱՔԵԼ ԶԲԵՆԻԱՄԻՆ :

Յայնժամ Յուդաս՝ մին յորդոց Իսրայէլի, այսինքն Յակովբայ, ասէ ցհայրն իւր. արձակեա՛ ընդ իս զպատանեակդ : Ես առնում զդա, եթէ ո՛չ ածից և կացուցից զդա առաջի քո, յանցաւոր եղէց զամենայն աւուրս կենաց իմոց : Զիջեալ ընդ բանսն Յուդայի, ասէ. թէ այդպէս իցէ, արարէ՛ք զայդ : Առէ՛ք ՚ի պողոյ երկրիս յամանս ձեր՝ և տարայք առն պատարագս : Արծաթ կրկին առէ՛ք ՚ի ձեռս

ձեր. և զարծաթն՝ որ դարձաւ յամանս ձեր, տարայք ընդ ձեզ. զի արձակեսցէ ընդ ձեզ զեղբայրն ձեր զմիւս և ըզբենիամին :

60. ՅՈՒՍԷՓ ՀՐԵՄԵՏԷ ՊԵՏՐՍՍԵՆ ԶՃԱԸ ՎԱՍՆ ԵՂԲԱՐՅ

ԻԻՐՈՅ :

Իբրև իջին արքն յԵզիպտոս պատարագօքն իւրեանց, և կացին յանդիման Յովսէփայ. ետես զնոսա Յովսէփի և զբենիամին եղբայր իւր, և նոյնժամայն պատուէր ետ հազարապետի տան իւրոյ՝ տանիլ զարսն ՚ի տուն, զենուլ ըզզենլիս և պատրաստել զձաշ : Տեսեալ արանցն՝ եթէ տարան զինքեանս ՚ի տուն Յովսէփայ, երկեան յոյժ, զի մի՛ գուցէ վասն արծաթոյն, որ դարձաւ յաման իւրեանց զառաջինն, առ ՚ի խուզել զինքեանս տարան. մատուցեալ առայրն՝ վերակացու տանն, ասեն. աղաչեմք զքեզ տէր, ի՞նչք զառաջինն գնել կերակուրս, և իբրև հասաք յիջևանս, բացաք զամանս մեր, արծաթն իւրաքանչիւր յամանի մերում էր. արդ՝ զարծաթն զայն պարէն կշռով դարձուցաք, և ո՛չ գիտեմք՝ ո՛վ եղ զայն յամանս մեր : Ասէ ցնոսա վերակացուն. խաղաղութիւն ընդ ձեզ՝ մի՛ երկնչիք. և եհան առ նոսա զՇմաւօն :

61. ՅՈՒՍԷՓ ԸՆԴ ԵՂԲԱՐՅ ԻԻՐ :

Եւ ապա եմուտ Յովսէփի ՚ի տուն, և մատուցին նմա զընծայսն՝ զոր ունէին ՚ի ձեռս իւրեանց, և երկիրպագին նմա : Եհարց զնոսա Յովսէփի, զհարդ կայք. ո՞ղջ իցէ արդեօք հայրն ձեր ծերունի, զորմէ ասացիք՝ թէ տակաւին կենդանի է : Պատասխանի ետուն նոքա, այո՛՝ ողջ է հայրն մեր : Ամբարձեալ զաչս իւր Յովսէփայ, ետես զբենիամին զեղբայր իւր զհամամայր. այդ է ասէ եղբայրն ձեր կրտսեր՝

զորմէ ասացիք՝ թէ է առ հայր մեր ՚ի տան անդր. և ասէ, Աստուած ողորմեսցի քեզ, որդեակ: Խռովեցաւ Յովսէփ, գալարէին աղիք նորա ՚ի վերայ եղօօր իւրոյ, և մտեալ ՚ի սենեակ՝ ելաց անդր:

62. ՅՈՎՍԷՓ ՀՐԱՄԱՅԷ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ԻԻՐՈՒԹ ԼՆՈՒԼ ԶԱՄԱՆՍ ՆՈՅԱ ԿԵՐԱԿՐՈՎ ԵՒ ԶՍԿԷՆ ԱՐԾԱԹԻ ԾԱԾՈՒԿ ԴԵՆԼ ՅԱՄԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆԻ:

Լուացեալ Յովսէփայ զերեսս իւր և պնդեալ զանձն ել, և ասէ՝ արկէ՛ք զհաց: Արկին նմա միայնոյ՝ և նոցա իւրաքանչիւր ումէք առանձինն: Նստաւ երէցն ըստ երիցութեան իւրում և կրտսերն ըստ կրտսերութեան իւրում. յայնժամ ետ նոցա Յովսէփի իւրաքանչիւրոց զմասունս, և մեծացաւ մասն Բենիամինի քան զմասունս ամենեցուն հնգապատիկ: Զկնի ճաշելոյ հրաման ետ Յովսէփ հազարապատին իւրում զամանս արանցն ընուլ ցորենով և դնել զարծաթն իւրաքանչիւր ՚ի բերան ամանոյ իւրոյ, և զսկիհն իւր արծաթեայ յամանի կրտսերոյն և զգինս ցորենոյ նորա: Եւ արար ըստ բանին Յովսէփայ՝ որպէս և հրամայեաց նմա:

63. ՀԱԶԱՐԱՊԵՏՆ ՅՈՎՍԷՓԱՅ ՊԵՐԻ ԶՀԵՏ ՆՈՅԱ:

Ընդ այդանալ առաւօտու՝ արձակեցան արքն. և իբրև չև ևս էին մեկնեալ ՚ի քաղաքէ ՚ի բաց, կոչեալ Յովսէփ զհազարապետն իւր՝ ասէ. արի՛ պնդեաց զհետ արանցն. հաս և ասս ցնոսա, զի՞ է զի հատուցիք չար փոխանակ բարեաց. ընդէ՛ր գողացայք զսկիհն արծաթոյ: Իբրև եգիտ զնոսա, ասաց ըստ բանիցս այսոցիկ:

64. ՍԿԷՆ ԴՏԱՆԻ ՅԱՄԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆԻ:

Պնդեցաւ հազարապետն զհետ արանցն. և իբրև եգիտ զնոսա, ասաց նոցա որպէս և հրամայեաց նմա Յովսէփի:

Պատասխանի ետուն նորա ցհազարապետն, ընդէ՞ր խօսիցի տէր զայդպիսի բանս. քաւ լիցի ծառայից քոց առնել զայդպիսի գործ, զի եթէ զարծաթն, զոր գտաք յամանս մեր՝ դարձուցաք առ ձեզ, զիա՞րդ գողանայաք ՚ի տանէ տեառըն քոյ զսկիհն: Եւ արդ՝ առ որում գտցի ՚ի ծառայից քոց այն՝ մեռցի: Յայնժամ փութացեալ իջուցին զբեռն իւրաքանչիւր ՚ի գետին, և բացին իւրաքանչիւր ոք զիւր աման. յուղեաց հազարապետն սկսեալ յերիցուէն մինչև ՚ի կրտսերն, և եզիտ զսկիհն յամանի Բենիամինի:

65. ԵՂԵԱՐԲ ՅՈՂՍԵՓՈՅ ԴԱՌՆԱՆ ԱՆԴՐԻՆ Ի ՔԱՂԱՔ:

Պատառեցին նորա յայնժամ զհանդերձս իւրեանց, և եղին իւրաքանչիւր զբեռն ՚ի վերայ իշոյ իւրոյ և դարձան ՚ի քաղաքն: Եմուտ Յուդայ եղբարբք իւրովք հանդերձ առ Յովսէփ և անկաւ առաջի նորա ՚ի վերայ երկրի: Ասէ ցնոսա Յովսէփ, զի՞նչ են իրքդ, զոր արարիք: Ասէ Յուդա, զի՞նչ տացուք պատասխանի Տեառն, կամ զո՞ր իրաւունս ցուցանիցեմք. եզիտ Աստուած զյանցանս ծառայից. արդ՝ անասիկ կամք ծառայք տեառն մերոյ. մեք և առ որում սկիհն գտաւ: Պատասխանի ետ նոցա Յովսէփ, քաւ լիցի ինձ առնել զբանդ զայդ. այրն, առ որում սկիհն գտաւ՝ նա եղեցի իմ ծառայ, և դուք դարձարուք ողջութեամբ առ հայրն ձեր:

66. ՅՈՒԴԱ ՅՈԹԱՐԻ ՈՒՆԻԼ ՋԻՆԲՆ Ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ:

Մտեալ Յուդա առ Յովսէփ և ասէ, աղաչեմ տէր՝ տուր հրաման ինձ խօսիլ բան մի առաջի քո. հայր մեր սիրէր զպատանեակդ առաւել քան զամենեսին. իբրև դարձաք զառաջինն առ հայր մեր, պատմեցաք նմա զբանս տեառըն մերոյ. ասէ՝ երթայք դարձեալ գնեցէ՛ք մեզ կերակուր, ասացաք մեք, եթէ իջանիցեմք առանց կրտսեր եղբօր

մերոյ՝ ոչ կարեւր տեսանել զերեսս աննն. յայնժամ ասէ
Հայր մեր ցմեզ. դուք ինքնին գիտէք զի զերկուս ծնաւ ինձ
կին իմ, մին ել յինէն, և ասացիք լեալ գազանակեր. եթէ
զսա ևս անուցուք յերեսաց իմոց, և Հանդիպեսցի սմա
Հիւանդութիւն ՚ի ճանապարհի, իջուցանիցէք զծերութիւն
իմ տրտմութեամբ ՚ի դժօխս. զի իմ առեալ է յերաշխի
զմանուկդ ՚ի հօրէ իւրմէ. եթէ երթայցեմք առ Հայր մեր
առանց պատանեկի, վախճանեսցի: Եւ արդ՝ աղաչեմ ըզ-
քեզ Տէ՛ր. կալ զիս փոխանակ մանկանդ ստրուկ Տեառնդ:

67. ՅՈՎՍԷՓ ՏԱՅ ԸՆԵԱՉԵԼ ԶԻՆՔՆ ԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՅ:

Ո՛չ կարաց Յովսէփ ժոյժ ունիլ առաջի ամենեցուն
չուրջ զնովաւ եղևուցն. որոյ վասն հրամայեաց մեկնիլ նո-
ցա ՚ի բաց: Չայն երարձ նա լալով և ասէ ցեղբարսն իւր,
ե՛ս եմ Յովսէփ. արդարև տակաւին կենդանի՞է Հայր իմ.
ոչ կարացին տալ նմա պատասխանի եղբարք նորա, քանզի
խոովեցան յերեսաց նորա: Ասէ գարձեալ Յովսէփ, մօ՛տ
եկայք առ իս. և չոգան մօտ. ե՛ս եմ Յովսէփ եղբայրն ձեր,
զոր վաճառեցիք դուք յԵգիպտոս: Բայց մի՛ ինչ տրտմիք.
և մի՛ խիստ թուեսցի ձեզ զի վաճառեցիք զիս այսր. քան-
զի ՚ի փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի ձեր:

68. ՅՈՎՍԷՓ ԽՆԴԻԷ ՅԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՅ Ի ԶՈՒՅԱՆԵԼ ԶԷՍԵՐ ԻՒՐ
ՅԵԳԻՊՏՈՍ:

Եւ անկեալ Յովսէփայ զպարանոցաւ Բենիամինի եղբօր
իւրոյ ելաց, նոյնպէս և Բենիամին ելաց ՚ի վերայ պարանո-
ցի նորա: Ապա համբուրեաց զամենայն եղբարս իւր. և ե-
լաց զնոսա. յետ այնորիկ խօսեցաւ նա ընդ նոսա, փութալ
ելանել առ Հայր իւր և ասել. որդի քո Յովսէփ այսպէս
ասէ, արար զիս Աստուած Տէր ամենայն երկրիս եգիպտա-

ցւոց. արդ ե՛կ՝ է՛ջ առիս և ընակեսցիս յերկրիս Գեսեմ՝
եղիցիս մօտ առիս. դու և որդիք քո և որ ինչ քո իցէ :

69. ՓԼԵՐԱՌՆ ԳԱՏՈՒԻՐԷ ԱՌԱՔԵԼ ԶԸՆԾԸՅՍ ԵՒ ԶԱՅՏԼՍ ԱՌ
ՅԱԿՈՎԲ :

Հնչեցաւ համբաւն ՚ի տան փարաւոնի, թէ եկին եղ-
բարք Յովսէփայ. ուրախ եղև փարաւոն և ասէ ցՅովսէփի,
ասա՛ ցեղբարս քո, զի լցուսցեն զբեռինս իւրեանց, և եր-
թայցեն յերկիրն ֆանանացւոց, և առեալ զհայր իւրեանց
և զստացուածս՝ եկեսցեն առիս, ես տաց նոցա յամենայն
բարութեանցս Եգիպտացւոց. տո՛ւր զայս հրաման, զի առ-
նուցուն յերկրէս Եգիպտացւոց սայլս մանկանց և կանանց
իւրեանց, և առեալ զհայր իւրեանց ածցեն այսր. մի՛ ագա-
հեսցին աչք նոցա ՚ի կահս իւրեանց, զի բարութիւն ամե-
նայն երկրիս Եգիպտացւոց նոցա լիցի: Արար Յովսէփ ըստ
բանիցն փարաւոնի, որպէս հրամայեաց նմա :

70. ԱՐԴԻՔ ՅԱԿՈՎԲԱՅ ԱԶԴ ԱՌՆԵՆ ՀՕՐ ԻԲԲԵԱՆՅ ՁՏՈՎՍԷ-
ՓԱՅ ԹԷ ԿԵՆԴԱՆԻ Ե ՆԸ :

Եղբարքն Յովսէփայ ելին յԵգիպտոսէ և չողան յեր-
կիրն ֆանանացւոց առ հայրն իւրեանց Յակովբ. պատմե-
ցին նմա, թէ որդին քո Յովսէփ կենդանի է, և է իշխան
ամենայն երկրին Եգիպտացւոց : Զարմացաւ Յակովբ ընդ
միտս իւր, քանզի ո՛չ հաւատայր նոցա. իբրև խօսեցան ընդ
նմա զամենայն ինչ՝ զոր ասաց Յովսէփ, և տեսեալ զսայլ-
սըն զառաքեալսն ՚ի Յովսէփայ՝ ասէ. մե՛ծ է ինձ՝ եթէ
արդարև կենդանի իցէ տակաւին որդի իմ Յովսէփ. եր-
թայց տեսից զնա՝ մինչև և մեռեալ իցեմ :

71. ՅԱԿՈՎԲ ՉՈՒՆ ՅԵԳԻՊՏՈՍ ԸՆՏԱՆԵՕՔՆ ՀԱՆԴԵՐԸ :

Չուեաց Իսրայէլ ինքն և որդիք իւր՝ և ամենայն որ ինչ
իւր էր. մինչդեռ չև ևս էր հասեալ յերկիրն Գեսեմ՝ ա-

ոարեաց զՅուդա առ Յովսէփ, գալ նմա ընդ առաջ: Եւ Յովսէփ ընդ առաջ Իսրայէլի հօր իւրոյ կառօք, և իբրև յանդիման եղև նմա՝ անկաւ զպարանոցաւ նորա և ելաց լալիւն մեծ: Եւ ասէ Իսրայէլ յՅովսէփ. մեռայց այսուհետև, որովհետև տեսի զերեսս քո՝ զի տակաւին կենդանի ես:

72. ՅՈՎՍԷՓ ԱԶԻ ԱՌՆԷ ԱՐՔԱՅԻ ԶԳԱԼՍԵՆԷ ՀՕՐ ԻՌՈՅ:

Այդ արար Յովսէփ Փարաւօնի, և ասէ. հայր իմ և եղբարք իմ և ամենայն գերդաստան նորա եկին յերկրէն Գանանացոց. և ահա՛ են ՚ի Գեսեմ: Եւ առեալ ընդ իւր յեղբարց իւրոց հինգ այր, կացոյց զնոսա առաջի Փարաւօնի: Ասէ Փարաւօն ցեղբարսն Յովսէփայ. զի՞նչ գործ է ձեր. նորա ասեն հովիւք խաշանց եմք, մեք և հարքն մեր: Յայնժամ ասէ Փարաւօն յՅովսէփ. հայր քո և եղբարք քո եկին առ քեզ. ահա երկիրս Եգիպտացոց առաջի քո է. ՚ի բարւոք տեղւոջ երկրիս՝ բնակեցո՛ղ զհայր քո և զեղբարս քո: Ապա թէ գիտես՝ եթէ իցեն ՚ի նոսա արք զօրաւորք, կացո՛ղ զնոսա իշխանս ՚ի վերայ խաշանց իմոց:

73. ՅՈՎՍԷՓ ԱՅԷ ԶՅԱԳՈՎԹ ԶՀԱՅՐ ԻՌ ԱՌ ՓԱՐԱՅՕՆ:

Ը՛ծ Յովսէփ զՅակովբ զհայր իւր առ Փարաւօն և կացոյց առաջի նորա, և օրհնեաց զնոսա Փարաւօն: Ասէ Փարաւօն յՅակովբ. քանի՞ են ամբ աւուրց կենաց քոց. ասէ ցնա Յակովբ. աւուրք կենաց իմոց՝ յորս պանդխտեցայ, հարիւր և երեսուն ամ է. սակաւք և դժուարինք եղեն աւուրք ամաց կենաց իմոց, և ոչ հասին յաւուրս կենաց հարց իմոց: Օրհնեաց Յակովբ զՓարաւօն և ել ՚ի նմանէ. Եւ բնակեցոյց Յովսէփ զհայրն իւր և զեղբարս իւր, և ետ նոցա բնակութիւն յերկրին Եգիպտացոց ՚ի բարւոք երկ-

րի. և տայր ոռծիկս հօրն և եղբարց իւրոց, և ամենայն տան
հօր իւրոյ ցորեան ըստ բերան:

74. ՅԱԳՈՎԻԻ ԽՆԴԻԻ ԹԱՂԵԼ ԱԳԻ ԻԻԻ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ ՀԱՐՑ
ԻԻՐՈՑ:

Եղաց Յակովբ յերկրին Եզիպտացւոց լամն եօթն և
տասն: Եւ եղեն աւուրք կենաց Յակովբայ հարիւր և քա-
ռասուն և եօթն ամ. իբրև մերձեցան աւուրք նորա մեռա-
նելոյ, կոչեաց զորդի իւր զՅովսէփ և ասէ, եթէ գտի շնոր-
հքս առաջի քո, զի՛ր զձեռն քո ընդ երանօք իմովք, և ա-
րասցես ՚ի վերայ իմ ողորմութիւն և ճշմարտութիւն,
չթաղել զիս յԵզիպտոս: Այլ ննջեցից ընդ հարսն իմ,
և բարձցեն զիս յԵզիպտոսէ, թաղել զիս ՚ի գերեզմանի
նոցա: Պատասխանի եա նմա Յովսէփ. ես արարից ըստ
բանի քում: Ասէ Յակովբ՝ երգուեանց ինձ. և երգուաւ նմա:

75. ՅՈՎՍԷՓ ԱՄԻ ԱՄԱՆԿՈՒՆՍ ԻԻԻ ԱՌ ՅԱԳՈՎԻԻ, ՁԻ ՕՐՀՆԵՍ-
ՑԻ ԱՆՈՍԱ:

Իբրև ետես Խորայէլ զորդիսն Յովսէփայ՝ ասէ, զիք են
սորքա. ասէ Յովսէփ ցհայրն իւր, որդիք իմ են, զոր եա
ինձ Աստուած աստ. ասէ Յակովբ, մատո՛ առ իս զգոսա՝ զի
օրհնեցից. և առեալ Յովսէփայ զերկուս որդիսն իւր, զԵփ-
րեմ ՚ի ձախմէ Խորայէլի, և զՄանասէ յաջմէ. մատոյց ըզ-
նոսա առ նա: Եւ ձգեալ Խորայէլի զաջ ձեռն իւր՝ արկ
զգլխովն Եփրեմի, և նա էր կրտսեր. և զձախն զգլխովն
Մանասէի, և փոփոխեաց զձեռն, զի Մանասէ էր անդրա-
նիկ. և օրհնեաց զնոսա: Տեսեալ Յովսէփայ՝ թէ արկ
հայրն զաջ իւր զգլխովն Եփրեմի, ծանր թուեցաւ նմա, և
օգնեաց ձեռին հօրն իւրոյ, հանել զնա ՚ի գլխոյն Եփրեմի՝
ի գլուխն Մանասէի. ոչ կամեցաւ հայրն նորա, այլ ասէ.
զիտեմ՝ որդեակ. գիտեմ, դա՛ եղիցի ՚ի ժողովուրդ և դա՛

բարձրասցի. այլ եղբայրս դորա կրտսեր՝ եղիցի մեծ քան
զդա, և զաւակ սորա եղիցի ՚ի բազմութեան ազգաց: Եւ
եդ զԵփրեմ յառաջ՝ քան զՄանասէ:

76. ՅԱԿՈՎԲ ԹԱՂԻ ՅԵՐԿՐԻՆ ՔԱՆԱՆԱՅԻՈՑ:

Եւ դադարեաց Յակովբ ՚ի պատուիրելոյ որդւոցն իւ-
րոց. և առեալ զոտսն իւր անդրէն ՚ի մահիճսն՝ զըաւեցաւ
՚ի կենաց: Անկաւ Յովսէփի ՚ի վերայ երեսաց նորա և ելաց
զնա համբուրելով: Հրաման եդ ծառայից իւրոց զհազար-
դաց, պատել զզին. և ապա ել Յովսէփի թաղել զհայր իւր՝
եղբարքն և համօրէն տամբ իւրով՝ հանդերձ կառօք և
հեծելովք. բարձեալ զզին տարան յերկիրն քաննացւոց՝
և թաղեցին զնա անդ յայրին կրկնում, զոր ստացաւ Աբ-
րահամ ՚ի ստացուածս շիրմի, և դարձան յեգիպտոս:

77. ՅՈՎՍԷՓ ՄԻԻԹԱՐԻ ԶԵՂԲԱՐՍ ԻԻՐ:

Իբրև տեսին եղբարքն Յովսէփայ՝ թէ մեռաւ հայրն
իւրեանց, ասնն՝ զուցէ ոխս ունիցի ընդ մեզ Յովսէփի, և
հատուցանիցէ մեզ հատուցումն ընդ ամենայն չարեացն՝
զոր անցուցաք ընդ նմա: Եկին առ Յովսէփի և ասնն, հայր
քո երգմնեցոյց զմեզ մինչև վախճանեալ էր նորա. այս-
պէս ասասջիք՝ ասէ, ցՅովսէփի, թողցե՛ս դոցա զյանցանս
և զմեզս իւրեանց: Եւ արդ՝ ներեա՛ յանցանաց մերոց: Ասէ
Յովսէփի ցնոսա, մի՛ երկնչիք. քանզի և ես Աստուծոյ եմ,
դուք խորհեցայք զինէն ՚ի չարութիւն, և Աստուած խոր-
հեցաւ վասն իմ ՚ի բարութիւն: Ասէ ցնոսա Յովսէփի, մի՛
երկնչիք՝ ես կերակրեցից զձեզ և զտունս ձեր. և մխիթա-
րեցան նորա:

78. ՅՈՎՍԷՓ ՄԵՌԱՆԻ:

Եկաց Յովսէփի ամս հարիւր և տասն. խօսեցաւ ընդ եղ-
բարս իւր և ասէ. ես աւասիկ մեռանիմ. երգմնեցուցանեմ

զձեզ յայցելութեանն՝ յորում այց արասցէ ձեզ Աստուած, Հանջիք և զիմ ոսկերս: Վախճանեցաւ նա ամաց հարիւր և տասանց. և եղին զնա ՚ի տապանի յԵզրիպտոս:

79. ՋԳՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՅՈՎՍԷՓԱՅ ԶԱՐԶԱՐԻՆ ՈՐԴՈՒՄԻ ԻՍՐԱԵԼԻ:

Որդիքն Իսրայէլի բազմանային և զօրանային յոյժ. և թիւ բազմութեան նոցա ահաբեկ առնէր զԵզրիպտացիս: Եկաց այլ թագաւոր, որ ոչ գիտէր զՅովսէփի և ոչ յիշէր զարդեանց նորա: Կացոյց սա ՚ի վերայ նոցա գործավարս, զի չարչարեսցեն զնոսա ՚ի գործ խիստ. և հրաման ետ ամենայն ժողովրդեան իւրում, զի զամենայն արու, որ ծնանիցի Եբրայեցւոց՝ ՚ի գետ ընկեսցեն. և զամենայն էգ ապրեցուցեն:

80. ՄՈՎՍԷՍ ԾՆԱՆԻ ՅԱՄԻ 2453 ՋԳՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԻ:

Այր ոմն յազգէն Ղևեայ, որ էառ իւր կինն ՚ի դստերաց անտի Ղևեայ, յղացաւ և ծնաւ արու. տեսին զնա կայտառ, և թագուցին զնա զամիսս երիս: Իբրև ոչ ևս կարէին թագուցանել, էառ մայրն զտապանակ մի պրտուեայ՝ և ծեփեաց զայն կպրածիւթով, և եղեալ յայն զմանուկն, ընկէց զայն առ ակն գետոյն: Դիտէր քոյրն նորա ՚ի հեռաստանէ, տեսանել՝ թէ զե՞ջանցք անցանիցեն ընդ նմա:

81. ՄԱՆՈՒԿՆ ՀԱՆԻ Ի ԶՐՈՅ:

Եւ զուստրն փարաւօնի լուանալ ՚ի գետն, և նաժիշտք նորա շրջէին առ գետովն: Տեսեալ նորա զտապանակն ՚ի խաղի անդ, առաքեաց զմի ՚ի նաժիշտաց անտի առնուլ զնա. զի լայր ՚ի տապանակի անդ, խանդաղատեցաւ զնովաւ դուստրն փարաւօնի և ասէ. ՚ի մանկանց Եբրայեցւոց է դա: Ասէ քոյր մանկանն ցղուստր փարաւօնի, կամի՞ս զի կոչեցից քեզ կին մի դայեակ Եբրայեցւոց անտի, զի սնուցա-

նիցէ քեզ զմանուկդ. և նա ասէ՝ ե՛րթ. դնաց աղջիկն և կոչեաց զմայր մանկանն: Ասէ դուստրն Փարաւօնի, առ զմանուկդ և մնո՛ ինձ զգա. և ես տաց քեզ զվարձս քո: Էառ կինն զմանուկն՝ և մնոյց զնա: Իբրև մեծացաւ մանուկն, աճ զնա առ դուստրն Փարաւօնի, և նա որդեգրեաց զնա՝ և անուանեաց զնա Մովսէս. այսինքն՝ Հանեալ ՚ի ջրոյ:

82. ԱՍՏՈՒԱԾ ԵՐԵՒԻ ՄՈՎՍԻՍԻ Ի ԼԵՐԻՆՆ ՔՈՐԵՐ:

Յարածելն Մովսիսի զխաչինս Յովթորայ աներոյ իւրոյ, մերձեցաւ յանապատ և եկն ՚ի լեառն Աստուծոյ քորեր: Երևեցաւ նմա Հրեշտակ Տեառն բոցով Հրոյ ՚ի միջի մորենւոյն, և նա տեսանէր՝ զի մորենին վառէր, բայց ոչ այրէր: Ասէ Մովսէս՝ անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ. իբրև մերձեցաւ առ այն, կոչեաց զնա Տէր ՚ի միջոյ մորենւոյն. Մովսէս՝ Մովսէս, մի՛ մերձենար այսր, լո՛յժ զկօշիկս յօտից քոց, զի տեղիդ՝ յորում կաս դու, երկիր սուրբ է: Ասէ Տէր ցՄովսէս, տեսանելով տեսի զչարչարանս ժողովորդեան իմոյ՝ որ յԵգիպտոս. իջի փրկել զնոսա ՚ի ձեռաց Եգիպտացւոց՝ և Հանել զնոսա յերկրէն յայնմանէ:

83. ՄՈՎՍԷՍ ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒ ՀԱՆԵԼ ԶԻՍԲԱՏԵԼԱՏԻՍ ՅԵԳԻՊՒՊՈՒՍՆԻ ՏՈՍԷ:

Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ, ահաւասիկ ազազակ որդւոցն Իսրայէլի Հասեալ է առիս. արդ՝ զնա՛ առ Փարաւօն արքայ Եգիպտացւոց՝ Հանել զժողովուրդ իմ՝ յերկրէն Եգիպտացւոց. զկնի խոստովանելոյ զինքն անարժան և անկար անելոյ զայն գործ մեծ. յանձն էառ և եմուտ առ Փարաւօն և ասէ. այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի, արձակեա՛ զժողովուրդ իմ. որում ետ պատասխանի Փարաւօն. ո՛վ է նա՝ զի լուայց ձայնի նորա և ար-

ձակեցից զորդիսն Իսրայէլի: Ո՛չ գիտեմ զՏէրն՝ և զԻսրայէլ ո՛չ արձակեմ: Յանկացեալ Մովսիսի հանդարտել զխստութիւն Փարաօնի՝ արար զբազում և զմեծամեծ հարուածս և նշանս, որք կոչին հարուածք Եգիպտոսի: Տեսեալ Փարաօնի զայսպիսի հարուածս, դեռ ևս ո՛չ մեղկացաւ արձակել զնոսա. վասն որոյ եհար Տէր զանդրանիկս նորա, և զամենայն անդրանիկս յերկրին Եգիպտացոց: Եւ ապա զահի հարեալ Փարաօնի՝ կոչեաց զՄովսէս և զԱհարօն, և ասէ. ելէ՛ք ՚ի ժողովոցենէ իմմէ, դուք և որդիքն Իսրայէլի:

84. ԻՄՐԱՅԷԼԱՅԻՔ ԶՈՒԵՆ ՏԵԳԻՊՏՈՍԷ:

Եւ էին արք հետեակք վեցհարիւր հազար. թող զմանկտիս և զբազում խառնիճաղանձս, որք չուեցին Եգիպտոսէ ՚ի Սոկրովթ: Առաջնորդէր նոցա Աստուած ցերեկ սեամբ ամպոյ, ցուցանել նոցա զճանապարհն. և ցայդ սեամբ հրոյ՝ լուսատու լինել նոցա ՚ի դնալն: Զկնի սուղինչ ժամանակաց մերձեցան առ ծովեզրն. և հարին անդ զսորան իւրեանց:

85. ՄՈՎՍԷՍ ԲՆԺԱՆԷ ԶՄՈՎՆ:

Իբրև ազդ եղև Փարաօնի, թէ փախեաւ ժողովուրդն, սորջացաւ՝ զի արձակեաց զնոսա ՚ի ծառայութենէ անտի. և ապա հանդերձեալ զկառս իւր՝ պնդեցաւ բազմութեամբ մեծաւ զհետ նոցա, եկն և եգիտ զնոսա բանակեալս առ ծովեզրըն. ինքն ևս բանակեցաւ անդ ՚ի թիկանց նոցա: Տեսեալ որդւոցն Իսրայէլի զինքեանս երկուստեք յարհաւիրս, երկեան յոյժ:

Յայնժամ ասէ Տէր զՄովսէս, առ դու զբաւազան քո՛, և ձգեա՛ զձեռն ՚ի վերայ ծովուն և բաժանեա՛ զընդուն, զի որդիքն Իսրայէլի անցցեն ընդ ծովն իբրև ընդ ցաւաք:

86. ԻՍՐԱՅԷԼԱՅԻՔ ԱՆՅԱՆԵՆ Ի ՄԷՋ ԾՈՎՈՒՆ ԸՆԴ ՑԱՄԱՔ:

Արար Մովսէս որպէս և պատուիրեաց նմա Տէր. ձգեալ զձեռն իւր ՚ի վերայ ծովուն՝ դարձոյց զծովն ցամաք: Մտին որդիքն Իսրայէլի ընդ մէջ ծովուն ընդ ցամաք. և եղև ջուրն պարիսպ ընդ աջմէ նոցա և ընդ ահեկէ: Պընդեցաւ արքայն զՏեա նոցա զօրութեամբ իւրով, չզանգիտեալ անցանել ընդ մէջ հերձեալ ծովուն:

87. ԵԳԻՊՏԱՅԻՔ ՀԵՂՁԵՈՒՆ Ի ԾՈՎ:

Յորժամ պնդեցան Եգիպտացիք զՏեա Իսրայէլացոց ընդ մէջ ծովուն, կապեաց Տէր զանիւս կառաց նոցա, և վարէր զնոսա բռնութեամբ: Չահի հարեալ Եգիպտացոց՝ փախեան յերեսաց Իսրայէլի: Յայնժամ ասէ Տէր ցՄովսէս. ձգեա՛ զձեռն քո ՚ի վերայ ծովուդ, զի կարկատեսցի անդրէն ջուրդ: Եւ իբրև ձգեաց Մովսէս զձեռն իւր ՚ի վերայ ծովուն, դարձաւ նոյնժամայն ջուրն ՚ի տեղի իւր. և հեղձան Եգիպտացիք ՚ի ծով անդր կառօք և հեծելովք իւրեանց հանդերձ, և ծածկեցան ամենայն զօրութիւնք Փարաւօնի, և ապրեցաւ Իսրայէլ ՚ի ձեռաց Եգիպտացոց:

88. ԱՍՏՈՒԼԾ ԿԵՐԱԿԻԷ ԶԹՈՂՈՎՈՒՐԻ ԻՐ ՄԱՆԱՆԱՅԻ ՅԱՆԱՊԱՏԻ ԱՆԴ:

Իբրև եհաս ձայն տրանջանաց Իսրայէլի առ Տէր, ասէ ցՄովսէս. ահա՛ ես տեղացից ձեզ հաց յերկնից: Եւ եղև ընդ երեկոյսն, ել լորամարդին և ծածկեաց զբանակն. նոյնպէս և ընդ առաւօտն՝ յիջանելն ցօղոյն շուրջ զբանակաւն, ահա ՚ի վերայ երեսաց անապատին՝ մանր իբրև ըլգինձ, սպիտակ իբրև զեղեամն ՚ի վերայ երկրին: Ասէ ցնոսա Մովսէս. ժողովեցէ՛ք ՚ի դմանէ, այդ է հացն, զոր ետ ձեզ

Տէր ուտելոյ: Որդիքն Իսրայէլի կերան զմանանայն ըզ-
քառասուն ամ յանապատի անդ:

Ի պակասել ջրոյ յանապատի վերստին տրտնջեաց ժո-
ղովուրդն զՄովսիսէ, որ բողոք բարձեալ առ Տէր՝ ասէ.
զի՞նչ արարից ժողովրդեանս այսմիկ: Հուսկ ապա ըստ
բանի Տեառն՝ առեալ ընդ իւր ՚ի ծերոց ժողովրդեանն, և
գաւազան ՚ի ձեռին՝ մերձ եղև առ վէմն ՚ի քորեք. ուրանօր
հարեալ զվէմն՝ բղխեցոյց անտի զջուր, յորմէ արբ ժողո-
վուրդն և զովացաւ:

89. ԱՍՏՈՒԱԾ ՏԱՅ ՄՈՂՍԻՍԻ ԶՕՐԷՆՍ Ի ԼԵՐԻՆՆ ՍԻՆԱՏ:

Օ կնի երից ամնոց՝ իջին Իսրայէլացիք ՚ի լեառն Սի-
նայ, յետ ելից անտի իւրեանց յԵգիպտոսէ. անդ Աստ-
ուած ետնոցա զօրէնս սքանչելի եղանակաւ: Լսելի եղեն
ձայնք՝ և երևեցան փայլատակունք և ամպ միգախառն ՚ի
վերայ լերին Սինայի. և ձայն փողոյ հնչէր մեծաձայն. և
լեառն ծխէր առհասարակ. մինչ զի զարհուրեցաւ ամենայն
ժողովուրդն, որ կայրն շուրջ զստորոտով լերինն Սինայի:
Եջ Տէր ՚ի լեառն Սինայ, և ՚ի գլուխ լերին խօսեցաւ ընդ
Մովսիսի ընդ մէջ ամպրոպաց և կայծականց:

90. ՊԱՏՈՒԻԱՆԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ:

Եյս են պատգամք, զոր եղ Աստուած Իսրայէլացւոց ՚ի
լերինն Սինայի: Ե՛ս եմ՝ Տէր Աստուած քո, որ հանի ըզ-
քեզ յերկրէն Եգիպտացւոց ՚ի տանէ ծառայութեան. մի՛
ունիցիս քեզ զայլ Աստուած բաց յինէն, զի ես եմ՝ Տէր
Աստուած քո: Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի
վերայ սնոտեաց: Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամե-
նայն նմանութեան: Յիշեա՛ սրբել զօրն շաքաթու. այսին-
քըն զկիւրակէս: Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի բարի

լինիցի քեզ և երկայնակեաց լինիցիս : Մի՛ սպանաներ :
Մի՛ շնար : Մի՛ գողանար : Մի՛ սուտ վկայեր զընկերէ քում-
մէ : Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո և մի՛ ընչից նորա :

91. ՇԻՆՈՒՄՆ ԻՈՐԱՆԻ ԵՒ ՏԱՊԱՆԱԿԻ :

Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ . ասա՛ ցորդիսն Իս-
րայէլի, զի արասցեն խորան տանփեղկեան և զվարագոյր
'ի բեհեզոյ մանելոյ, 'ի կապուտակէ, 'ի ծիրանոյ և 'ի
կարմրոյ : Նոյնպէս արասցեն տապանակ վկայութեան, յո-
րում գիցեն զվկայութիւնս՝ զոր տացէ Աստուած :

92. ՄԱՀ ՄՈՂՍԻՍԻ ԵՒ ՏԵՍՈՒ ՆԱԻԱՆ :

Իբրև ել Մովսէս յԱրարովթ Մովաբայ, եցոյց նմա Տէր
զամենայն երկիրն, զոր երդուեալ էր տալ հարց և զաւակի
նորա : Տեսեալ միայն զերկիրն 'ի հեռուստ, բայց ոչ մը-
տեալ յայն, վախճանեցաւ այրս այս լցեալ հոգևով իմաս-
տութեան և սխրալի առաքինութեամբ, զոր և լացին որ-
գիքն Իսրայէլի զաւուրս երեսուն : Եկաց 'ի տեղի նորա
Յեսու՝ որդի Նաւեայ, յորոյ վերայ եղեալ էր Մովսէս
զձեռն իւր յառաջագոյն :

93. ԻՍՐԱԵԼԱՅԻՔ ԱՆՅԱՆԵՆ ԸՆԴ ԳԵՏՆ ՅՈՐԴԱՆԱՆ :

Խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ և ասէ . պատուիրեա՛ քա-
հանայիցն զի առցեն զտապանակն ուխտի Տեառն, և զը-
նասցեն յառաջագոյն առաջի ժողովրդեան : Չուեաց ժո-
ղովուրդն 'ի խորանաց իւրոց անցանել ընդ Յորդանան, և
քահանայքն բարձին զտապանակ ուխտին Տեառն . և իբրև
անցանէին քահանայք՝ որք կրէին զտապանակն ուխտին,
ոտք նոցա մխէին յեզր ջրոյն Յորդանանու . և կացին ջուր-
քըն որպէս պարիսպ միաձոյլք, անջրպետեալք : Կացին քա-

Հանայքն 'ի վերայ ցամաքի 'ի մէջ Յորդանանու, և ամենայն որդիքն Իսրայէլի անցին ընդ ցամաք:

94. ՅԵՍՈՒ ՀՐԱՄԱՅԷ ԺՈՂՈՎՈՐԴԵԱՆ ԱՌՆՈՒԼ Ի ԳԵՏՈՅ ԱՆՏԻ
ԶԵՐԳՈՏԱՍԱՆ ՔԱՐԻՆՍ:

Իբրև վախճանեաց ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան, պատուէր ետ Յեսու արանց երկոտասանից ըստ Հրամանի Տեառն՝ բառնալ 'ի միջոյ Յորդանանու զերկոտասան քարինս, իւրաքանչիւր ոք քար մի 'ի վերայ ուսոց իւրոց՝ ըստ թուոյ ցեղիցն Իսրայէլի, և տանել զայն 'ի մէջ բանակին իւրեանց, զի լինիցին քարինքն այնոքիկ 'ի նշանակ յաւիտենական: Ասէ Յեսու ցորդիսն Իսրայէլի. յորժամ Հարցանիցեն զձեզ որդիք ձեր՝ թէ զինչ են քարինքս այսոքիկ, պատմեսցիք նոցա, թէ՛ պակասեաց գետն Յորդանան յերեսաց տապանակի ուխտի Տեառն՝ մինչ անցանէր ընդ Յորդանան, և քարինքս այսոքիկ են 'ի յիշատակ 'ի մէջ որդւոցն Իսրայէլի մինչև ցյաւիտեան: Եւ ժողովուրդն 'ի Յորդանանէ և բանակեցաւ 'ի Գաղգաղայ, և զերկոտասան քարինսն առեալս 'ի Յորդանանէ՝ կանգնեաց անդ Յեսու:

95. ՊԱՐԻՍՊՆ ԵՐԻՔՈՎ Ի ԳՈՐԾԱՆԻ:

Քաղաքն Երիքով՝ փակեալ և ամրացեալ էր պարսպօք յերեսաց որդւոցն Իսրայէլի, զոր չէր նոցա Հնար նուաճել: Ասէ Տէր ցՅեսու. ահա ես տամ 'ի ձեռս քո զԵրիքով՝ բայց դու՝ առ զտապանակն և պատեա՛ զնովաւ զամենայն մարդիկս շուրջանակի Յոբելինան՝ 'ի լսել զձայն եղջեր փողոյ, և իբրև Հարկանիցէք զփողն՝ պատեսցիք շուրջ զքաղաքան եօթն անգամ, և քահանայքն Հարցեն զփողն, և ամենայն ժողովուրդն աղաղակեսցէ, յաղաղա-

կեն նորա՝ կործանեսցին ինքնին պարիսպք քաղաքին :
Եւ արարեալ ըստ բանից Տեառն, տիրեցին քաղաքին, և
զամենեսին ետուն 'ի ճարակ սրոյ :

96. ՅԵՍՈՒ ՆԱԻԵԱՆ ԿԱՍԵՑՈՒՅԱՆԷ ԶԱՐԵԳԱԿՆ ԵՒ ԶԼՈՒՍԻՆ

ՅԸՆԹԱՑԻՑ ԻՒՐԵԱՆՑ :

Իբրև լուաւ թագաւորն Երուսաղէմի, թէ էառ Յեսու
զԳայի, կոչեաց յօգնութիւն իւր և զայլ չինգ թագաւոր
ըս զօրօք իւրեանց, և զումարեալ զամենեսին՝ ել ինքն և
ամենայն ժողովուրդքն պաշարեցին զԳաբաւոն : Ասէ Տէր
ց Յեսու՝ մի՛ երկնչիր 'ի նոցանէ, զի 'ի ձեռս քո մատնեցից
զնոսա : Ե՛հաս 'ի վերայ նոցա Յեսու յանկարծակի զցայգն
ամենայն, և զարհուրեցոյց զնոսա Տէր յերեսաց Իսրայէ-
լի, և եբեկ զնոսա բեկումն մեծ, և հալածեալ ընդ ճա-
նապարհ զառ 'ի վայրին՝ կոտորեցին զնոսա որդիքն Իսրա-
յէլի : Արկ Տէր քարինս կարկտի 'ի վերայ նոցա յերկնից,
որով և մեռան բազումք 'ի նոցանէ : Յայնժամ խօսեցաւ
Յեսու ընդ Տեառն, և ասէ . կացցէ արեգակն հանդէպ Գա-
բաւոնի՝ և լուսին հանդէպ ձորոյն Եղոնայ : Եւ կացին ար-
եգակն և լուսին 'ի կայի իւրեանց, մինչև էառ Աստուած
զվրէժ 'ի թշնամեաց նոցա :

97. ՅԵՍՈՒ ՆԱԻԵԱՆ ՏԱՆԷ ԶԻՍՐԱՅԷԼԱՑԻՍ ՅԵՐԿԻՐՆ ԽՈՍԱՆ-
ՑԵԱԼ . ԵՒ ԻՆՔՆ ՄԵՌԱՆԷ 2570, ԶԿՆԷ ՍՏԵՂՄԱՆ ԱՇԽԱՐՀԷ :

Մարտ եղեալ Յեսուայ ընդ բոլոր ազգս Պաղեստինաց-
ւոց, տարաւ և բնակեցոյց զԻսրայէլացիս 'ի խոստացեալ
երկրին . զգաշտն և զքաղաքս նուաճեալս բաժանեաց յեթն
մասունս : Յետ այնորիկ մեռաւ Յեսու և թաղեցաւ 'ի սահ-
մանս ժառանգութեան իւրոյ : Զկնի մահուան նորա արա-
րին չար որդիքն Իսրայէլի առաջի Տեառն, զի թողեալ ըզ-

Տէր Աստուած հարց իւրեանց՝ գնացին զհետ Աստուածոց օտարաց, և երկիր պագին նոցա: Վասն որոյ սրտմտութեամբ բարկացաւ Տէր Իսրայէլի, և մատնեաց զնոսա ՚ի ձեռս աւարառուացն՝ և աւերեցին զնոսա: Տեսեալ որդւոցն Իսրայէլի զբարկութիւն Տեառն՝ դարձան առ Աստուած և պաշտեցին զնա, և խնդրէին ՚ի նմանէ օգնութիւն: Եւ գթացեալ ՚ի նոսա Աստուած՝ ազատեաց զնոսա ՚ի ձեռաց թշնամեաց:

98. ԱՍՏՈՒԱԾ ԱՌԱՔԷ ԶԳԵԴԵՆԻ ԸՆԴԴԵՄ ՄԱԴԻԱՄԱՍՏՈՅ:

Մինչդեռ զօրացեալ էր ձեռն Մադիամու ՚ի վերայ որդւոցն Իսրայէլի՝ սակս չարութեան իւրեանց, աղաղակեցին առ Տէր վասն Մադիամու: Լուաւ Տէր խնդրուածոց նոցա: Երևեցաւ Գեդէոնի հրեշտակ Տեառն, և ասէ. Տէր ընդ քեզ հզօր զօրութեամբ: Պատասխանի եղ Գեդէոն՝ եթէ Տէր ընդ մեզ էր, ընդէ՞ր գտին զմեզ ամենայն չարիքս այսօրիկ: Ասէ հրեշտակ Տեառն. եթ զօրութեամբ քով, և փրկեսցես զԻսրայէլ ՚ի ձեռաց Մադիամու: Նախ անկար խոստովանէր առաջի Աստուծոյ զանձն իւր առնելոյ զայնպիսի գործ մեծ, հուսկ ապա խնդրեաց յԱստուծոյ զերկօսին նշանս, որ կատարեցաւ նմա, և հաւատաց՝ թէ ՚ի ձեռն իւր փրկելոց է Իսրայէլ:

99. ԳԵԴԵՆԻ ԺՈՂՈՋԷ ԶԶՕՐՍ ԻՐ ԵՒ ԻԱՂԱՅ ԸՆԴԴԵՄ ՄԱԴԻԱՄԱՍՏՈՅ:

Կանխեալ Գեդէոնի և ամենայն զօրն ընդ նմա, բանակեցաւ մերձ առ աղբիւրն Արեգայ՝ յանդիման թշնամեաց իւրոց. բայց զօրաց Մադիամու և Ամաղեկայ՝ որ յեցեալ էին ընդ միմեանս, ոչ գոյր թիւ: Յայնժամ ասէ Տէր ցԳեդէոն. բազում է զօրդ՝ որ ընդ քեզ. առ դու քեզ զարս երեք հարիւր՝ որք լափիցեն լեզուաւ զժուր, և զմնացորդ-

589

սըն՝ որք 'ի վերայ ծնկաց իւրեանց արբցեն, դարձո՛ւ զնոսա յետս՝ զի մի՛ գուցէ պարծեսցի Իսրայէլ, և ասացէ՛ թէ ձեռն իմ՝ փրկեաց զիս :

100. ԳԵՂԷՈՆ ՅԱԼԹԻ ՄԱԴԻԱՄԱՅԻՈՅ :

Ի՛սաժանեաց Գեղէոն զերեք հարիւր արս՝ յերիս մասունս, և եգ 'ի ձեռս նոցա զփողս եղջերեայս և ջահս 'ի մէջ սափորոցն, և ասէ ցնոսա . հարից ես զփողն, և դուք ամենեքեան հարջիք շուրջ զամենայն բանակաւն : Եւ եմուտ Գեղէոն 'ի բանակն Մադիամու գիշերայն, և հարին զփողսն երեքին մասունք, և խորտակեցին զսափորն : Իբրև լուաւ բանակն Մադիամու զձայն փողոյն, զջահիւն և զշառաչիւն երկվարաց, երկուցեալ յահէ անտի փախեաւ, և դարձուցեալ զսուր իւր յինքն՝ անձնասպան լինէր : Հուսկ ուրեմն պնդեցաւ Գեղէոն զհետ արքային Մադիամացոց, և կալեալ զնա կենդանւոյն՝ գերեաց զնա, և ապա հրամանս ետ 'ի սուր սուսերի հանել զնա :

101. ՍԱՄՓՍՈՆ ԾՆԱՆԻ :

Յաւելին որդիքն Իսրայէլի առնել չար առաջի Տեառն . որոյ վասն և մատնեաց զնոսա Աստուած 'ի ձեռս Փղշտացոց : Էր այր մի 'ի Սարայ, որոյ անուն էր Մանուէ, և կին նորա ամուլ էր : Երևեցաւ հրեշտակ Տեառն կնոջն, և ասէ . յղասցիս և ծնցիս որդի, բայց զգոյշ լեր չըմպել զգինի և զօղի, և չուտել զամենայն անսուրբ, և 'ի գլուխ մանկանն երկաթ մի՛ ելցէ, զի ուխտաւոր Աստուծոյ եղիցի . և նա փրկեսցէ զԻսրայէլ 'ի ձեռաց Փղշտացոց : Ծընաւ կինն զորդի, և կոչեաց զանուն նորա Սամփսոն : Աճեցաւ մանուկն և օրհնեցաւ 'ի Տեառնէ :

102. ՍԱՄՓՍՈՆ ԱՅՐԷ ԶՈՃ ԱՅԼԱԶԳԵԱՅՆ:

Հասեալ Սամիսոնի յարբունս հասակի, էառ իւր կնու-
թեան 'ի դստերաց անտի այլազգեաց, զի առնուցու 'ի նո-
ցանէ զվրէժս: Գնաց սա և կալաւ զերիս հարիւր աղուէ-
սըս, և առեալ ջահս՝ կապեաց զնոսս ընդ միմեանս ձեռ
ընդ ձեռ, և եղ զջահսն 'ի մէջ երկուց ձետոց, և լուցեալ
հուր 'ի ջահսն՝ արձակեաց յոճ՝ այլազգեաց, և այրեաց
զորայսն զյառաջագոյն հնձեալսն 'ի բարդից ցկանգնաւորն
և մինչև ցայգիս և ցձիթենիս: Իբրև պնդեցան այլազգիք
զհետ Սամիսոնի կապել զնա, եկն և եգիտ Սամիսոն ծնօտ
մի իշոյ, էառ զայն, և եհար նովաւ զհազար այր յայլազ-
գեաց անտի:

103. ՍԱՄՓՍՈՆ ԻՌՐՏԱԿԷ ԶԴՐՈՒՆՍ ԲԱՂԱՔԻ ՓՂՇՏԱՅԻՈՅ, ԵՒ
ՏԱՆԷ ԶԱՅՆ Ի ԳԼՈՒԽ ԼԵՐԻՆ:

Չոգաւ Սամիսոն 'ի Գազայ, և ետես անդ զկին մի և ե-
մուտ առ նա: Ազգ եղև Գազայացւոց՝ թէ եկեալ է այսր
Սամիսոն, դարանակալ լեալ նմա զգիշերն ողջոյն առ զրան
քաղաքին՝ խորհէին սպանանել զնա: Ննջեաց Սամիսոն,
և յարեաւ զմէջ գիշերաւն, թափեաց զգրունս քաղաքին
հանդերձ սեմօքն, և բարձեալ 'ի վերայ ուսոց իւրոց՝ եհան
զայնս 'ի գլուխ լերին:

104. ԿԻՆՆ ՍԱՄՓՍՈՆԻ ՄԱՏՆԷ ԶՆԱ Ի ՁԵՌՍ ԱՅԼԱԶԳԵԱՅՆ:

Յետ այսորիկ սիրեաց Սամիսոն զկին մի, որոյ անուն
էր Գալիլա: Ելին առ նա նախարարք Այլազգեացն՝ և ա-
սեն. պատրեա՛ զայր քո, թէ ի՞նչ իցէ զօրութիւն նորա,
կամ ի՞նչ հնար՝ է մեզ կապել զնա, և մեք տացուք քեզ
այր իւրաքանչիւր հազար հարիւր արծաթոյ: Եւ եղև իբրև

վտանկեաց բանիւք կինն զգիշերն ողջոյն և թախանձեցոյց զնա, պատմեաց նմա Սամիսոն զամենայն 'ի սրտէ իւրմէ և ասէ. ածելի ո՛չ ելցէ 'ի գլուխ իմ: Լուեալ զայս կնոջն՝ ննջեցոյց զնա 'ի ծնկաց միջի, և կոչեալ զոմն 'ի վարսավերաց անտի՝ եգերծ զեօթն գիսակս գլխոյ նորա. և նոյն՝ հետայն բարձաւ 'ի նմանէ զօրութիւն նորա: Եւ կալան զնա այլազգիք, և բրեալ զաչս նորա՝ կապեցին երկաթի կապանօք և արկին զնա 'ի բանտ: Յապա՞ գկնի ժամանակաց սկսաւ մազ գլխոյ նորա բուսանիլ յետ գերծելոյն, և օր քան զօր յաւելանայր 'ի զօրութիւնս, և սպասէր պարապոյ՝ զի առնուցու զվրէժս յայլազգեաց:

105. ՍԱՄՓՍՈՆ ՄԵՌԱՆԻ:

Իշխանք այլազգեաց ժողովեցան զոհել զոհ մեծ Գագոնայ Աստուածոյն իւրեանց և ուրախ լինել, զի մատնեցաւ 'ի ձեռս նոցա թշնամին իւրեանց: Եւ եղև իբրև զըլարթացան սիրտք նոցա՝ կոչեցին զՍամիսոն 'ի բանտէ, և կացուցանելով զնա 'ի մէջ երկուց սեանց՝ խաղային զնովաւ: Եգիտ յայնժամ Սամիսոն հնարս բուռն հարկանելոյ զերկոցունց սեանցն միջնոց, յորոց վերայ հաստատեալ էր տունն, և յեցաւ 'ի նոսա ասելով՝ մե ոցի անձն իմ ընդ Այլազգիս. և իբրև շարժեաց զօրութեամբ զսիւնսն, անկաւ տունն 'ի վերայ ամենայն նախարարաց և 'ի վերայ համօրէն ժողովոյն՝ օր 'ի նմա, և մեռոյց զամենեսեան ընդ իւր:

106. ՍԱՄՈՒԷԼ ԾՆԱՆԻ:

Ընդ մի էր յԱրիմաթեմայ, որոյ անուն էր Եղկանա: Էին նորա երկու կանայք, և անուն միոյն Աննայ, յորմէ 'ի ժամանակս քահանայապետութեան Հեղեայ ծնաւ նմա որ-

դի և կոչեցաւ Սամուէլ: Իբրև հաստատեցաւ մանուկն, մատոյց Աննայ մայր մանկանն զմանուկն առ Հեղի, և ասէ. ես այն կին եմ, որ կացի յաղօթս առ Տէր վասն մանկանս այսորիկ. լուաւ Տէր զինդրուածս իմ. ահա տամ զսա Տեանն 'ի փոխ զամենայն աւուրս կենաց իւրոց. և անդ երկիրպագին Տեանն: Մանուկն աճէր և զօրանայր, և հաճոյ էր Աստուծոյ և մարդկան, որոյ մայրն արարեալ կրկնօջրս փոքրիկս տանէր նմա աւուրց յաւուրս յելանել ընդ առն իւրում զոհել զոհ: Հեղեայ էին երկու որդիք ժանտք և չարարարոյք, որ ոչ ճանաչէին զՏէր, և հայրն նոցա թողեալ էր զնոսա 'ի կամս իւրեանց. յայս սակս բարկացաւ Աստուած սրտմտութեամբ իւրով 'ի վերայ Հեղեայ և որդւոցն նորա:

107. ԱՍՏՈՒԷԾ ԽՕՄԻ ԸՆԴ ՍԱՄՈՒԷԼԻ:

Չև ևս էր անցեալ ճրագն Աստուծոյ 'ի տաճարին, յորում ննջէր Սամուէլ առ տապանակաւ Տեանն. Չայն եղև 'ի վերուստ 'ի Տեանէ՝ որ ասէր. Սամուէլ՝ Սամուէլ: Եւ ընթացաւ Սամուէլ առ Հեղի և ասէ. անասիկ եմ Տէր, զի՞ կոչեցեր զես: Ասէ Հեղի. ոչ կոչեցի զքեզ, դարձի՛ր անդրէն, որդեակ, և ննջեա՛: Յաւել Տէր միւսանգամ կոչել զնա, որում չև ևս էր յայտնեալ բան Տեանն: Իսկ յերրորդում նուազի եկն եկաց Տէր 'ի վերայ, և կոչեաց առ նա. Սամուէլ Սամուէլ: Եւ նա ասէ. խօսեանց Տէր՝ զի լուիցէ ծառայ քո: Ասէ ցնա Տէր. ահա ես առնում զվրէժ 'ի Հեղեայ վասն անօրէնութեան որդւոց նորա, զի հայհոյէին զԱստուած, և նա ոչ խրատէր զնոսա:

108. ՍԱՄՈՒԷԼ ԳԱՏՄԻ ՀԵՂԵԱՅ ԶԲԸՆ ՏԵԱՌՆ, ԶՈՐ ԽՕՍԵՑԱՐ ՏԵՐ ՏԵՐ ԸՆԴ ՆՄԱ:

Ննջեաց Սամուէլ մինչև ցառաւօտ, և կանխեաց ընդ

առաւօտն բանալ զղրունս տան Տեառն՝ ըստ սովորութեան
իւրոյ: Բայց երկնչէր պատմել Հեղեայ: Առջեաց զնա Հեղի
և ասէ. զի՞նչ է բանն՝ զոր խօսեցաւ ընդ քեզ Տէր. օ՛ն
և օ՛ն արասցէ քեզ Աստուած, և օ՛ն և օ՛ն յաւելցէ, եթէ
զբան մի յամենայնէ թագուցես յինէն՝ զորս լուար: Պատ-
մեաց նմա Սամուէլ զամենայն բանսն. որում ետ պատաս-
խանի Հեղի. որ ինչ բարի է առաջի իւր՝ զայն արասցէ Տէր:

109. ՈՐԴԻՔ ՀԵՂԵԱՅ ՄԵՌԱՆԻՆ, ՆՈՅՆ ԵՒ ԻՆՔՆ ՀԵՂԻ:

Ընդ աւուրան ընդ այնոսիկ ժողովէին այլազգիք ՚ի վե-
րայ Իսրայէլի՝ պատերազմել ընդ նոսա: Տեսեալ Իսրայէ-
լի զպարտութիւնս իւր՝ առաքեաց բերել զտապանակ ուխ-
տին Տեառն ՚ի բանակն, և կոչել զերկոսին որդիս Հեղեայ
զՈփնի և զՓենէհէս ընդ նմա: Ճակատեցաւ Իսրայէլ ընդ
այլազգիս, և ոչ կարացեալ յաղթել զօրութեան նոցա,
և իւրաքանչիւր այր Իսրայէլի փախեաւ ՚ի յարկս իւր՝
ընկալեալ ՚ի նոցանէ զհարուածս մեծամեծս: Առաւ տա-
պանակն Տեառն, և երկոքին որդիք Հեղեայ մեռան ՚ի պա-
տերազմի անդ: Իբրև լուաւ Հեղի զձայն դուժին՝ անկաւ
յաթողոյն յետս ՚ի վայր, որով բեկաւ ողն նորա, և
մեռաւ:

110. ՍԱՒՈՒՂ ԸՆՏՐԻ ԹԱԳԱՒՈՐ ՅԱՄԻ 2900, ԶԿՆԻ ՍՏԵՂԾ-
ՍԱՆ ԱՇԽԱՐՀԻ:

Ի ծերանալ Սամուէլի՝ կացոյց զորդիս իւր դատաւորս
Իսրայէլի. բայց նոքա ոչ գնացին զճանապարհս հօր իւ-
րեանց, այլ թիւրեցան ընդ այն՝ զակատեալ զհետ զօշա-
քաղութեան, յորմէ հրապուրեալ անուին զկաշառս, և
թիւրէին զիրաւունս: Յայս սակս ժողովեցան արք Իսրայէ-
լի և ասնն ցՍամուէլ. աւաղիկ դու ծերացար, և որդիք
քո ոչ գնան զճանապարհս քո, արդ՝ կացո՛ ՚ի վերայ մեր

Թագաւոր դատել զմեզ : Չար թուեցաւ բանն՝ զոր ասացին նմա, և ջանայր շրջել զմիտս նոցա յայսպիսի դիտաւորութենէ. սակայն հաստատեալ էին նորա, ՚ի խորհուրդս իւրեանց : Հուսկ ուրեմն առեալ Սամուէլի հրաման յԱստուծոյ լսել բանից ժողովորդեանն՝ էջ ՚ի խնդիր նոցա, և ընտրեաց զՍաւուղ թագաւոր նոցա : Եւ Սաւուղ էր այր բարի, գեղապատշաճ, անձնեայ և թիկնաւէտ :

111. ՍԱՄՈՒԷԼ ԿՇՏԱՄԲԷ ԶՍԱՌՈՒՂ :

Ժողովեցան այլազգիք ՚ի պատերազմ ընդդէմ Իսրայէլի բազմութեամբ կառաց և հեծելոց, որք և ելին բանակեցան ՚ի Մաքմաս : Սաւուղ գտանէր դեռ ևս ՚ի Գաղգաղայ, և դադարեաց զեօթն օր վկայութեան որպէս և ասաց Սամուէլ. և ցրուեցաւ ժողովուրդն իւր ՚ի նմանէ : Յայնժամ եհան Սաւուղ զողջակէզան. և իբրև կատարեաց մատուցանել զայն, եկն Սամուէլ. և ել նա ընդ առաջ նորա օրհնել զնա : Ասէ Սամուէլ. զի՞նչ գործեցեր : Եւ նա ասէ. տեսի զի ցրուեցաւ ժողովուրդ իմ յինէն, և դու ոչ եկիր ՚ի վկայութեան աւուրս, զոր ուխտեցերն, երկեայ՝ զի գուցէ իջանիցեն այլազգիք ՚ի վերայ իմ : Ասէ Սամուէլ. ՚ի զուրէ քեզ չպահել զպատուիրանս իմ՝ զոր պատուիրեաց Տէրարդ՝ մի կացցէ թագաւորութիւն քո, փոխանակ զի ոչ պահեցեր զհրաման Տեանն :

112. ՅՈՎՆԱԹԱՆ ՄՏԱՆԷ Ի ԲԱՆԱԿՆ ՓՂՇՏԱՅՈՑ ԸՆԴ ԿԱՊԱՐՃԱԿՐԻ ԻՒՐՈՒԹ ԵՒ ՀԱՐԿԱՆԷ ԶՆՈՍԱ :

Յաւուր միում Յովնաթան որդին Սաւուղայ էառ զպատանին իւր զկապարճակիր, և եմուտ ՚ի կիրճս այլազգեաց և եհար զնոսա. կապարճակիրն ևս տար ատէպ զհետ նորա : առաջին հարուածք Յովնաթանու, որպէք եհար իբրև զբան



արս նետիւք և բռնաքարամբք: Եղև յայնժամ խռովու-
թիւն մեծ ՚ի բանակին և ահ ՚ի Տեառնէ: Իբրև լուաւ Սա-
ւուղ զաղաղակ այլազգեացն, ել ինքն և ամենայն ժողո-
վուրդն ընդ նմա մինչև ցպատերազմ: Եւ ամենայն Իսրայէլ՝
որք թագուցեալք էին ՚ի լերին, իբրև լուան թէ փախեան
այլազգիք, նորա ևս զհետ նոցա պնդեցան ՚ի պատերազմ:

113. ՍԱՒՈՒՂ ՍՊԱՌՆԱՅ ԶՄԱՀ ՈՐԴՈՑ ԻՐՈՒՄ ՅՈՎՆԱԹԱՆՈՒ:

Մինչ դեռ ցրուեալ էր պատերազմ ընդ քաղաքսն,
նշովեաց Սաւուղ յաւուր յայնմիկ զժողովուրդն, և ասէ.
անիծեալ լիցի մարդն, որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ:
Անդ էր անտառ մեղուաց հանդէպ անդոյ, և անցանէր
զօրն ՚ի մեղուանոցէ անտի: Լուեալ Յովնաթանու եթէ
երդմնեցոյց հայր իւր զժողովուրդն, կարկառեաց զծագ
գաւաղանին որ ՚ի ձեռին իւրում, և եհար ՚ի խորիսխ մե-
ղու, և մերձեցոյց զձեռն իւր ՚ի բերանն: Կամեցաւ Սա-
ւուղ ելանել ընդդէմ այլազգեաց և եհարց զԱստուած,
սակայն Աստուած ոչ արար նմա պատասխանի: Ասէ Սա-
ւուղ, մատուցէ՛ք այսր զամենայն ազգս Իսրայէլի, և տես-
ցուք թէ վասն ո՞ր եղեն այսօր չարիքս այսօքիկ. կենդանի՛
է Տէր, զի եթէ վասն Յովնաթանու որդւոյ իմոյ, ապա
մահու մեռցի:

114. ՍԱՒՈՒՂ ԱՆԱՐԳԻ ՏԵՍՏՈՒԾՈՑ:

Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. արդ լուր ձայնի պատգա-
մաց Տեառն. ե՛րթ և հար զԱմաղէկ, բայց զամենայն որ
ինչ նորա իցէ, մի՛ ապրեցուցանիցես յառնէ մինչև ցկինն:
Ելեալ Սաւուղ զօրութեամբ իւրով՝ եհար զԱմաղէկ, և
կալաւ զթաղաւորն նոցա կենդանւոյն, և զամենայն ազգն
կոտորեցին սրով սուսերի: Սակայն բարկացոյց Սաւուղ



զՏէր, զի էանց զբանիւ նորա, և ապրեցոյց զԹագաւորն կենդանի, և էառ զընտիրս յաւարաց անտի: Յայս սակս ընտրեաց Տէր 'ի Թագաւոր զԴաւիթ 'ի տիս մանկութեան փոխանակ Սաւուղայ, և հրամայեաց Սամուէլի անուղ զեղջիւր իւղոյ և օծանել զնա Թագաւոր:

115. ՍԱՒՈՒՂ ՀԱՆԴԻՊԻ ԱՏՍՈՑ ՁԱՐԱՑ:

Ս երացաւ 'ի Սաւուղայ հոգի Տեառն, և խելդէր զնա այս չար: Յայնժամ ասնն ցնա ծառայք իւր. խնդրեսցի Տեառն մերում այր մի, որ գիտիցէ երգել քնարաւ, զի 'ի հասանել 'ի վերայ քո սցսոյն չարի, երգեսցէ նա և դիւր լիցի քեզ, Առաքեաց Սաւուղ զհրեշտակս զի ամցեն զԴաւիթ որդի Յեսսեայ, որ գիտէր երգել զսաղմոսս, և էր այր իմաստուն, հանձարեղ և գեղեցիկ տեսլեամբ: Եւ յորժամ հասանէր այսն չար 'ի վերայ նորա, աննոյր Դաւիթ զքնարն և նուագէր՝ որով հանգիստ մատուցանէր Սաւուղայ, և աններ նմա դիւր:

116. ԳՈՂԻԱՏԻ ԽՆԴՐԻ ԶՈՒՔ ՏԻՍՐԱՏԵԼԱՅԻՆՈՑ ՔԱԿԱՏԵԼ ԸՆԴ ՆՄԱ:

Երբ որ յալազգիք 'ի բանակաց իւրեանց և ելին ընդգէմ Իսրայէլի: Նոյնպէս Սաւուղ և արք Իսրայէլի ժողովեցան 'ի հովիտն և ձակատեցան ընդգէմ նոցա 'ի պատերազմ:

Եւ 'ի ձակատէ այլազգեացն այր զօրաւոր, որոյ անուն էր Գողիադ, այր բարձրահասակ, և սաղարտ 'ի գլուխ, զգեցեալ զլրահաս, սոնապանք պղնձիք 'ի վերայ բարձից նորա, և վահան պղնձի 'ի վերայ թիկանց նորա: Սա եկն եկաց, ձայն ետ 'ի ձակատն Իսրայէլի և ասէ. ընտրեցէք դուք ձեզ զայր մի, զի ելցէ պայքարել ընդ իս. եթէ կա-

րասցէ նա հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ 'ի ծառայս ապա թէ ես հարից զնա, դուք եղիչիք մեզ 'ի ծառայս: Եւ ասնն Իսրայէլացիք ցմիմեանս. եթէ գտցի 'ի մէնջ այր այդպիսի, որ սպանանիցէ զնա, մեծացուցէ յոյժ զնա արքայ մեծութեամբ, և զդուստր իւր տացէ նմա կնու- թեան:

117. ԴԱԻԹ ԵԼԱՆԵ ԸՆԴԻՄ ԳՈՂԵՒՈՒ:

Յայնժամ խօսեցաւ Գաւիթ ընդ արսն՝ որ շուրջ զնո- վաւ, և ասէ. զի՞նչ արասցէ արքայ առն, որ հարկանիցէ զայլազգին զայն, և բառնայցէ զնախատինս յԻսրայէլէ: Լու եղեն Սաւուղայ բանքն, զոր խօսեցաւ Գաւիթ, զոր և էառ Սաւուղ առ ինքն: Ասէ Գաւիթ ցՍաւուղ. ես երթայց և եդից մարտ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ: Ասէ Սաւուղ. դուցէ ո՛չ կարիցես կռուել ընդ նմա, զի դու մանուկ ես, և նա այր քաջասիրտ և պատերազմող: Պատասխանի ետ նմա Գաւիթ և ասէ. յարածելն իմ զխաշինս հօր իմոյ, յորժամ դայր առիւծ կամ արջ, և առնոյր զոչխար 'ի հօտէ անտի իմմէ, ելանէի զհետ նորա, և հարեալ զառիւծ՝ կորդէի 'ի բերանոյ նորա զոչխարն, և եթէ յառնէր գաղան 'ի վերայ իմ, կալեալ զփողից նորա՝ հարկանէի և սպանա- նէի զնա: Տէր Աստուած, որ ապրեցոյց զիս 'ի ձեռաց ա- ռիւծուն և արջոյն, նոյնն ապրեցուցէ զիս 'ի ձեռաց այ- լազգւոյս: Ասէ Սաւուղ. ե'րթ՝ Տէր եղիցի ընդ քեզ:

118. ԴԱԻԹ ԱՌՆՈՒ ԶՀԻՆԳ ԲԱՐԻՆՍ ԵՒ ԶՊԱՐՍ ԻՒՐ:

Օգեցոյց Սաւուղ Գաւթի զվարապանակս իւր, և սա- զաւարտ պղնձի 'ի գլուխ նորա, որով զրահաւորեալ Գաւ- թի՝ ած զսուսեր իւր ընդ մէջ. և 'ի գնալն՝ գթեաց միան- գամ և երկիցս: Ասէ Գաւիթ ցՍաւուղ. ո՛չ կարեմ երթալ

սորօք, զի չեմ հմուտ. և ապա բարձին զայնս 'ի նմանէ : Առեալ զցուպ իւր 'ի ձեռն՝ ընտրեաց զհինգ քարինս ուղորկս, և եդ զայնս 'ի հովուական մտխաղին, և զպարսն 'ի ձեռին իւրում մերձեցաւ առ այրն այլազգի :

119. ԴԱԻԹ ՀԱՏԱՆԷ ԶԴԼՈՒԽ ԳՈՂԻԱԴՈՒ:

Իբրև հայեցաւ այլազգին 'ի Դաւիթ, որ էր խարտեաչ և գեղեցիկ, արհամարհեաց զնա իբրև զպատանի ապիկար : Ասէ ցնա Գողիադ. զե՞ է այդ՝ զե ցպով և քարամբք գաս 'ի վերայ իմ, միթէ շո՞ւն իցեմ ես : Ասէ Դաւիթ ցայլազգին. դու գաս 'ի վերայ իմ սրով, գեղարդեամբ և ասպարաւ, այլ ես գամ 'ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց ճակատուս Իսրայէլի, զոր նախատեցեր դու այսօր : Եւ 'ի ճակատելն նոցա ընդ միմեանս՝ ձգեաց Դաւիթ զձեռն իւր 'ի մտխաղ, և էառ անտի զքար մի, և պարսաքարեաց զԳողիադ, որ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր : Նոյնժամայն ընթացաւ Դաւիթ առ դին՝ և առեալ զսուսեր նորա՝ եհատ զզլուխ նորա : Իբրև տեսին այլազգիք թէ մեռաւ զօրավարն իւրեանց, փախեան. յարեան արք Իսրայէլի և Յուդայ, աղաղակեցին և յարձակեցան զհետ նոցա ցԱսկաղոն :

120. ՍԱԻՈՒՂ ՆԱՍԱՆԶԻ ԸՆԴ ԴԱԻԹ:

Եւ եղև 'ի մտանելն նոցա՝ իբրև դարձաւ Դաւիթ 'ի նպանանելոյ զայլազգին, ելին պարաւորք ընդ առաջ Դաւիթի յամենայն քաղաքաց Իսրայէլի երգել՝ պար աննուղ ուրախութեամբ ընդ առաջ Սաւուղայ արքայի, թմբօք և ծնծղայիւք. նուագէին կանայք խաղալիկք, և ասէին. Սաւուղ եհար զհագարս, և Դաւիթ զբիւրս : Զչարեցաւ Սաւուղ վասն բանից այնոցիկ, և ընդ ակամբ հայէր յօրէ յայնմանէ և առ յապա : Զկնի այսր ամենայնի՝ ոգի Յով-

նաթանու կապեցաւ ընդ ոգւոյն Գաւթի, և սիրեաց զնա, ուխտելով նմա սիրել զնա իբրև զանձն իւր: Մերկացաւ Յովնաթան զօգիկ իւր և ետ զայն Գաւթի. նոյնպէս ետ նմա զվարապանակս իւր, զսուսեր, զաղեղն, զկամար և ըզկապարձս իւր:

121. ՍԱՒՈՒՂ ԶԼԱՆԱՅ ԶԻՈՍՄՈՒՆՍ ԻՒՐ:

Ասէ Սաւուղ ց Գաւթի. աւասիկ տաց զդուստր իմ՝ երեցքեզ կնուծեան, եթէ լինիցիս ինձ յորդի զօրութեան և պատերազմեսցիս զպատերազմունս Տեառն: Ասէ ցնա Գաւթի. ո՞վ եմ ես՝ զի լինիցիմ փեսայ արքայի: Պատուիրեաց Սաւուղ ծառայից իւրոց, զի խօսեսցին ընդ նմա լռելեայն, թէ ոչ կամի արքայ վարձանս, այլ հարիւր անթլիատութիւն այլազգեաց, զի խորհէր արկանել զնա ՚ի ձեռս այլազգեաց: Յարեաւ Գաւթի և զնաց ինքն և արք իւր, և եհար ՚ի նոցանէ արս հարիւր, և եբեր զանթլիատութիւնս նոցա, և փեսայացաւ արքայի:

122. ՍԱՒՈՒՂ ԹՇՆԱՄԱՆԷ ԶԴԱՒԻԹ:

Ծանեաւ Սաւուղ՝ թէ Տէր ընդ Գաւթի է, և ամենայն Իսրայէլ սիրէ զնա. յաւել ևս ակնածել ՚ի նմանէ, և եղև թշնամութեամբ ընդ նմա զամենայն աւուրս կենաց իւրոց: Խօսեցաւ Սաւուղ ընդ որդւոյ իւրում Յովնաթանու և ընդ ամենայն ծառայս իւր՝ սպանանել զԳաւթի: Իբրև լուաւ Յովնաթան զայն՝ պատմեաց Գաւթի, թէ հայր իմ խնդրէ սպանանել զքեզ, զգոյշ լեր և կալ զքեզ ՚ի թաքստի: Լուեալ Սաւուղայ՝ թէ պատմեաց Յովնաթան զգաւաձանութիւն իւր՝ որ առ Գաւթի, բարկացաւ ՚ի վերայ նորա, և ասէ. ես ոչ գիտեմ՝ զի դաշնաւոր ես դու որդւոյն Յեսսեայ, արդ՝ առաքեա՞ կալ զպատանին, զի որդի մահու է նա: Պատասխանի ետ Յովնաթան հօր իւրում, և

ասէ. ընդէ՞ր մեռանիցի, զե՞նչ չար գործեաց: Հուսկ ուրեմն առաքեաց Սաւուղ զհրեշտակս 'ի տուն Գաւթի՝ ունիլ զնա առ իւր 'ի սպանանել զնա ընդ առաւօտն: Պատմեաց նմա Մեղքող կին իւր՝ և ասէ. եթէ ոչ ապրեցուցես զանձն քո 'ի գիշերիս յայսմիկ՝ վաղիւ մեռանելոց ես, և իջուցեալ զնա ընդ պատուհանն՝ փախեաւ և ապրեցաւ:

123. ԴԱԻԹ ԽՆԱՅԷ Ի ՍԱԻՈՒՂ:

Իբրև պնդեալ էր Սաւուղ զհետ Գաւթի արամբք իւրովք, եկն հրեշտակ առ նա, և ասէ. փութա՛՛ եկ այսր, զի յարձակեցան այլազգիք յերկիրս մեր, և նա չողաւ ընդդէմ այլազգեացն: Ի դառնալ նորա անտի, ազդ եղև նմա՝ թէ Գաւթ յանապատի անդ է. առեալ ընդ իւր զերիս հաղար՝ արս ընտրեալս յամենայն Իսրայէլէ, զնաց խնդրել զնա և զորս ընդ նմա. եկն 'ի պառակս հօտից, և եմուտ Սաւուղ հանդչիլ անդ: Յայնժամ ասեն ցԳաւթ՝ որք ընդ նմա էին. ահա այսօ՛ր է՝ զորմէ ասաց Տէր ցքեզ, մատնել զթշնամիս քո 'ի ձեռս քո, արա՛ որպէս և հաճոյ թուի յաչս քո: Յարեաւ Գաւթ և եհատ գաղտ զտառն լօզկի Սաւուղայ: Ասէ Գաւթ ցարս իւր. քաւ լիցի ինձ միսել 'ի նա զձեռն իմ, զի օծեալ Տեառն է: Հաճեալ Գաւթի զարսն իւր բանիւք՝ ոչ թոյլ ետ նոցա սպանանել զնա:

124. ՄԱՀ ՍԱԻՈՒՂԱՅ:

Ի պատերազմել այլազգեաց ընդ Իսրայէլէ՝ փախեան արք Իսրայէլի յերեսաց նոցա, և հասին 'ի Սաւուղ և յորդիս նորա: Ծանրացաւ պատերազմն 'ի վերայ Սաւուղայ, և վերաւորեցաւ յաղեղնաւորաց կորովեաց: Ասէ Սաւուղ ցկապարձակիր իւր. մերկեա՛ զսուր քո և խոցեա՛ զիս, գուցէ գայցեն անթլիատքն և խոցոտիցեն զիս և խաղայցեն

զինե : Եւ ետես կապարճակիրն՝ թէ մեռաւ Սաւուղ , անկաւ և ինքն 'ի վերայ սուսերի իւրոյ՝ և մեռաւ :

125. ԴԱԻԹ ՈՂԲԱՅ ՋՍԱԻՈՒՂ ԵՒ ՋՅՈՎՆԱԹԱՆ :

Յետ աւուրն երկրորդի՝ ահա այր մի եհաս 'ի բանակէն զօրուն Սաւուղայ, հանդերձք նորա պատանեալ՝ և հող զգլխով, և մտեալ առ Գաւիթ, ասէ . փախեաւ ժողովուրդըն 'ի պատերազմէն, իսկ Սաւուղ և Յովնաթան մեռան : Իբրև լուաւ զայս Գաւիթ՝ պատանեաց զհանդերձս իւր, և ամենայն արք ընդ նմա կոծեցան մինչև ցերեկոյ 'ի վերայ Սաւուղայ և Յովնաթանու : Եկին արք Հրէաստանի, և օծին անդր զԳաւիթ թագաւոր 'ի վերայ տանն Յուգայ, և պատմեցին նմա՝ թէ արք յԱբիսայ թաղեցին զՍաւուղ և զորդիս նորա 'ի լեւրինն Գեղբուայ : Առաքեաց հրեշտակս առ նոսա և ասէ . օրհնեալ էք դուք 'ի Տեառնէ, զի ցուցիք դուք զգուծն զայն 'ի վերայ տեառն ձերոյ, արդ՝ արացցէ Տէր ընդ ձեզ ողորմութիւն և ճշմարտութիւն, և ես հատուցից ձեզ ընդ բարութեանն :

126. ԴԱԻԹ ՄԵՂԱՆՁԻ ԿՐԿՆԱԿԻ :

Առաքեաց Գաւիթ զՅովաբ և զամենայն Իսրայէլ՝ զի սատակեսցեն զորդիսն Ամոնայ : Եւ եղև ընդ երեկս յարեաւ Գաւիթ յանկողնոյ իւրմէ, և զգնայր 'ի վերայ տանեաց իւրոց . ետես անտի զկին մի լուացեալ՝ և գեղեցիկ յոյժ տեսլեամբ, որոյ անուն էր Բերսաբէ, կին Ուրիայ Բետացոյ : Առաքեաց Գաւիթ զհրեշտակս՝ և առ զնա և նրնջեաց ընդ նմա : Իսկ այր նորա էր 'ի բանակի անդ, և ծառայէր հարազատութեամբ հայրենեաց : Եւ եղև ընդ առաւօտն գրեաց Գաւիթ հրովարտակ առ Յովաբ, և ասէ . մատո՞ զՈւրիայ ընդդէմ սաստկացեալ պատերազմին . և

դարձջիք դուք ընդ կրօնինն ՚ի նմանէ, զի հարցի նա և մեռցի:

127. ԱՍՏՈՒԱԾ ԱՌԱՔԷ ԱՌ ԴԱԻԹ ԶՆԱԹԱՆ ՄԱՐԳԱՐԷ:

Յայնժամ առաքեաց Տէր զՆաթան մարգարէ առ Դաւիթ և ասէ. արք երկու էին ՚ի քաղաքի միում, մին մեծատուն, և միւսն աղքատ. մեծատանն էին հօտք և անդեայք բազում յոյժ, այլ աղքատին որոջ մի փոքրիկ, զոր ստացեալ էր և սնուցեալ և հաստատեալ ընդ նմա: Եկն անցաւոր առ այրն մեծատուն, խնայեաց առնուլ ՚ի հօտից իւրոց՝ առնել կերակուր հիւրոյն անցաւորի եկելոյ առ նա, և էառ զորոջ աղքատին և արար նմա կերակուր:

128. ՄԱՐԳԱՐԷՆ ՅԱՅՏՆԷ ԴԱԻԹ ԶՅԱՆՅԱՆՍ ԻՐ:

Իարկացաւ սրտմտութեամբ Դաւիթ առնն յոյժ՝ և ասէ. կենդանի է Տէր՝ զի որդի մահու է այրն՝ որ արար զայն, և զորոջն տուժեսցէ եօթնպատիկ: Ասէ ցնա Նաթան. դու ես այրն, որ արարեր զայն. այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. ե՛ս եմ՝ որ օծի զքեզ թագաւոր ՚ի վերայ ամենայն Իսրայէլի, ես փրկեցի զքեզ ՚ի ձեռաց Սաւուղայ, ետու քեզ զտուն Տեառն քո և զԻսրայէլ, ընդէ՞ր անարգեցեր զքան Տեառն առնել չար առաջի նորա: Ասպաներ զՈւրիա քետացի սրով թշնամեաց, և զկին նորա առեր դու քեզ կնութեան: Յայնժամ զըջացաւ Դաւիթ, և ասէ ցՆաթան. մեղայ Տեառն: Եւ նա ասէ. անցոյց Տէր զմեզս քո՝ և մի՛ մեռցիս, բայց որդին քո՝ որ ծնանելոց է քեզ, մահու մեռցի:

129. ՄԱՀ ՄԱՆԿԱՆՆ ԴԱԻԹ:

Եհար Տէր զմանուկն՝ զոր ծնաւ կինն Ուրիայի, և հիւանդացաւ: Խնդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն մանկա-

նրն, պահեաց պահս, և եմուտ անկաւ ՚ի վերայ գետնոյ: Յաւուր եօթերորդի եղև մեռանիլ մանկանն, և երկեան ծառայք իւր պատմել նմա: Իբրև լուաւ Գաւիթ զշնչին ծառայից իւրոց՝ եհարց ցնոսա, եթէ մեռեալ իցէ մանուկըն. և նորա ասեն՝ մեռաւ: Եւ Գաւիթ նոյն ժամայն յարուցեալ ՚ի գետնոյն՝ լուացաւ և օծաւ, և եմուտ ՚ի տուն Աստուծոյ երկիրպագանել Տեառն, և ապա խնդրեաց ուտել զհաց: Ասեն ցնա ծառայքն նորա. զի՞նչ է բանդ այդ՝ զոր արարեր. մինչդեռ կենդանի էր մանուկն՝ պահէիր և լայիր, և իբրև մեռաւ՝ յարեար ուտել և ըմպել: Ասէ ցնոսա Գաւիթ. մինչդեռ կենդանի էր՝ պահէի և լայի, զի հնար էր ըստ ողորմութեան Տեառն կեալ մանկանն. իսկ այժմ որովհետև մեռաւ, ես ընդէ՞ր պահիցեմ, միթէ կարող իցեմ դարձուցանել զնա այսրէն:

130. ԱՔԵՍԱՀՈՄ ԱԳՍԵԱՐԻ Ի ՀՕՐԷ ԻՒՐՄԷ Ի ԴԱԻԹԻ:

Յետ այնորիկ ել Աքեսաղոմ կառօք և երիվարօք, և յիտուն այր սուրհանդակ առաջն իւր. և ՚ի կատարիլ չորից ամաց՝ ասէ ցհայր իւր Գաւիթ. երթայց և հատուցից զուխաս իմ՝ զոր ուխտեցի Տեառն. որում ետ պատասխանի արքայն. ե՛րթ խաղաղութեամբ: Յարեաւ Աքեսաղոմ, գնաց ՚ի քեբրոն: Եւ ապա առաքեաց Աքեսաղոմ պատուիրակս յամենայն ցեղս Իսրայէլի, և ասէ. ՚ի լսել ձեր զձայն եղջեր փողոյ, ասասջիք՝ եթէ թագաւորեաց Աքեսաղոմ ՚ի քեբրոն: Եւ եղև ժողով սաստիկ և ժողովուրդ բազում երթայր ընդ նմա: Եհաս գուժկան առ Գաւիթ, և ասէ. եղև սիրտ արանց Իսրայէլի զհետ Աքեսաղոմայ: Ասէ Գաւիթ ցամենայն ծառայս իւր՝ որ ընդ նմա. օ՛ն արի՛ք փախիցո՛ւք յերեսաց նորա, զի մի՛ փութացեալ հարկանիցէ զմեզ սրով սուսերի: Փութացաւ արքայ ելանել

և ամենայն տուն նորա հետիոտս, և եկաց առ լերինն Ձիթենեաց:

131. ԴԱԻԹ ՀԱՄԲԵՐԷ ՄԵՄԻ ԸՆԱԳԱԿԱՅ:

Եկն արքայ Դաւիթ մինչև ցԲաւուրիմ. և ահա ելանէր անտի այր յազգականութենէ Սաւուղայ, անուն նորա Սեմէի, ելանելով ելանէր և անիծանէր և ձգէր զքարինս Դաւթի, և ամենեցուն որք ընդ նմա: Մի ոմն 'ի ծառայից իւրոց մատեալ առ նա, և ասէ. ընդէ՞ր այսպէս անիծանէ շուն մի մեռեալ զտէր իմ՝ զարքայ, անցից և առից զգլուխ նորա: Պատասխանի ետ Դաւիթ. Թո՛ղ տուք նմա անիծանել այնպէս, թերևս տեսցէ Տէր զտառապանս իմ, և հատուցէ ինձ բարիս փոխանակ անիծից նորա յաւուրս յայսմիկ:

132. ԴԱԻԹ ԶՕՐԱԺՈՂՈՎ ԼԻՆԻ ԸՆԴԴԵՄ ԱԲԵՍԱՂՈՄԱՅ:

Եմուտ Աբեսաղոմ և ամենայն Իսրայէլ ընդ նմա յերուսաղէմ, և եկաց անդ աւուրս ինչ. զորմէ ազգ եղև Դաւթի, և արար հանդէս զօրուն, և կացոյց 'ի վերայ նոցա հարիւրապետս և հազարապետս, և բաժանեալ զնոսս յերիս առաջ՝ առաքեաց ընդդէմ Աբեսաղոմայ: Ասէ Դաւիթ ցզօրս իւր. ելանելով ելից և ետ ընդ ձեզ: Պատասխանի ետուն նորքա. ո՛չ, զի դու ետ իբրև զտասն հազարս 'ի մէջ. լաւ է թէ դու 'ի քաղաքի իցես՝ զի լինիցիս մեզ յօգնականութիւն: Ի վախճանի պատուէր ետ արքայ Յովաբայ և այլոց զօրավարաց իւրոց, և ասէ. ինայեսջի՞ք 'ի պատանեակն իմ Աբեսաղոմ:

133. ԱԲԵՍԱՂՈՄ ԳԱԻԻ ԶԾԱՌՈՅ:

Յաւուր յայնմիկ պարտեցաւ զօրն Իսրայէլի, և եղև խորտակումն մեծ մինչև անկանել քսան հազար արանց:

Գիպեցաւ Արեւսաղոմայ առաջի ծառայից Գաւթի Հեծեալ
'ի ջորի իւր մտանել ընդ մեծ և թաւ կաղնեաւ, ուրանօր
պատեալ հերբ զլսոյ նորա ընդ կաղնեաւն՝ կախեցաւ զծա-
ռոյն հերօքն, և անց 'ի ներքոյ նորա ջորին յայնկոյս :

134. ՄԱՀ ԱՐԵՍԱՂՈՄԱՅ :

Ատես այր մի զԱրեւսաղոմ կախեալ զկաղնեոյն, և պատ-
մեաց զայն Յովաբայ . որում ետ պատասխանի Յովաբ, թէ՛
ընդէ՞ր ո՞չ հարեր զնա ընդ գետին, զի ես ունէի տալ քեզ
այսօր զյիսուն սիկզ արծաթոյ և զսուսեր մի : Ասէ այրն
ցՅովաբ . ո՞չ ապաքէն պատուիրեաց արքայ յականջս ձեր՝
զգուշանալ պատանեկին Արեւսաղոմայ, մի՛ ինչ վնաս առ-
նել անձին նորա : Չանսացեալ Յովաբայ բանիցն՝ էառ զե-
րիս նետս, և արձակեաց զայնս 'ի սիրտ Արեւսաղոմայ . և
մինչդեռ կենդանի էր 'ի կաղնեոյն, պատեցան զնովաւ տանն
մանկունք 'ի զինակրացն Յովաբայ, և հարեալ զնա՝ սպա-
նին չարաչար :

135. ԴԱԼԻԹ ՈՂԲԱՅ ՁԱՐԵՍԱՂՈՄ ՈՐԴԻ ԻՒՐ :

Մինչդեռ նստէր Գաւթի ընդ մէջ երկոցունց դրանց,
և սպասէր լրոյ զօրաց և որդւոյ իւրոյ, եկն գուժկան և
ազդ արար զյաղթութենէ թշնամեաց՝ ասելով . աւետիք
Տեառն իմոյ արքայի, զի արար քեզ Տէր իրաւունս այսօր
'ի ձեռաց ամենայն յարուցելոց 'ի վերայ քո : Ասէ ցնա
արքայ . ողջոյն իցէ մանկան իմոյ Արեւսաղոմայ : Պատասխա-
նի ետ գուժկանն . եղիցին իբրև զմանուկն թշնամիք Տեառն
իմոյ, և ամենայն յարուցեալք 'ի վերայ քո 'ի չարութիւն .
ընդ որ խոովեցաւ արքայ, ել 'ի վերնատուն դրանն, և ելաց
'ի ձայն բարձր . Արեւսաղոմ Արեւսաղոմ, որդեակ իմ Արե-
սաղոմ, ո՛ տայր ինձ զմահ փոխանակ քո, ե՛ս փոխանակ քո,
Արեւսաղոմ որդեակ իմ, որդեակ իմ Արեւսաղոմ :

136. ՄԱՀ ԴԱԻԹԻ:

Յաւուրան յայնոսիկ ծերացեալ էր Գաւիթ և անցեալ զաւուրք: Կոչեաց նա զքահանայս և զմարգարէս, և ասէ ցնոսա. առէ՛ք ընդ ձեզ զճառայս, և հեծուցեալ զՍաղովմոն զորդի իմ՝ ՚ի ջորի իմ՝ իջուցէ՛ք զնա ՚ի Գեհոն օժանել զնա ՚ի Թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի, և փող հարեալ եղջերաւն՝ ասասցիք. կեցցէ՛ արքայ Սաղովմոն, ելջիք զնի նորա, մտցէ և նստցի յաթոռ իմ, և նա Թագաւորեսցէ ընդ իմ: Արարին ըստ բանիցն արքայի, և Սաղովմոն նստաւ յաթոռ Գաւթի հօրն՝ ամաց երկոտասանից ՚ի կենդանութեան հօր իւրոյ: Եւ եղև իբրև դադարեաց Գաւթի ՚ի պատուիրելոյ Սաղովմոնի որդւոյ իւրում, ննջեաց ընդ հարս իւր, Թագաւորեալ ամս քառասուն:

137. ՍԱՂՈՎՄՈՆ ԽՆԴԻ: ՅԱՍՏՈՒԹՈՅ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ:

Արևեցաւ Տէր Սաղովմոնի ՚ի քուն գիշերոյ, և ասէ՛ խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ: Ասէ Սաղովմոն՝ Տէ՛ր Աստուած իմ, դու եղեր զճառայ քո փոխանակ Գաւթի հօր իմոյ, ես եմ մանուկ փոքր, և ոչ գիտեմ զել և զմուտ իմ. տուր ծառայի քում զսիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինիլ ՚ի մէջ բարւոյ և չարի. քանզի ո՞ կարէ դատել զայս ժողովուրդ քո զճանր: Հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, և ետ նմա սիրտ իմաստուն և հանճարեղ, և զոր ոչն խնդրեաց՝ զմեծութիւն և զփառս:

138. ԿԱՆԱՏԻ ԵՐԿՈՒԲ ԳԱՆ Ի ԴԱՏ ԱՌԱՋԻ ՍԱՂՈՎՄՈՆԻ:

Այլին երկու կանայք առ արքայ և կացին առաջի նորա: Ասէ մին ՚ի նոցանէ. յի՛ս Տէր իմ, ես և կինս այս էաք ՚ի միում տան, ծնայ ՚ի տան անդ, եղև յաւուրն երրորդի

ծնաւ և կինս այս, մեռաւ որդի սորա 'ի գիշերի, քանզի ննջեաց 'ի վերայ նորա, և յարուցեալ 'ի հասարակ գիշերի, էառ զմանուկ իմ 'ի գրկաց իմոց 'ի ծոց իւր, և յորժամ աղախին քո 'ի քուն էր, զորդին իւր զմեռեալ նընջեցոյց 'ի ծոցի իմում: Ասէ միւս կինն. 'ւչ՝ տէր իմ, մեռեալն է որդի սորա, իսկ որդի իմ կենդանին: Զնոյն բան հաստատէր և միւսն:

139. ՎՃԻՌ. ՍԱՂՈՎՄՈՒՆԻ:

Օտնոր էր որոշել արքայի զբանս՝ զոր խօսեցան նորս անորոշ իմն եղանակաւ, վասն որոյ կամելով 'ի յայտ ածել զճշմարտութիւն՝ ասէ. բերէ՛ք առ իս զսուր, և կտրեալ բաժանեցէ՛ք զմանուկն զկենդանին յերկուս, և տո՛ւք զկէս նորա միում, և զկէսն միւսում: Յարեաւ կինն՝ որոյ որդի էր կենդանին, և ասէ. յի՛ս տէր, տո՛ւք նմա զողջոյն մանուկն կենդանի, և մահու մի՛ սպանանէք զնա: Իսկ միւս կինն ասէր. մի՛ իմ լիցի և մի՛ դորա. այլ կտրեցէ՛ք զնա ընդ մէջ: Յայնժամ ասէ արքայն. տո՛ւք զմանուկն կենդանի այնմ՝ որ ասաց թէ տո՛ւք զդա նմա, և մի՛ սպանանէք, նա՛է մայր դորա: Լուաւ Իսրայէլ զգատաստանն՝ զոր դատեցաւ արքայն, և զարմացան ընդ իմաստութիւն նորա:

140. ՍԱՂՈՎՄՈՒՆ ՇԻՆԷ ԶՏԱՃԵՐ Ի 3000, ԱՄԻ ԶԳՆԻ ՍՏԵՂԾ՝
ՄԱՆ ԱՇԽԱՐՀԻ:

Ը ինեաց Սաղովմոն զտուն յանուն Տեառն Աստուծոյ, զոր զարդարեալ ոսկեղինօք և արծաթեղինօք և ակամբք պատուականօք, եդ 'ի նմա զտապանակ ուխտին 'ի սրբութիւն սրբութեանց: Յաւուր յայնմիկ մեծացաւ Սաղովմոն քան զամենայն թագաւորս երկրի մեծութեամբ և իմաստութեամբ, և ամենայն թագաւորք երկրի խնդրէին տեսանել

զերեսս նորա, և լսել զհմաստութիւն նորա: Տիկինն Սա-
բայ լուաւ զանուն և զհմաստութիւն նորա, և եկն առ նա
պատարագօք փորձել զնա: Իբրև ետես կինն զամենայն
իմաստութիւն նորա և զտունն՝ զոր շինեալ է նա, զամե-
նայն զկարգ և զհանդերձանս նորա, զարմացաւ յոյժ:

141. ՍԱՂՈՎՄՈՆ ՀԵՇՏԱՆԵՑ Ի ՄՈՂՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԳՆԱՑ ԶՀԵՏ

ԱՍՏՈՒԼԾՈՅ ՕՏԱՐԱՑ:

Ի ժամանակի ծերութեան Սաղովմոնի, կանայք նորա
խոտորեցուցին զսիրտ նորա զհետ աստուածոց օտարաց, և
նչ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւր-
ում, որպէս Գաւթի հօր իւրոյ: Ասան որոյ բարկացաւ Տէր
վասն բանին պնտրիկ, և պատուիրեաց նմա ամենեկն չեր-
թալ զհետ աստուածոց օտարաց, և առնել զամենայն, զոր
ինչ հրամայեաց նմա: Բայց նորա նչ անսացեալ հրամանի
Տեառն՝ շինեաց զտուն կոոց և պաշտէր զնոսա: Եւ ասէ
Տէր ցՍաղովմոն. փոխանակ զի նչ պահեցեր զպատուիրա-
նըս իմ, պատանելով պատանեցից զթագաւորութիւնդ ՚ի
ձեռանէ քումմէ, և տաց զդա ծառայի քում. և եղև այն-
պէս:

142. ԹՈՒԲՈՎԱՄ ՈՐԴԻ ՍԱՂՈՎՄՈՆԻ ԽՍՏՈՒԹԵԱՄԲ ԳԱՏԱՍԽԱՆԵ-

ՏՈՒ ԼԻՆԻ ԺՈՂՈՎՐԻԵԱՆ:

Ննջեաց Սաղովմոն ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի քա-
ղաքի Գաւթի հօր իւրոյ: Եւ թագաւորեաց Ռոբովամ որդի
նորա ընդ նորա: Խօսեցաւ ամենայն ժողովուրդն ընդ ար-
քայի Ռոբովամայ՝ և ասէ. հայր քո ծանրացոյց զանուր
մեր, և դու թեթեւացո՞ զմեզ ՚ի խիստ ծանրութենէ հօր
քոյ: Ասէ ցնոսա Ռոբովամ. երթայք մինչև ցերիս աւուրս
և դարձցիք առ իս: Իբրև դարձաւ ամենայն Իսրայէլ յաւու-

րըն երրորդի առ արքայ, խօսեցաւ արքայն ըստ խորհրդ-
դեան մանկուոյն, և թողեալ զխորհուրդս ծերոց՝ զոր
խորհեցան ընդ նմա, և ասէ. հայր իմ ծանրացոյց զանուր
ձեր, և ես յաւելից յանուր ձեր. հայր իմ խրատէր զձեզ
զանիւք, ես խրատեցից զձեզ . ք.քովք :

143. ԻՍՐԱԵԼԻԱՏԻՔ ԹԱԳ ԿԱԳԵՆ Ի ԳԼՈՒԽ ՅԵՐՈՒՅԱԿԱՄԱՅ :

Իբրև ետես ամենայն Իսրայէլ՝ եթէ ոչ լուաւ նոցա ար-
քայ, ասեն ցնա. զի ոչ բաժին կայ մեր ընդ Գաւթի, ոչ
գոյ մեր ժառանգութիւն ընդ որդւոյ Յեսսեայ : Ի վերայ
այսր ամենայնի՝ ընտրեցին ՚ի թագաւոր զՅերթովամ ՚ի գա-
ւաղանէն Եփրեմի ՚ի վերայ Իսրայէլի. ոչ ոք էր զկնի տանն
Գաւթի, բայց միայն ՚ի գաւաղանէ տանն Յուդայ և Բե-
նիամինի. յայնժամ մի թագաւորութիւնն բաժանեցաւ
յերկուս, այսինքն ՚ի Յուդա և յԻսրայէլ : Ասէ Յերթովամ
՚ի սրտի իւրում. ահա արդ գառնայցե թագաւորութիւնս
՚ի տունն Գաւթի, եթէ ելանիցէ ժողովուրդս զոհել ՚ի տան
Տեառն յԵրուսաղէմ՝ խորհեցաւ առնել երկուս երինջս
ոսկիս, և ասէ ցժողովուրդն. շատ լիցի ձեզ ելանել յԵ-
րուսաղէմ, ահա աստուածք ձեր. և ինքն արար տօնս որդ-
ւոցն Իսրայէլի, և ել ՚ի սեղանն զոհել :

144. ԿՈՐԾԱՆՈՒԹՅՆ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԻՍՐԱԵԼԻԱՏԻՈՅ :

Ո՛չ բազում ժամանակս տեեաց թագաւորութիւնն Իս-
րայէլացւոց սակս անօրէնութեանց իւրեանց և մոլորու-
թեան յարգարութեան ճանապարհէ, առ որս բազում ան-
գամ առաքէր Աստուած զմարգարէս պատուիրել նոցա, զի
զարձցին նոքա յանօրէնութեանց իւրեանց յԱստուած-
պաշտութիւն ճշմարիտ. սակայն ոչ զղջացան նոքա և ոչ
անսացին բանից մարգարէից : Յոյր սակս բարկացաւ Աստ-

ուած սրտմտութեամբ իւրով, և ետ զնոսա 'ի ձեռս Ասոր-
ւոյ արքայի 'ի գերութիւն յԱսորեստան:

145. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏՈՎԲԻԹԱՅ:

Յաւուրս Ենեմարու թագաւորին Ասորեստանեայց գե-
րեցաւ Տովբիթ յերկրին Ասորեստանեայց 'ի Նինուէ, որ
'ի մանկական տիոց անտի գնայր զճանապարհս ճշմարտու
թեան և զարդարութեան. զամենայն աւուրս կենաց իւրոց
ողորմութիւնս բազումս առնէր եղբարց իւրոց և ազգին
իւրում, մանաւանդ եղելոց ընդ իւր 'ի Նինուէ: Մինչդեռ
մանուկն էր նա, մերժեցան 'ի բաց ամենայն ազգք 'ի տա-
ճարէն Երուսաղէմի. գնային զոհել երնջուց երկուց ոսկւոյ՝
զոր արար Յերոբոսամ արքայն Իսրայէլի. նա միայն եր-
թայր բազում անգամ Երուսաղէմ 'ի տօնս տարեկանաց,
և տայր զպտուղս և զտասանորդս յարդեանց իւրոց քահա-
նայից, և պաշտէր զԱստուած:

146. ՏՈՎԲԻԹ Ի ԳԵՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ ԱՌՆԷ ԶԲԱՐՈՒԹԻՒՆՍ
ՄԵՇԱՄԵՇՍ:

Յորժամ եհաս Տովբիթ յարբունս հասակի, էառ ին-
քեան զկին 'ի զաւակէ հայրենի ազգի իւրոյ, և ծնաւ 'ի նմա-
նէ զՏուբի, որում 'ի մանկութեան անդ ուսոյց զամենայն
ճշմարտութիւնս և զերկիւղ Տեառն: Իբրև գերի վարեցաւ
նա 'ի Նինուէ, պահէր զանձն իւր յամենայնէ, որում ետ
բարձրեալն շնորհս առաջի արքայի Ասորեստանեայց, և էր
վաճառական, որ եղ 'ի պահեստի առ Գաբայէլայ՝ արծա-
թոյ քանքարս տասն՝ զորս ստացեալ էր յարքայէ. յորոյ
աւուրս ողորմութիւնս բազումս առնէր եղբարց. զհաց իւր
տայր քաղցելոց, և զձորձ իւր մերկոց:

147. ՏՈՎԵԻԹ ԹԱՂԻ ԶՄԵՌԵԱԼՍ:

Օ կնի ժամանակաց մեռաւ Ենեմար, և Թագաւորեաց Սենեքերիմ որդի նորա փոխանակ նորա, որ նեղէր յոյժ զԻարայէլ, և զմեռեալսն հրամայէր ընկենուլ արտաքոյ պարըսպին: Յայնժամ գողանայր Տովբիթ և Թաղէր զմեռեալըս, զորս կոտորէր արքայն սրամտութեամբ իւրով: Ետոյ 'ի խնդիր ել մարմնոց դիականցն, բայց ոչ եգիտ. եմուտ մի ոմն 'ի Նինուէացւոց անտի, և ծանոյց Թագաւորին վասն զգիականն Թաղելոյ: Իբրև գիտաց թէ խնդրեն սպանանել զնա, զահի հարեալ գնաց փախստեայ. որով յափըշտակեցան ինչք նորա, ոչ մնաց բնաւ ինչ, բայց միայն կինն և Տուբի որդի իւր:

148. ՏՈՎԵԻԹ ԱՌ ՈՁԻՆՉ ՀԱՄԱՐԻ ԶԿՆԱՄԲԱՆՍ ՄԵՐՉԱՒՈՐԱՅ

ԻՐՈՑ:

Ի տօնին մեծի՝ որ էր սուրբն յեօթներորդ շաբաթուն, արար Տովբիթ զճաշ մեծ, և առաքեաց զորդին իւր ածել յեղբարց իւրոց յաղքատաց, զորս միանգամ և գտցէ, և ինքն բազմեալ 'ի սեղան՝ մնայր նոցա: Եկն որդին և ասէ. հայր՝ մի ոմն յազգէ մերմէ, որոյ Թափեալ են ոտք, ահա կայ 'ի հրապարակի անդ մեռեալ: Եւ նորա մինչչև էր ճաշակեալ՝ չոգաւ էառ զնա և երեր 'ի տուն իւր մինչև եմուտ արեզակն, և ապա Թաղեաց զնա: Մերձաւորք նորա այսն առնէին զնովաւ՝ և ասէին. արդ ոչ ևս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ. զի վասն որոյ հալածեցաւն՝ դարձեալ եկեալ Թաղէ զմեռեալս:

149. ՏՈՎԵԻԹ ԿՈՒՐԱՆԱՅ:

Ի նմին գիշերի իբրև Թաղեաց Տովբիթ զմեռեալն, և ննջեաց վաստակեալ առ որմոյ Գաւթին, և զերեսս իւր

ոչ ծածկեաց, անգիտացեալ՝ թէ ճնճղուկք նստին յառաստաղս անդ, աչօք բացօք հայեր 'ի վեր, և ձագքն ծրրտէին ջերմաջերմ յաչս նորա. գնացեալ ապա առ բժիշկսն՝ ոչինչ իւիք օգնեցին նմա :

150. ՏՈՎԵԻԹ ԿԱՐԾԷ ԹԷ ԳՈՂՈՒՆԻ ԻՑԷ ՈՒԼՆ :

Կինն Տովբիթայ մանէր և գործէր ձեռօք իւրովք, և տայր տերանց, և նոքա տային նմա զվարձս իւր : Յաւուր միում յաւելին նմա միւս ևս ուլ : Յորժամ եկն առ Ջայրն իւր Տովբիթ, սկսաւ Տովբիթ կագել ընդ նմա, և ասել. ուստի՞ բերեր դու զուլդ զայդ, մի՞թէ գողունի՞ իցէ, տո՛ւր անդր ցտեարս իւր, զի ո՛չ է օրէն ուտել զգողունի : Ասէ ցնա կինն իւր. պատիւ ետուն ինձ վասն վարձուց իմոց : Իսկ Տովբիթ չհաւատայր նմա, և ստիպէր դարձուցանել առ տեարս իւր : Գարձեալ ասէ ցնա կինն. ո՛ւր են արդ ողորմութիւնք քո և արդարութիւնք, զի ահաւասիկ յայտնի եղեն քեզ :

151. ՏՈՎԵԻԹ ԽՐԱՏԷ ԶՈՐԴԻ ԻՐ :

Յաւուր յայնմիկ յիշեաց Տովբիթ զարժաթն՝ զոր եղառ Գարայէլայ, և ասէ 'ի միտս իւր. ես խնդրեցի մահ անձին իմում, ընդէ՛ր ո՛չ կոչեմ զՏուբիա զորդին իմ, և ցուցանեմ նմա զամենայն մինչև մեռեալ իցեմ : Կոչեաց զնա և ասէ. որդեանկ իմ, եթէ մեռանիցիմ ես՝ թաղեսջիր զիս, և մի՛ անարգեր կամ անտես առներ զմայր քոյ, այլ պատուեա՛ զնա զամենայն աւուրս կենաց քոց, և զամենայն ինչ՝ որ հաճոյ է նմա. յիշեա՛ զի բազում ձգունս կրեաց վասն քո՝ յորժամ էիր դու յորովայնին. յորժամ մեռանիցի՞ թաղեսջիր զնա ընդ իս 'ի նմին շերմի : Յիշեա՛ դու զՏէր Աստուած քո զամենայն աւուրս կենաց քոց. մի՛ անցաներ զպատուիրանօք նորա. յընչից քոց տո՛ւր զողորմութիւնս

աղբատաց, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յամենայն չքա-
ւորաց :

Որչափ և իցէ քո՛ ըստ նմին և արասցես զողորմութիւնս,
զի ողորմութիւն փրկէ զմարդն ՚ի մահուանէ. զգոյշ լեր
անձին քում ՚ի պոռնկութենէ. մի՛ առնուցուս դու կին
յազգէ օտարէ. որդեակ՝ սիրե՛ա զեղբարս քո և մի՛ դար-
ձուցաներ զսիրտ քո յեղբարց քոց, յորդւոց և ՚ի դատերաց
ժողովորդեան քոյ առնուլ քեզ ՚ի նոցանէ զկին. վարձք
վարձկանի քոյ առ քեզ մի՛ ազցին, այլ հատո՞ առժամայն.
Լե՛ր խրատեալ յամենայն կեանս քո, և խնդրե՛ա յամենայն
մարդոյ զխորհուրդ. զոր դու ատես՝ մի՛ ումեք առներ :

152. ՏՈՎԻԹ ՊՍՏՈՒԻԲԷ ՈՐԴԻՈՅ ԻՐՈՒԹ ԳԵՆԼ ԱՌ ԳԸՄՅԵԼ

ԵՒ ԱՌԿՈՒԼ Ի ՆՄԱՆԷ ԶՏԱՄՆ ՏԱՂԱՆԻՄ :

Եւ արդ՛ ցուցանեմ քեզ զտասն տաղանդս արծաթոյն՝
զոր եդի ես ՚ի պահ առ Գաբայէլայ ՚ի Հռագաւ յերկրին
Մարաց : Պատասխանի ետ որդին իւր Տուբիա, հայր՝ արա-
րից զամենայն ինչ՝ զոր պատուիրեցեր ինձ, այլ ես զեւրդ
կարացից գտանել զարծաթ, զի ոչ գիտեմ զայրն : Ետ նմա
զգիր առնն՝ առ որում կայր գանձն յաւանդի, և ասէ.
Խնդրե՛ա դու քեզ զայր՝ որ եկեսցէ ընդ քեզ, ես տաց
նմա զվարձս իւր :

153. ՏՈՒԻԼ ԳՏԱՆԷ ԶՀՈՒՓԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿ ՈՒՂԵՑՈՅՑ ԻՆՔԵՆԱՆ :

Գնաց Տուբիա խնդրել ընդ իւր վարձաւոր, և եգիտ
զՀռափայէլ հրեշտակ. ոչ գիտելով Տուբիայ թէ ով իցէ
նա, ասէ ցնա, կարե՞ս դու գալ ընդ իս ՚ի Հռագաւ յերկի-
րըն Մարաց, կամ տեղեակ և խելամո՞ւտ ինչ ես տեղեացն :
Ասէ ցնա հրեշտակն. եկից ես ընդ քեզ, զի ճանապարհին
տեղեակ եմ, և ճանաչեմ զԳաբայէլ զեղբայր մեր : Գար-

ձաւ Տուբիա և պատմեաց հօրն և ասէ, թէ ահաւասիկ գտի զընկեր՝ որ գայ ընդ իս : Ասէ ցնա հայրն. կոչեա՛ զնա առ իս, զի գիտացից՝ թէ հաւատարիմ իցէ գալ ընդ քեզ : Եւ նա կոչեաց զնա ՚ի ներքս և ողջոյն ետուն միմեանց : Ասէ ցնա Տովբիթ. ասա՛ ինձ՝ ո՞րքան պարտ իցէ ինձ տալ քեզ ՚ի վարձ, դրամ մի յաւուր և զոսճիկն, որպէս որդւոյն իմում. յաւելից ևս ՚ի վարձն քո՝ եթէ ողորմութեամբ Աստուծոյ դռնայցէք այսրէն : Հաճոյ թուեցաւ նոցա առնել այսպէս : Ելին և գնացին երկոքեան ՚ի միասին, և շուն պատանեկին ընդ նոսա :

154. ՏՈՎԲԻԹ ՄԻԽԹԱՐԻ ԶԳԻՆ ԻԻՐ :

Իբրև յուղի անկան նորա՝ ասէ լալոյ մայրն Տուբիայ. Տովբիթ՝ զի՞ արձակեցեր զորդեակն ՚ի մէնջ. ո՞չ նա էր ցուպ ծերութեան մերոյ՝ մտանել և ելանել առաջի մեր, արծաթ արծաթոյ մի՛ ժամանեցէ. այլ եղեցի փոխանակ որդեկին մերոյ, քանզի որ պատրաստեալս է մեզ յԱստուծոյ՝ բաւական է մեզ : Ասէ ցնա Տովբիթ. մի՛ լիցի քեզ փրտմութիւն քոյր, զի ողջութեամբ եկեսցէ, և աչք քո տեսցեն զնա. զի հրեշտակ նորա բարի առաջնորդեսցէ նմա, և յաջողեսցէ զճանապարհս նորա, և դարձցի այսրէն ողջութեամբ : Սոյնօրինակ մխիթարէր Տովբիթ զկին իւր, մինչև դադարեաց նա ՚ի լալոյ անտի :

155. ՏՈՒԲԻՆ ԱԶԱՏԻ Ի ԶԿԱՆԷ :

Եկին նորա ՚ի գետն Գիղաթ, և հանգեան անդ առ ափամբն : Պատանեակն Տուբիա էջ լուանալ յեզր գետոյն. վազեաց ձուկն մի ՚ի գետոյ անտի և կամէր կլանել զպատանեակն : Ասէ հրեշտակն ցպատանեակն. բռնո՛ն հար՝ կա՛լ զձուկնդ. կալաւ Տուբիա զձուկն և եհան զնա ՚ի ցամաք : Գարձեալ ասէ ցնա հրեշտակն. բաց դու զփոր ձկանդ,

*

և հան զսիրտ և զլեարդ և զլեղին և պահեա՛ զգուշութեամբ: Արար պատանեակն որպէս և հրամայեաց նմա հրեշտակն. և զձուկն խորովեցին և կերան, և ապա գնացին երկոքեան ՚ի միասին:

156. ՏՈՒԲԻԱ ԳԱՅ ՅԵԿԲԱՏԱՆՍ:

Յորժամ մօտ եղեն Տուբիա և հրեշտակն յԵկբատանս, ասէ ցնա պատանեակն. Ազարիա՛ եղբայր՝ վասն զոր բարձաք զսիրտս, զլեարդս և զլեղիս ձկան: Որում ասէ հրեշտակն. սիրտդ և լեարդդ՝ եթէ ոք ունի զդե կամ զայս պիղծ՝ զայս արժան է ծխել առաջի առնն կամ կնոջն, զի ոչ ևս այլ դիւահարեսցի. և լեղիս՝ եթէ ոք ունի զլուսն յաչս իւր, օծանի սովաւ և բժշկի: Հուսկ ապա իբրև մերձեցան նոքա ՚ի Հոագուէ, ասէ հրեշտակն ցպատանեակն. Եղբայր՝ այսօր ունիմք մեք հանգչել առ Հոագուէլայ, ինքն է ազգական քո, և է նորա դուստր, արդ՝ լուր ինձ. խօսեցայց ես ընդ հօր աղջկանն, յորժամ դարձցուք այսրէն ՚ի Հոագուացուոց անտի՛ արասցուք քեզ զհարսանիս. քանզի գիտեմ ես զՀոագուէլ, զի ոչ տացէ զնա առն օտարի, որ ոչ է մերձաւոր արեան, վասն զի զժառանգութիւնն արժան է քեզ առնուլ քան այլում ումեք:

157. ՏՈՒԲԻԱ ԵՒ ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒՓԱՏԵՒԼ ԱԳԱՆԻՆ Ի ՏՈՒՆ ՀՈՒԳՈՒԿԵԼԱՏ:

Եկին նոքա յԵկբատանս, և մտին ՚ի տուն Հոագուէլայ: Եւ ընդ առաջ նոցա Սառա, ողջոյն ետ նոցա՝ և նոքա նմա, և տարաւ զնոսա ՚ի տուն: Ասէ Հոագուէլ ցկին իւր. տեսանն՞ս զի նման է պատանեակս Տովբիթայ եղբօրորդւոյն իմոյ: Եհարց ցնոսա. ուստի՞ էք՝ եղբարք: Ասեն ցնա. յորդուոցն նսիթաղիմայ եմք, որք գերեալ են ՚ի նի-

նուէ: Ասէ ցնոսա. Ճանաչէ՞ք դուք զՏովբիթ զեղբայրն մեր, կամ ո՞րչ է: Պատասխանի ետուն նորա. Ճանաչեմք, և որչ է: Ասէ Տուբիա՝ հայր իմ է Տովբիթ: Իբրև լուաւ Հոագուէլ՝ նոյնժամայն համբուրեաց զնա, և ելաց յոյժ ՚ի խնդութենէն, և օրհնեաց զնա ասելով. բարւոյ և բարերարի առն որդի: Ի լսելն թէ Տովբիթայ կացին աչք, ելաց ինքն, կին նորա և Սառա գուստր նոցա:

158. ՀՈՒԳՈՒԷԼ ՏԵՅ ԶԴՈՒՍԻ ԻՒՐ ԶՍԱՌԱ ՏՈՒԲԻՍ Ի ԿՆՈՒԹԻՒՆ:

Ընկալաւ Հոագուէլ և հանդոյց զնոսա մեծաւ ուրախութեամբ, եզեն նոցա խոյ մի ՚ի խաշանց, յօրինեալ առաջի նոցա եղին խորտիկս բազումս: Ասէ Տուբիա ցՀոագուէլ. եղբայր, արդ խօսեաց դու վասն որոյ խօսէիրն ՚ի ճանապարհի անդ, զի եղիցի այնպէս: Ասէ Հոագուէլ ցՏուբիա. կե՛ր՝ արբ և ուրախ լեր, զի քե՛զ անկ է առնուլ զմանուկն իմ: Ասէ Տուբիա. ո՛չինչ ճաշակեմ ես աստ՝ մինչև հաստատէք առիս զիրօդ: Ասէ Հոագուէլ. ա՛ռ զնա քեզ ըստ օրինաց, զի դու եղբայր ես աղջկանն, քե՛զ լիցի, այլ ողորմածն Աստուած յաջողեցե՛ ձեզ ՚ի բարիս: Կոչեաց նա զՍառա զգուստր իւր, կալաւ զձեռանէ նորա, և ետ զնա Տուբիա կնութեան, և օրհնեաց զնոսա: Կոչեաց նա զկին իւր, և առեալ ետ աղջկան զամենայն ինչս տան, հաստատէր մուրհակօք և կնքեր. յապա սկսան ուտել և ըմպել և ուրախ լինել:

159. ԳԱԲԵՏԷԼ ԳԱՅ Ի ՀԱՐՍԵՆԻՍ ՏՈՒԲԻՍ:

Արդմենցոյց Հոագուէլ զՏուբիա չգնալ մինչև կատարեսցին աւուրք չորեքտասանք հարսանեաց: Յայնժամ կոչեաց Տուբի զՀոաիայէլ և ասէ. եղբայր, ա՛ռ դու ընդ

քեզ զպատանի ոմն և զերկուս ուղտս, և գնա՛ ՚ի Հոագիւս առ Գաբայէլ, և բե՛ր դու ինձ զարծաթն անախ, և զնա առեալ ընդ քեզ ածցես ՚ի Հարսանիս: Գնաց Հոափայէլ ըստ բանին Տուբիայ առ Գաբայէլ, և ետ նմա զգիր մուրհակին. և նա եբեր նմա զպարկսն կնքօքն հանդերձ, և ետ նմա: Կանխեալ և Գաբայէլի ընդ առաւօտսն՝ եկն ՚ի Հարսանիսն:

160. ՀԱՅՐ ԵՒ ՄԱՅՐ ՏՈՒԲԻԱՅ ԼԱՆ Ի ՂԵՐԵՍ ՅԱՄԵՆԱՆՈՅՆ ՈՐԴԻՈՑ ԻՐԵԱՆՑ:

Տօլբիթ՝ հայրն Տուբիայ զամենայն աւուրս խորհէր ՚ի սրտի իւրում զորդոյ իւրմէ. և յորժամ կատարեցան աւուրք ժամանակին՝ և ոչ եկն, ասէ. արդեօք մեռա՞ւ Գաբայէլ, ոչ որ ետ նմա զարծաթն, և նա ոչ կամի գալ յամօթոյ, վասն այսորիկ տրտում էր յոյժ Տօլբիթ: Ասէ ցնա կինն իւր. կորեաւ մանուկն մեր, զի յամեաց այսչափ: Սկսաւ նա լալ զնա և սգալ՝ ասելով. ոչ ինչ են ինձ պէտք, որդեակ իմ, և ոչ ինչ. այլ ընդէ՞ր բնաւ թողի զքեզ, լոյս աչաց իմոց: Այսպիսի հեծեծանօք ելանէր զօրհանապաղ մայրն Տուբիայ և գայր ՚ի ճանապարհ անդ, ընդ որ գնացինն. ՚ի տուէ զհաց ոչ ուտէր, և ՚ի գիշերի ոչ զաղարէր ՚ի սգալոյ զորդին իւր:

161. ՏՈՒԲԻԱ ՅԵՏՍ ԴԱՌՆԱՑ ԱՌ ԾՆՈՂՍ ԻՒՐ:

Իբրև կատարեցան չորեքտասան աւուրք հարսանեացն, ասէ Տուբիա ցՀոագուէլ. Արձակեա՛ զիս, զի հայր իմ և մայր ոչ ևս ակն ունին տեսանել զիս ՚ի հողոց: Ասէ ցնա աներն իւր. կաց մնա՛ դու աստ առ իս, ես յղեցից զմանկունս առ հայրն քո, որք պատմեսցեն զքէն:

Ասէ Տուբիա. ոչ է այդպէս, այլ արձակեա՛ զիս առ

Հայր իմ: Յարեաւ Հոագուէլ՝ ետ նմա զՍառա զկին նորա
և զկէս ընչից իւրոց, օրհնեաց զնոսա և արձակեաց: Իբրև
մերձեցան նոքա ՚ի ՚իսնուէ, ասէ Հոափայել ցՏուբիա. ո՞չ
գիտես դու ե՛ղբայր՝ որպէս թողեր դու զՀայր քո, ե՛կ յա-
ռաջ անցցուք քան զկինդ, և պատրաստեսցուք ըզտուն,
ան դու ՚ի ձեռին քո զլեղին ձկան. գիտեմ ես՝ զի բաց-
ցին աչք հօր քո, յորժամ օծցես շուրջ զաչքքն զլե-
ղիդ. նա կսկծեցուցէ և հանցէ զլուսն յաչաց նորա և
տեսանիցէ:

162. ՏՈՒԲԻԱՅ ԳԱՅ ՀԱՍԱՆԷ Ի ՏՈՒՆ ԻՒՐ:

Աննա՛ մայր Տուբիայ նստեր և սպասէր ըստ սովորու-
թեանն ՚ի ձանապարհի որդւոյ իւրոյ. իբրև ետես զնա ՚ի
հեռաստանէ՝ գնաց վաղվաղակի առ այրն իւր և պատմեաց
նմա, թէ ահաւասիկ որդին քո գայ, և ընկեր իւր ընդ
նմա: Ընթացաւ Աննա ընդ առաջ, և անկաւ ՚ի վերայ պա-
րանոցի որդւոյն իւրոյ՝ և ասէ. տեսի ես զքեզ որդեակ
իմ. արդ՝ այսուհետև անհոգ մեռայց: Յայնժամ Տովբիթ
ելանէր արտաքոյ առ դրունսն, խարխափէր գլորէր: Արդին
ընթացեալ առ նա յարոյց զնա, և ցանեաց զլեղին յաչս
նորա՝ ասելով. ժուժեան հայրիկ. իբրև եկաց սուղ ինչ,
վաղվաղակի կեղևեցան և անկան լուսունքն յաչաց նորա,
ետես նա զորդին իւր, անկաւ զպարանոցաւ նորա և ելաց՝
ասելով. օրհնեալ ես Տէր Աստուած, և օրհնեալ է ա-
նուն քո յաւիտեանս. օրհնեալ են ամենայն սուրբք քո
հրեշտակք, զի խրատեցեր և ողորմեցար ինձ, զի տեսա-
նեմ զորդի իմ զՏուբիա:

163. ՀԻԵՇԱՍԿՆ ՀՈՒՓԱՅԷԼ ԴԱՌՆԱՅ ԱՆԴՐԷՆ ՅԵՐԿԻՆՍ:

Կոչեաց Տովբիթ զորդի իւր զՏուբիա՝ և ասէ. տե՛ս արդ
որդեակ զվարձս առնդ՝ որ եկն ընդ քեզ. յաւելուլ յայն

արժան է: Ասէ ցնա Տուբիա՝ հայր՝ ոչինչ պակասէ ինձ
եթէ տամ դմա զկէս ընչից իմոց, զոր բերի, զի ած զիս
առ քեզ ողջ, զկինն իմ ողջացոյց, զարծաթն իմ եբեր, և
զքեզ նոյնպէս ողջացոյց: Յայնժամ կոչեաց և զհրեշտա-
կըն և ասէ. ա՛ռ դու զկէսն ամենայնի՝ զոր բերերն: Պա-
տասխանի ետ նոցա հրեշտակն. առաքեաց զիս Աստուած
բժշկել զքեզ և զնուն քո զՍառա. ես եմ Հռափայել
յեթթանց անտի սրբոց հրեշտակաց, որք հանեն մատուցա-
նեն զաղօթս սրբոցն առ Աստուած. և արգ՝ այժմ խոս-
տովան եղերուք Աստուծոյ մերում, զի ելանեմ ես առ
այն՝ որ առաքեացն զիս: Չայս իբրև ասաց՝ այլ ոչ ևս
տեսին զնա:

164. ՏՈՎԲԻԹ ԵՒ ՏՈՒԲԻԱ ՄԵՌԱՆԻՆ:

Տովբիթ էր ամաց յիսուն և ութից՝ յորժամ կացին
աչք նորա. յետ ամաց ութից բացան միւսանգամ աչք
նորա, և կացեալ ամս քառասուն և երկու՝ կոչեաց նա
զորդին իւր և ասէ. որդեակ ա՛ռ դու զորդիս քո, զի ահա-
ւասիկ ես ծերացեալ եմ և մերձ եմ ՚ի մեռանիլ. արգ՝
ե՛րթ դու յերկիրն Մարաց, զի հաւատամ ես, որպէս և
խօսեցաւ Յովնան մարգարէ վասն Նինուէի եթէ կործա-
նեսցի. այլ դու պահեա՛ զօրէնս և զհրամանս. լե՛ր ողոր-
մած և արդար, զի բարի լինիցի քեզ, և թաղեսցես զիս
և զմայր քո ընդ իս: Իբրև զայս ասաց՝ աւանդեաց զՏոբին
՚ի վերայ մահճացն, և թաղեաց զնա որդի նորա փառօք.
և յորժամ մեռաւ Աննա մայր իւր, թաղեաց զնա ևս առ
հօր իւրում: Եւ ապա զնաց Տուբիա կնաւ իւրով և որդ-
ւովք իւրովք հանդերձ յեկբատանս Մարաց առ Հռազու-
էլ աներ իւր. ծերացաւ նա պատուով մեծաւ, և թաղեաց
զաներն և զզոքանչ իւր. և ժառանգեալ զտուն նոցա,

նոյնպէս և ինքն զկնի ժամանակաց ինչ մեռաւ անդ յԵկ-
բատանս Մարաց՝ ամաց հարիւր քսան և եօթնից :

165. ԹԱԳԱՒՈՐԷ ՅՈՒՂԱՅ ԱՐԻԱՍ ԵՒ ԱՍԱ :

Ի մեռանել Ռոբովամայ թագաւորեաց Աբիաս՝ որդի
նորա՝ փոխանակ նորա ՚ի վերայ Յուդայ ամս երիս, և յա-
ւելլաւ ընդ հարս իւր. և փոխանակ նորա թագաւորեաց
Ասա՝ որդի նորա, յորոյ աւուրս հանդարտեաց երկիրն
Յուդայ ամս տասն, որ արար բարի և ուղղութիւն առաջի
Աստուծոյ. ՚ի բաց արար զսեղանս օտարացն, և խորտա-
կեաց զարձանս աստուածոց, և եհան արտաքս զամենայն
պղծութիւնսն յամենայն երկրէն Յուդայ : Յոյր սակս ետ
նմա Աստուած զզօրութիւնս մեծամեծս, որ պատերազմեալ
ընդ Եթովպացիս՝ եհար զնոսա մինչև ոչ մնալ և ոչ մի-
ուում ՚ի նոցունց կենդանի. և առեալ զաւարս բազումս՝
դարձաւ յերուսաղէմ :

166. ՅՈՒՂԱՍՏՈՒՄ ԱՐԻԱՅ ՅՈՒՂԱՅ :

Օ կնի մահուան Ասայի թագաւորեաց Յովսափատ՝ որ-
դի նորա՝ փոխանակ նորա, ընդ որում եղև Տէր. վասն
զի գնաց ՚ի ճանապարհս հօր իւրոյ յառաջինս. պաշտէր
զՏէր Աստուած իւր, և պահէր զամենայն պատուիրանս
նորա. որոյ վասն ետ նմա Տէր զմեծութիւն և զփառս բա-
զումս. որոյ արարեալ ինամութիւն ընդ Աքաաբու՝ ընդ
արքային Իսրայէլի՝ ելին երկոքեան (այսինքն Աքաաբ և
Յովսափատ) զօրութեամբ մեծաւ ընդդէմ Ասորոց, և
պատերազմէին ընդ նոսա : Եւ եղև այր ոմն, որ ելից զա-
ղեղն իւր կորովի, և եհար զարքայն Իսրայէլի ընդ մէջ
Թորոցն և լանջաց, և սպան զնա : Իբրև տեսին իշխանք
կառացն զՅովսափատ, շուրջ եղեն զնովաւ սպանանել

զնա. գոչեաց նա առ Աստուած, և Տէր ապրեցոյց զնա 'ի ձեռաց թշնամեաց :

167. ԱՐՔԱՅԻ ՅՈՒԴԱՅ, ՅՈՒՐԱՄ ԵՒ ՌՔՈԶԻԱՍ:

Մեռաւ Յովսափատ, և թագաւորեաց Յովրամ՝ որդի նորա՝ փոխանակ նորա, որ արար չար առաջի Տեառն, և գնաց 'ի Ճանապարհս թագաւորացն Իսրայէլի. վասն զի գուտոր Աքաաբու էր կին նորա, որ առաւել հետեւեցաւ Աքաաբու աներոյ իւրոյ քան հօր իւրոյ Յովսափատու: Յետ այսր ամենայնի եհար զնա Տէր հարուածովք մեծամեծօք, որոյ ոչ գոյր բժշկութիւն. իբրև եկն ժամանակ աւուրց նորա, մեռաւ 'ի չար հիւանդութեանն յայնմիկ: Ապա բնակիչքն Երուսաղէմի թագաւորեցուցին զկրտսերագոյնն յորդիս նորա զՌքոզիաս՝ փոխանակ նորա: Գնաց սա 'ի Ճանապարհս չարաց, քանզի մայր իւր էր խորհրդակից նմա մեղանչելոյ:

168. ՅՈՒՐԱՍ ԹԱԳԱՒՈՐԻ:

Ի մեռանել Ռքոզեայ՝ մայր նորա Գոգոզիա յարեաւ և կորոյս զամենայն զաւակ թագաւորութեան 'ի տանն Յուդայ. բայց մի ոմն 'ի դստերաց արքայի գողացաւ զՅովաս որդի Ռքոզեայ, և ետ զնա դայեկի. և էր թագուցեալ 'ի տանն Աստուծոյ ամս վեց ընդ դայեկի իւրում: Հուսկ ապա Յովիդայեա քահանայ եհան զորդին արքայի, և եդ 'ի վերայ նորա զթագն և զվկայութիւնն. և օժին զնա 'ի թագաւոր Յովիդայեա և որդիք նորա: Ամաց ութից էր Յովաս յորժամ էօծ զնա Յովիդայեա առաջի հարիւրապետաց և ամենայն ժողովորդեան:

169. ՄԱՀ ՅՈՒՐԱՍԱՅ:

Յովաս էր եօթն ամաց 'ի թագաւորել իւրում, որ ա-

բար ուղղութիւն առաջի Տեառն զամենայն աւուրս Յովի-
ղայեայ քահանայի, և կազմեաց զտուն Տեառն. սակայն
զկնի մահուն Յովիղայեայ շրջեցին զմիտս նորա ի շխանքն,
և թողեալ զՏէր Աստուած հարցն իւրեանց՝ երկիր պա-
գին կոոց: Յայնժամ զգեցաւ հոգի Տեառն Ազարիաս որդի
Յովիղայեայ քահանայի՝ ՚ի մէջ ամենայն ժողովրդեանն՝
և ասէ. այսպէս ասէ Տէր, ընդ է՞ր խոտորեցայք ՚ի պատուի-
րանացն Տեառն. ո՞չ յաջողեսցի ձեզ, զի թողիք դուք
զՏէր. նա՛ լբցէ զձեզ: Յարեան ՚ի վերայ նորա և քար-
կոծեցին զնա ՚ի սրահի տան Տեառն: Եւ սպանաւ Յո-
վաս ՚ի ծառայից իւրոց ՚ի գահոյսն իւր, և ո՞չ թաղեցաւ
՚ի գերեզմանի թագաւորաց:

170. ԱՄԱՍԻԱ ԱՐՔԱՅ ՅՈՒԿԱՅ:

Իբրև մեռաւ Յովաս, թագաւորեաց Ամասիա որդի նո-
րա՝ փոխանակ նորա, որ ժողովեալ զտունն Յուդայ՝ կա-
ցոյց նոցա ըստ տանց տոհմիցն իւրեանց հազարապետս և
հարիւրապետս, որք էին թուով երեք հարիւր հազար զօ-
րաւորք ելեալք ՚ի պատերազմ: Այր ոմն Աստուծոյ եկն
առնա և ասէ. արքայ՝ մի՛ երթիցէ ընդ քեզ զօրդ Խուրայ-
էլէ, եթէ կարծեսցես զօրանալ դոքօք, ՚ի պարտութիւն
մատնեսցէ զքեզ Տէր առաջի թշնամեաց քոց, քանզի ՚ի
Տեառնէ լինի զօրանալ և ՚ի պարտութիւն մատնիլ: Զօրա-
ցաւ Ամասիա, էառ զզօրս իւր և գնաց ընդդէմ թշնամեաց,
և հարեալ զնոսա ՚ի սուր սուսերի՝ մաշեաց զամենեսեան:
Յետ դառնալոյն Ամասիայ ՚ի պատերազմէն, և թող զՏէր
Աստուած իւր, և պաշտէր զաստուածս օտարոտիս. որոյ
սակս բարկացաւ Տէր և ետ զնա ՚ի գերութիւն:

171. ԱԶԻԱՍ ԺԱՌԱՆԳ ԱՄԱՍԻԱՅ:

Թագաւորեաց Ոզիաս զկնի մահուն հօր իւրոյ Ամա-

սիայ, արար նա զուղղութիւն, և պաշտէր զՏէր Աստուած
իւր յաւուրս Զաքարիայ իմաստնոյ երկիւղիւ մեծաւ, զօ-
րացոյց զնա Տէր 'ի վերայ պլլաղգեացն և 'ի վերայ Արա-
բացոց: Իբրև զօրացաւ՝ բարձրացաւ սիրտ նորա առ յա-
պագանել. անիրաւեցաւ 'ի Տէր Աստուած իւր, և եմուտ 'ի
տաճարն Տեառն ծխել խունկս 'ի վերայ սեղանոյ խնկոցն:
Եմուտ զհետ նորա Աղարիաս, և ընդ նմա քահանայք Տեառն
ութսուն, և կացին 'ի վերայ նորա և ասեն. ո՛չ է քո
Ո՛ղիս՝ ծխել խունկս Տեառն, այլ քահանայից սրբեցելոցդ
է ծխել զայդ, ե՛լ արտաքս 'ի սրբութեանց: Եւ եհար
զնա Տէր բորոտութեամբ: Հուսկ ուրեմն ննջեալ Ողիաս
ընդ հարս իւր, թագաւորեաց Յովթամ որդի նորա՝ փո-
խանակ նորա, որ գնայր ուղղութեամբ 'ի ճանապարհս
Տեառն Աստուծոյ իւրոյ:

172. ԱՔԱԶ ԱՐՔԱՅ ՅՈՒՐԱՅ:

Ի մեռանիլ Յովթամայ՝ թագաւորեաց Աքազ որդի
նորա՝ փոխանակ նորա, բայց ո՛չ արար սա ուղղութիւն ա-
ռաջի Տեառն, քանզի զոհէր կոոցն, և ամենայն ժողովուր-
դըն խտորեցան 'ի շաւիղս նորա. վասն որոյ մատնեաց
զնա Տէր 'ի ձեռս արքային Ասորեաց և Սամարացոց, և
եհար զնա, և գերեաց 'ի նոցանէ գերութիւն բազում: Ի
ժամանակին յայնմիկ առաքեաց Աքազ առ արքայն Ասո-
րեայ օգնել նմա, և առեալ զամենայն ոսկի և զարծաթ 'ի
տան Տեառն և 'ի տան թագաւորին և իշխանաց՝ ետ ար-
քային Ասորեստանեայց, սակայն ո՛չ առ 'ի մատուցանել
օգնականութիւն ինչ նոցա, այլ առ 'ի նեղել զնոսա:

173. ԵԶԵԿԻԱՍ ԹԱԳԱՒՈՐԷ:

Եւ եղև իբրև եկաց Եզեկիաս զկնի մահու հօր իւրոյ
Աքազու 'ի թագաւորութեանն իւրում, գնաց զճանապար-

հըս ուղղութեան. յառաջնում ամենանն եբաց զգրունս տան Տեառն, և կազմեաց զնա, և տարաւ 'ի ներքս զբահանայն և զԼևտացիս. յարեալ իւրաքանչիւր այր և սրբեցաւ ըստ հրամանի թագաւորին. մտեալ 'ի տաճար Տեառն՝ պաշտեցին զՏէր Աստուած՝ հանեալ զուարակս: Յաւուր յայնմիկ ապրեցոյց Տէր զընակիչս Երուսաղէմի 'ի ձեռաց արքային Ասորեստանեայց, և հանգոյց զնա շուրջանակի:

174. ԵԶԵԿԻԱ ԲԺՇԳԻ ՅԱՍՏՈՒԾՈՅ:

Յաւուրն յայնոսիկ հիւանդացաւ Եզեկիաս մերձ 'ի մահ: Եւ եմուտ առ նա Եսայի՝ որդի Ամոլսայ՝ մարգարէ և ասէ. այսպէս ասէ Տէր, մեռանիս դու՝ հրաման տուր վասն տան քո: Յայնժամ եկաց նա առ Տէր յաղօթս, և ելաց լալին մեծ: Լուաւ Տէր աղօթից նորա, և բժշկեաց զնա՝ յաւելլով յաւուրս նորա ամս հնգետասան. ետ նմա նշանս, այն է դռնալ ստուերին զտանեքումբք աստիճանօք յետս՝ և յաւուրն երրորդի եմուտ 'ի տուն Տեառն:

175. ԱՍՏՈՒԱԾ ԱԶԱՏԷ ԶՔԱՂԱՔՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ Ի ՁԵՌԱՑ ԱՐՔԱՅԻՆ ԱՍՐԵՍԱՆԻ:

Ի չորեքտասաներորդ ամի թագաւորութեան Եզեկիայ՝ ել արքայն Ասորեստանի զօրօք իւրովք յԵրուսաղէմ աւար հարկանել զայն, եթէ ոչ անսայցեն բանից նորա և ոչ պագանիցեն երկիր աստուածոցն օտարաց: Յաւուր յայնմիկ խնդրեաց Եզեկիա 'ի ձեռն Եսայեայ մարգարէի զօգնութիւն յԱստուծոյ. որոյ խնդրուածոց լուաւ Տէր. և ելեալ 'ի գիշերի հրեշտակ Տեառն՝ սատակեաց 'ի բանակէն Ասորեստանեայց հարիւր ութսուն և հինգ հազարս: Յարուցեալ ընդ առաւօտն՝ գտին զամենայն մարմին մեռեալ: Իբրև ետես զայն արքայն Ասորեստանի՝ զահի հարեալ դարձաւ 'ի փախուստ 'ի հայրենիս իւր:

Յաւուրն յայնոսիկ հիւանդացաւ Եզեկիաս մերձ 'ի մահ:

176. ՄԱՀ ԵՋԵԳԻԱՅ:

Արքայն Եզեկիա զերծեալ յամենայն վտանգից՝ զվերջին առուրս իւր անցոյց 'ի խաղաղութեան, և վասն ուղղութեան սրտի նորա առ Աստուած՝ ամենայն ինչ յաջողեցաւ նմա. և Տէր էր նմա օգնական: Սա արար զամենայն առուրս կենաց իւրոց զարգարութիւն և զճշմարտութիւն. յամենայնի յուսացաւ 'ի Տէր, և նա հասանէր նմա 'ի Թիկունս, որ թագաւորեալ 'ի վերայ Յուդայ ամս քսան և ինն՝ ննջեաց ընդ հարս իւր. զոր լացեալ ամենայն ժողովորդեան՝ թաղեցին 'ի գերեզմանի թագաւորաց:

177. ԶԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆՆ ԵՋԵԳԻԱՅ ԱՐՔԱՅԻ ԺԱՌԱՆԳԻ ՄԱՆԱՍԷՍԻ ՈՐԴԻ ՆՈՐԱ:

Թագաւորեալ Մանասէի 'ի վերայ Յուդայ՝ փոխանակ հօր իւրոյ Եզեկիայ, եթող զՏէր Աստուած իւր զճշմարիտ. և կանգնեալ զձեռագործս երկիր եպագ նոցա: Ի վերայ այսր ամենայնի բարկացաւ Տէր, և առաքեաց առ նա զԵսայի մարգարէ, զի դարձցի նա յանօրէնութենէ իւրմէ. սակայն ոչ ինչ ազդեաց նմա այն, այլ յանուղղութիւնս իւր յաւել ևս զխտութիւն, և հրամայեաց սրտմտութեամբ իւրով սղոցել զմարգարէս սղոցիւ փայտեայ: Յոր սակս էած Տէր 'ի վերայ նորա զեշխանս զօրուն արքայի Աորեստանեայց. և կալեալ զնա կապեցին կապանօք, և տարան 'ի Բաբելոն: Իբրև վտանգեցաւ՝ ինդրեաց զերեսս Տեառն Աստուծոյ իւրոյ, և խոնարհեցաւ յոյժ յերեսաց Աստուծոյ, յաղօթս եկաց առ նա. և լուաւ գոչման նորա Տէր, և դարձոյց զնա յերուսաղէմ՝ 'ի թագաւորութիւնն իւր: Յայնժամ ծանեաւ նա, եթէ Տէր՝ նա է Աստուած:

178. ԹԱԳԱՒՈՐԷ ԱՄՈՎԱՍ, ՈՐՈՅ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՓՈՒԹՈՎ ՏԻՐԷ

ՅՈՎԱՄԵԱՍ:

Ամուսն թագաւորեաց փոխանակ հօր իւրոյ Մանասէի: Սա արար չար առաջի Տեառն՝ երկիր պագանելով կոռոցն և զոհելով նոցա. ո՛չ խոնարհեցաւ որպէս հայր իւր Մանասէ, այլ յաճախեաց ՚ի մեղս. և յարեան ՚ի վերայ նորա ծառայքն իւր և հարեալ սպանին զնա ՚ի տան իւրում. զորոյ զժառանգութիւնն էառ Յովսիաս, և թագաւորեաց ուղղութեամբ. որ ո՛չ խոտորեալ ո՛չ յաջ և ո՛չ յահեակ սկսաւ յերկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ սրբել զՅուդայ և զԵրուսաղէմ, կործանելով զսեղանս կոռոց: Սակայն ՚ի վախճանի հակառակ եկաց պատուիրանի Տեառն, և գնաց ՚ի պատերազմ ընդդէմ Եգիպտացւոց, զի պատուիրեալ էր նմա յԱստուծոյ չափտերազմել: Եւ նա, և ընկալեալ հարուածս յաղիզնաւորաց անտի՛ վերաւորեցաւ, և զկնի սուղ ինչ ժամանակաց մեռաւ. և թաղեցին զնա ընդ հարս իւր:

179. ՅՈՎԱՒԵԱԶ ԵՒ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՐԷ ՆՈՐԱ ԱՐԲԱՅԷ ՅՈՒԴԱՅ:

Իբրև մեռաւ Յովսիաս, եթող զժառանգութիւնն՝ երից որդւոց իւրոց, յորոց Յովաքաղ միայն թագաւորեաց ամիսս երիս, և կալաւ ՚ի գերութիւն յարքայէն Ասորեստանեայց: Փոխանակ Յովաքաղու եկաց Եղիակիմ ՚ի թագաւոր, որոյ եղբայրն Յովաքաղ տարեալ եղև յԵգիպտոս, և մեռաւ անդ. և փոխանակ Եղիակիմայ թագաւորեաց Յեքոնիա որդի նորա, յորոյ ՚ի ժամանակս թագաւորութեան նաբուզոդոնոսոր արքայն Բաբելացւոց աւերեաց զԵրուսաղէմ, և զժողովուրդն տարաւ ՚ի Բաբելոն, և ՚ի վերայ սակաւաթիւ ժողովորոց մնացորդաց կացոյց զՍեդեկիաս թագաւոր: Ապա յապստամբել Սեդեկիայ ՚ի նաբուզոդո-

նոսորայ արքայէ, դարձաւ նա և յաւարի էառ զքաղաքն, և այրեաց զտուն Տեառն և զպարանսն 'ի նմա, գերելով ըզմեացորդսն 'ի Բաբելոն:

180. ԴԱՆԻԷԼ ԵՒ ԸՆԿԵՐՔ ՆՈՐԱ, ՈՐՔ ԿՐԹԵՅԱՆ ԱՌ ՆԱԲՈՒ-

ԳՈԴՈՆՍՈՐԱՅ ԱՐՔԱՅԻ:

Ի գերութիւնս՝ զորս էած արքայն Նաբուգոդոնոսոր 'ի Բաբելոն, էին մանկունք յոյժ գեղեցիկք երեսօք և մտավարժք հանճարով, որոց անուանք են Դանիէլ, Անանիա, Միսայէլ և Աղարիա. որոց հրամայեաց արքայն զի ուսանիցին զգարութիւն և զլեզու քաղդէացւոց, և ապա կացցեն 'ի տաճարի առաջի թագաւորին, և կարգեաց նոցա զուտճիկս, և հրամայեաց սնուցանել զնոսա 'ի սեղանոյ իւրոյ՝ յորմէ ինքն ուտէր և ըմպէր: Եղին նոքա 'ի մտի իւրեանց չճաշակել 'ի սեղանոյ թագաւորին և ո՛չ ըմպել, և աղաչեցին զներքինսպետն զի տացէ նոցա ունդս՝ և կերիցեն, և ջուր՝ զի արբցեն. յետ կատարելոյ աւուրց տասանց՝ երևեցան երեսք նոցա բարիք և հզօրք մարմնով քան զամենայն մանկունսն, որք ուտէին 'ի սեղանոյ թագաւորին:

181. ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ ԱՆԿԱՆԻՆ Ի ՀՆՈՑ ՀՐՈՑՆ ԲՈՐԲՈՒՔԵԼՈՑ:

Արքայն Նաբուգոդոնոսոր արար պատկեր ոսկի, և կանգնեաց զայն 'ի դաշտի անդ, և հրամայեաց ամենեցուն գալ 'ի նաւահատիս պատկերին, սպառնալով զմահ այնոցիկ ամենեցուն՝ որք ո՛չ անկեալ երկիր պագանիցեն նմա: Անանիա, Միսայէլ և Աղարիա, որք և Սեդրաք, Միսաք և Աբեղնագով, լաւ համարեցան մեռանել քան պաշտել զդիս նորա, և զմիակ արարչին զփառս ընծայել պատկերին ոսկւոյ: Յայնժամ լի՛ եղև սրտմտութեամբ Նաբուգոդոնոսոր 'ի վերայ նոցա, և հրամայեաց զՏնոցն եօթնպատիկ ջեռու-

ցանեւ յոյժ առաւել քան զառաջինն, և կապեալ զնոսա արկանեւ ՚ի հնոց բորբոքեալ, զի այրեսցին մինչև ՚ի վախճան. այլ երեքին նորա օրհնէին և գովէին զՏէր Աստուած ՚ի մեջ հրոյն, քանզի ո՛չ տիրեաց հուրն ՚ի մարմինս, և հեր գլխոյ նոցա ո՛չ խանձատեցաւ, և ո՛չ վարտիք նոցա այլագունեցան, և հոտ հրոյ ո՛չ գոյր ՚ի նոսա:

182. ԿԱՆԻԷԼ ԱՆԿԱՆԻ Ի ԳՈՒԲ ԱՌԻԻԾՈՅ:

Արքայն Գարեհ կացուցեալ էր զԴանիէլ հրամանատար ՚ի վերայ Տէրութեան իւրոյ. յոյր սակս նախանձէին այլ նախարարք և խնդրէին պատճառս զԴանիէլէ, և ո՛չ ինչ կարէին գտանել զնմանէ, քանզի հաւատարիմ էր յոյժ: Յայնժամ հրամանատարք և նախարարքն խորհուրդ արարին և ասեն ցարքայ. հաստատեսցի արքունի հաստատութեամբ ուխտ մի, զի եթէ խնդրեսցէ ոք զխնդրուած ինչ յԱստուծոյ կամ ՚ի մարդկանէ մինչև յաւուրս երեսուն բաց ՚ի քէն, անկցի ՚ի գուբ առիւծուց: Իբրև զիտաց Գանիէլ, թէ կարգեցաւ հրամանն, երիս ժամս յաւուրն զներ ծունր՝ և կայր յաղօթս, և չարախօսեցին զնմանէ առ թագաւորն. որոյ լուեալ զբանն՝ տրտմեցաւ յոյժ, և ջանայր փրկել զԴանիէլ: Գարձեալ մատեան առ նա և ասեն. արքայ՝ չէ՛ օրէն շրջել զհրաման և զուխտ Մարաց և Պարսից, զոր դու հաստատեսցեր: Յայնժամ հրաման ետ արքայն, և արկին զԴանիէլ ՚ի գուբն առիւծուց, զորոց բերանս եխից Աստուած, և ո՛չ ինչ վնասեցաւ նա: Ընդ այս զարմացեալ արքայի՝ զուարճացաւ յանձն իւր, և հանեալ զԴանիէլ ՚ի գբոյ անտի առիւծուց՝ հրամայեաց ընկենուլ յայն զարսն չարախօսս զնմանէ:

183. ԱՐԲԱՅՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՌՆՈՒ ԻՒՐ ԿՆՈՒԹԵԱՆ ԶԵՍԹԵՐ:

Այր այր մի Հրէայ, և անուն նորա Մուրթքէոս, որ էր

գերի եկեալ յԵրուսաղէմէ, զոր գերեաց Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց: Էր սնուցեալ նորա զմանուկ որք՝ զգուստր եղբօր Տօրն իւրոյ, որոյ անուն նորա Եսթեր: Ածան առ արքայն աղջկունք կոյսք՝ գեղեցիկք տեսլեամբ, յորոց միջի Տաճոյ թուեցաւ յոյժ նմա Եսթեր, որ եգիտ շնորհս առաւել քան զամենայն կանայսն, և եդ ՚ի գլուխ նորա զթագ կանանց, և էառ զնա իւր կնուծեան: Յետ այսորիկ փառաւորեաց արքայ զՀաման, և բարձրացոյց զնա յառաջին աթոռ քան զամենայն սիրելիս իւր. և ամենքին որ միանգամ էին ՚ի տան թագաւորին՝ երկիր պագանէին նմա, զի այսպէս Տրամայեալ էր թագաւորն առնել: Այլ Մուրթքէ ոչ պագանէր նմա. զորմէ ամբաստան եղեն առաջի Համանայ. և Համան բարկացաւ յոյժ և խորհեցաւ կորուսանել զՀրէայսն, որ ընդ թագաւորութեամբն Արտաշէսի. և Տրաման առնէր ՚ի թագաւորէն: Իբրև գիտաց Մուրթքէ զիրսն՝ պատառեաց զպատմութեան իւր, և զգեցաւ զքուրձ. և ցանեալ մոխիր զգլխով իւրով՝ եկն մինչև ՚ի դրունս տանն արքունի աղաղակ բառնալով. որոյ ձայնն ազդեալ յունկն Եսթերայ՝ եհարց զնաժիշտսն, թէ զի՞նչ ձայն լսեմ. և նոքա պատմեցին նմա: Խուովեցաւ յոյժ. իբրև լուաւ վասն Տրամանին, և պատուիրեաց Մուրթքէի աղաչել ինդրուածովք զՏէր, նոյնպէս և ինքն եկաց յազօթս:

184. ՀԱՄԱՆ ԿԱՆԻ ԶՓՆՅԷ:

Յաւուրն երրորդի իբրև դագարեաց Եսթեր յազօթից առ Աստուած, մերկացեալ յինքենէ զՀանդերձ սգոյն՝ զգեցաւ զծիրանիսն իւր, և եղև կարի գեղեցկատեսիլ. մըտեալ առ թագաւորն՝ անկանէր առ ոտս նորա, և աղաչէր զնա գալ նմա ՚ի կոչունս իւր, զոր առնելոց էր Համանաւ:

Հանդերձ: Նոյն ժամայն կատարեաց արքայն զինդրուածս նորա, և եկն ինքն և Համան ընդ իւր 'ի կոչունսն: Մինչդեռ ըմպէին զգինի, ասէ արքայն ցեսթեր. զի՞նչ կամիս տիկին՝ ասա՛, զի զոր ինչ և խնդրեսցես յինէն՝ տաց քեզ, նա՛ մինչև ցկէս թագաւորութեանս: Պատասխանի ետ Եսթեր. եթէ գտի շնորհս առաջի քո արքայ՝ տացի անձն մի խնդրոյս իմում, զի մատնեցաք ես և ժողովուրդ 'ի կորուստ՝ արդ ո՛չ է առն բանսարկուի արժան 'ի տան թագաւորի լինել: Ահա այրս թշնամի Համան, որ չարս է սա արար, եթէ կամք իցեն քեզ, առաքեա՛ զՏրեշտակս դարձուցանել զՏրովարտակսն, որք գրեցանն 'ի Համանայ՝ կորուսանել զՀրէայսն, որք 'ի քում թագաւորութեան: Եկաց մի ոմն 'ի ներքինեաց անտի և ասէ ցարքայ. ահա Համան փայտ մի կազմեաց վասն Մուրթքէի սիրելոյ արքայի, և կանգնեաց զնա 'ի տան իւրում յիսուն կանգնեան: Ասէ թագաւորն. խաչեսցի 'ի վերայ նորա:

185. ՊԼԽՃԸՆ ԳԵՐՈՒԹԵԱՆՆ ԲԼԲԵԼԱՅԻՈՅ Ի 3470, ԱՄԻ ԸԶ-
ԿՆԻ ՍՏԵՂԾՄԸՆ ԱՇԽԼԻՉԻ:

Պերութիւնն Բաբելացւոց տեւր զամս եօթանասուն, որպէս և զուշակեցաւ 'ի մարգարէից. զկնի ժամանակաց ինչ Վիւրոս արքայն Պարսից մարտ եղեալ ընդ արքային Բաբելացւոց՝ յաղթեաց նմա: Եւ ապա հրամայեաց ամենայն ժողովրդեանն Յուդայ՝ չուել 'ի հայրենիս իւրեանց և նորոգել զտաճարն, և զամենայն սպաս տաճարին՝ զոր տարեալ էր արքայն Նաբուզոդոնոսոր, դարձոյց նոցա անդրէն: Եւ ամենայն ժողովուրդն ընդ առաջնորդութեամբ Զօրաբաբէլի դարձան յԵրուսաղէմ, և արկին զՏիմն նորոյ տաճարի. բայց ո՛չ փոյթ հասանէր գործն այն 'ի կատար, զի մօտակայ ազգք արգել լինէին շինութեանն այնորիկ:

186. ՊԻՃԱԿ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՑ ԶԿԵՒԻ ԴԱՌՆԱԼՈՅՆ ՆՈՑԱ Ի ՀԱՅ-
ԲԵՆԻՍ ԻՐԻՆԱՆՑ:

Իսրայէլացիք վերագարձեալ 'ի հայրենիա իւրեանց՝
զամենայն ինչ 'ի կարգի եզին, սակայն կառավարութիւնն
յանձնեալ էր քահանայապետից. զառաջինն տային հարկ
ամի ամի Պարսից, և ապա Յունաց. զկնի յաղթուածեան
Գարեհի յԱղեքսանդրէ, ոչ ոք բնաւ 'ի հայրենի կրօնից
իւրեանց անգամ գտանէր նուազեալ. որոյ աղագաւ իսկ
նեղեալ և տանջեալ լինէին 'ի թագաւորաց բազմաց, մա-
նաւանդ յԱնտիոքայ արքայէն Ասորոց:

187. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ:

Յետ բաղում ժամանակաց առաքեաց արքայն Անտիո-
քոս զունն ծերունի, ստիպել տազնապել զՀրէայնն անցա-
նել զհարցն զօրինօք, և յօրէնան Աստուծոյ այլ մի՛ ևս
յամենալ: Կանգնեաց զարձան սնտոի չաստուածոց՝ յամե-
նայն քաղաքս Յուզայ, և կողոպտեալ զամենայն տաճարս
Երուսաղէմի՛ եթող յամայութեան, և հրամայեաց այրել
զսրբազան գրեանս. և եթէ ոք չհնազանդէր հրամանի նո-
րա, տանջէր չարաչար պատուհասիւք. 'ի սուր սուսերի
հանեալ զանթիւ բազմութիւնս արանց՝ ամայի առնէր ըզ-
քաղաքն. և այսպիսի դառն տանջանօք ընդ բռամք նուա-
ճէր զամենեւին:

188. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԵՂԻԱԶԱՐՈՍԻ ՅՈՒՌՏԻՆՑ ՏԵԱՌՆ:

Եղիազարոս՝ այր մեծ, և ընդ առաջինսն 'ի գնդի անդ,
անցեալ զաւուրբք և ծեր հասակաւ, գեղեցիկ երեսօք,
ածեալ գայլ 'ի բերան՝ ստիպէին ուտել զխողենի. նորա
'ի մտի եղեալ չառնել զայն հաստատուն սրտիւ՝ յանձն

էառ ընդունիլ զմահ անուամբ քաջի, քան ունել զխղճալի կեանս 'ի սողտանս ընկերաց: Իսկ որ եկեալ էին պատրաստ առ տկարութեան մտացն վասն անձնասէր բարոյից՝ զոհից 'ի պաշտօն, ծանօթ ևս էին առնն աւագութեան. առեալ մեկուսի իւրեանց տկարութեան մտօքն զհաստատեալ միտսն՝ 'ի հրապոյրս ցոփութեան դարձուցանել ջանային: Յանձն առ ասեն զհրաման թագաւորիդ, և քեզ այլ միս մատուցցուք, զի լուծցես զկարծիսն, և 'ի մահուանէդ ապրեսցիս:

189. ՄԼԷ ԵՂԵԱԶԸՐՈՍԻ:

Սա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եղեալ, զարժանի հասակին ըստ ծերութեան մեծութեանն, ըստ զուարթածաղիկ ալեաց զուարճացելոց, ըստ գեղեցիկ 'ի մանկութենէ մինչև յաւագոյթ սննդեանն, մանաւանդ ըստ Աստուածագործ սրբութեան օրէնսդիր կրօնից, արագ արագ առնէր զպատասխանիւ. ոչ արժան՝ ոչ պատշաճ՝ ասէ՝ մերոյ չափոյ հասակի՝ կեղծաւորութիւն մտանել ընդ սրբութեան խոստովանութիւն, իցեն բազումք 'ի մանկուոյ այտի՝ որ ընդ ակամբ հայիցին. կարծիս 'ի մտի գնիցեն և ասիցեն, եթէ Եղեազարոս՝ իննսնամեան անցեալ ծերութեամբ՝ հասեալ 'ի դուռն վախճանի, յայլազգութիւ դարձաւ. նոքա վասն իմ կեղծաւորեալ դայթակղեսցին, և զայս խիղճ մտաց և կեղտ անուն ծերութեանս աշխարհի թողից. վասն այսորիկ քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի, զի արժանի իմոյ ծերութեանս երևեցայց, և օրինակ բարեաց և առաքինութեան մանկուոյ թողից, զի յօժարութեամբ և քաջութեամբ 'ի վերայ սրբութեան օրինացն՝ մահու չափ ջանալ մարթացեն: Չայս ամենայն իբրև ասէր՝ ինքնակամ դիմագրաւ կամակար 'ի վիշտս

մահուն և տանջանացն դիմէր : Զայս օրինակ պատերազմեալ՝ յաշխարհէ փոխեցաւ :

190. ԵՕԹՆ ԵՂԲԱՐԲ ՀԱՆԴԵՐՁ ՄԱՐԲՆ ԻՌԵԱՆՑ ՓՈՒԻՆ ՅԱՍՏԻ ԿԵՆԱՅ ԴԱՌՆԱԴԱՌՆ ՏԱՆՋԱՆՕԲ :

Պէ՛տք եղև եղբարս եօթն մարք նոցա հանդերձ ածեալ յատեան թագաւորին, ուրանօր ՚ի խոշտանգանս գանի տազնապէին ուտել զխողենի : Մի ՚ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն և սկսաւ խօսել . զե՞ կայք անցեալ, կամ զմեզ զի՞նչ հարցանելոց էք . մեք պատրաստ եմք ՚ի մեռանել՝ քան անցանել ընդ օրէնս հայրենիս : Բարկութեամբ սրտմտութեան լի եղև թագաւորն, և հրամայեաց ջեռուցանել զտապալս և կաթսայս, և պատրաստել անիւս և զպէսպէս գործիս տանջանաց . զորս իբրև վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին, հրամայեաց զնահատակն յառաջ կացուցանել . և նախ՝ զլեզուն կտրեցին, և զգլխոյն մորթն զերեսօքն դարձուցին . ապա զոտս և զձեռս առաջի մօրն և եղբարց ծայրաքաղ առնէին : Եւ ապա իբրև ՚ի բանից և ՚ի ձեռաց անպիտան առնէր՝ հրամայէր կենդանոյն ՚ի տապակսն ջեռուցեալս իջուցանել : Սկսան եղբարքն ընդ միմեանս մարբն հանդերձ մխիթարել և ասել . քաջութեամբ մեռցուք, զանուն և զողիս ժառանգեսցուք . հայի Տէր Աստուած ՚ի ճգնութիւն պատերազմիս մերոյ, և ՚ի ծառայս իւր մխիթարի : Իբրև առաջինն օրինակ զայս յաշխարհէ փոխեցաւ, զերկրորդն ՚ի տեղի տանջանաց մատուցանէին, և զգլխոյն մորթն վարսիւքն հանդերձ զերեսօքն արկանէին, և անդէն հարցանէին . կերիցե՞ զխողենի միս, մինչև ամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է : Նա ետ պատասխանի իւրեանց բարբառովն՝ և ասէ, ո՛չ . վազն այսորիկ և սա ՚ի նոյն տանջանսն տանջեալ վախճանէր :

Իբրև յողուցն պարզել ապաստան եղև, սկսաւ խօսել և
ասէ ցԹագաւորն. այ հպարտ, դու զմեզ յայսց կենաց աշ-
խարհիս կարծել համարիս, իսկ այն՝ որ աշխարհաց Թագա-
ւորն է, Թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, 'ի կեան-
սըն յաւիտենից 'ի միւսանգամ ծննդեանն ժամանակի՝ կե-
նաց 'ի կեանս դարձուցանէ: Յետ սորա զերրորդն անեալ՝
զէզուեն խնդրէին. զոր նա վաղվաղակի մատուցանէր, և
զձեռնս քաջասիրտ տարածանէր, ուրանօր ինքն Թագաւորն
իսկ զարմացեալ ընդ ուշի մտացն պատանուոյն, և ընդ քա-
ջութեան սրտի, զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ: Եւ
սա իբրև փոխէր, զջորրորդն 'ի տեղի մատուցեալ՝ 'ի նոյն
տանջանսն չարչարէին. իբրև շունչն վախճանի հասանէր,
խօսել սկսաւ այսպէս. մեզ լաւ է զի փոխիմք աստի 'ի
մարդկանէ, և յուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեանն
յարութեան մեռելոց, քան քեզ 'ի կենդանիս, զի արգե-
լեալ փակեալ է 'ի քէն յարութիւն մեռելոց: Յետ սորա
զհինգերորդն մատուցին 'ի տանջանս, որ իբրև զաչս 'ի
վեր եբարձ՝ հայեցաւ ընդ Թագաւորն, սկսաւ խօսիլ ընդ
նմա և ասէ. իշխանութիւն առեալ մարդկան, և դու մարդ
մահկանացու՝ գործես զինչ և կամիս, բայց մի՛ 'ի վատու-
թիւն ինչ և զմեր ազգս հատանիցես, կամ լքեալ թողեալ
ինչ 'ի ձեռաց Աստուծոյ համարիցիս. կաց՝ մնա դու՝ և
տեսցես զգորութիւնս մեծամեծ սքանչելեացն, որպէս զի
զքեզ և զազգատոհմն քո չարաչար հարուածովք չարչա-
րիցէ: Յետ այսորիկ անեալ եղև վեցերորդն. և իբրև մերձ
եղև 'ի մեռանիլ՝ ասէ. զե՞ մոլորեալ ես տարապարտուց,
ընդ մեզ այս անցք՝ որ անցանեն, վասն մեր մեղաց, զի մե-
ղանչեմք առ Աստուած արժանի զարմանալոյ. բայց դու՝
մի՛ ակն ունիցիս ողջանգամ բարեմիտ ապրել Աստուածա-
մարտ մատուցեալ: Եւս առաւել բարեաց յիշատակաց ար-

ժանի՝ մայրն սքանչելի, որ զայնպիսի զեօթն որդիս յիւրմէ
կորուսեալ ՚ի միում աւուր՝ վասն յուսոյն Աստուծոյ,
զսիրտն և զմիտսն զիգուծեան առնապէս վառեալ՝ զմի մի
ի նոցանէ քաջալերելով մխիթարէր իւրեանց բարբառովն:
Անտիոքոս թէպէտ և արհամարհեալ զինքն համարեցաւ
վասն բարբառոյ նահատակացն, սակայն մինչդեռ ողիքն
կրտսեր մանկանն առ իւր կային, սկսաւ ոչ միայն բանիւք
մխիթարուծիւն մատուցանել, այլ և արդեամբք հաստա-
տել, ՚ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցանել, և
երանելի առնել յաշխարհի. միայն թէ ՚ի նախնեաց օրի-
նացն փոխեսցի, գործ ՚ի ձեռին տալ՝ և բարեկամ առնել
Թագաւորաց: Իբրև ետես թէ ամենեկն պատանին ՚ի բանս
Թագաւորին ոչ խոտորեցաւ, կոչեաց նա զմայրն, և աղա-
չէր լինել պատանւոյն կենաց նորին խորհրդական՝ զի
փրկեսցի. իբրև կարի ստիպեաց՝ յանձն էառ խօսել ընդ
որդւոյն, խոնարհեցաւ ՚ի նա, սկսաւ ծաղո առնել զամ-
բարտաւան Թագաւորն և ասէ. ողորմեաց ինձ որդեակ իմ.
Եւ շ լինցի քեզ՝ զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, և
սնուցի զքեզ զերիս ամս ՚ի գիրկս ստեամբք, և հասուցի
զքեզ այդչափ մեծութեան հասակի. արդ՝ աղաչեմ զքեզ
որդեակ, մի՛ զարհուրիր դու ՚ի չարաշուք դահճէ այտի,
այլ եղբարց քոց արժանի եղեալ՝ ընտրեա՛ զմահ քան ըզ-
կեանս աշխարհի, զի ընդ քո եղբարս ընկալայց զքեզ ՚ի
ձեռս ողորմութեան մեծին Աստուծոյ: Եւ մինչդեռ մայրն
զայսպիսի մխիթարութիւնս մատուցանէր ՚ի միտս հաստա-
տունս, սկսաւ խօսիլ պատանեակն. ո՞ւմ կայք, զե՞ յապա-
ղէք. չե՛մ ինչ լսելոց հրանանի Թագաւորի, այլ հրամա-
նաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց: Այլ դու՛
որ զամենայն չարիսդ նիւթեցեր ՚ի վերայ որդւոցդ Եբրա-
յեցւոց, ոչ ասրեսցիս ՚ի ձեռաց Աստուծոյ. անօրէ՛ն դու,

ապստամբ, պիղծ, վատ արանց. զե՞ զուր հպարտանաս
յուսով քոյով սնոտեալ 'ի վերայ ծառայից նորա, սակայն
չես ապրելոց յամենազէտ յամենակալ դատաստանացն Աս-
տուծոյ: Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօթանե-
ցունց սրտաբեկ լինէր թագաւորն. առաւել 'ի վերայ
կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին, սակայն և
սա անարատութեամբ և սրբութեամբ յուսացեալ 'ի Տէր՝
մեկնեցաւ յաշխարհէ: Ձհետ որդւոցն և մայրն երանելի՝
'ի նոյն օրէնս կատարեցաւ:

191. ՄԱՍԸԹԻ, ԲԱՐԵՊԱԸՏՈՒԹԻԻՆ ԵՒ ԱՐՈՒԹԻԻՆ ՈՐԴԻՈՑ ՆՈՐԱ:

Յաւուրս ժամանակացն այնոցիկ համբարձաւ Մատաթի,
որ էր յԵրուսաղէմ՝ քահանայ, և եկն նստաւ յամուրս այ-
րիցն: Եին նորա հինգ որդիք, Յուդա, Յովնաթան, Սի-
մէոն, Եղիազար և Յովհաննէս: Իբրև ետես նա զՏայ-
հոյութիւնսն՝ որ 'ի Հրէաստան և 'ի մէջ Երուսաղէմի,
սկսաւ ողբալ յանձն իւր՝ ասելով. վայ ինձ. ընդէ՞ր բնաւ
ինձ տեսանել զբեկումն ժողովոգեան իմոյ և զլաւերումն
սրբոյ քաղաքին Երուսաղէմի: Ձկնի նորա իջին բազումք,
որք խնդրէին զարդարութիւնս և զիրաւունս յանապատ
անդր, զև խստացեալ էին չարիք 'ի վերայ նոցա: Եկին
հասին 'ի թագաւորէ անտի, ստիպաւ տազնապէին զապրս-
տամբութիւնն և դառնալ յօրինաց: Քաջացաւ արիացաւ
նա, յանձն էառ զմահ վասն օրինաց իւրոց, և զօրաժողով
լեալ՝ զհետ խաղաց զօրաց Ասիացւոց եղբարբքն և բարե-
կամօքն հանդերձ. հասանէր հարկանէր աւերէր զմեհեան-
սըն, կործանէր զբազինսն, և զօրանայր 'ի վերայ սահմա-
նացն Իսրայէլացւոց, հալածական անէր զորդիսն հպար-
տութեան:

192. ՄԱՀ ՄԱՏԱԹԻԱՅ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾ ՅՈՒԴԱՅ ՄԱԿԱՐԷԻ:

Իբրև մերձեցան աւուրք Մատաթեայ մեռանելոյ, կոչեաց զորդիս իւր, և խօսեալ ընդ նոսա բանս խրատականս, կարգեաց զՅուդա Մակաբէ զորդի իւր՝ սպարապետ զօրավար զօրաց, և ինքն փոխեցաւ առ Հարս իւր: Համբարձաւ Յուդա, որ անուանեալ կոչէր Մակաբէ, որդի նորա ընդ նորա, որում ձեռնտու և օգնական լինէին եղբարք իւր. զգեցաւ զէն իբրև Հսկայ, և Հանդերձեցաւ ՚ի զարդ պատերազմի. մղէր զմեծամեծս ՚ի պատերազմի, և Հովանի լինէր ամենայն գնդին իւրոյն նիզակաւ: Հապա զօրաժողով լինէր Ապողոնիոս, մի ոմն ՚ի զօրավարաց Անտիոքայ, գալ տալ պատերազմ: Իբրև ետես Յուդայ՝ ել ընդ առաջ նորա, և Հար սպան զԱպողոնիոս, և զբազումս ՚ի զօրաց նորա վիրաւորեաց, և զամուր քաղաքն նոցա աւար Հարեալ՝ էառ զկապուտ և զաւար նորա, և զսուսեր Ապողոնեայ առեալ Յուդայ՝ այնու իսկ և Հար զզօրս նորա:

193. ՅՈՒԴԱ ՄԱԿԱՐԷԻ ՆՈՒԱՃԻ ՁՆԻԿԱՆՈՎՐ:

Ի լսելն Անտիոքոսի կայսեր զբանս զայս, բարկացաւ յոյժ, և Հրամայեաց Լիւսիասայ աւար Հարկանել զերկիրն Յուդայ, և զամենայն ցեղս նոցա ջնջել: Լիւսիաս ընտրեաց զՆիկանովր և զԳորգիաս ելանել ՚ի մարտ ընդդէմ Իսրայէլի, և ետ նոցա զբառասուն Հաղար Հետեակս, և եօթն Հաղար Հեծեալս, յապականութիւն դարձուցանել զերկիրն Հրէաստանի ըստ Հրամանի Թադաւորին. խաղացին գնացին ամենայն զօրօքն Հանդերձ, և բանակեցան մերձ ՚ի քաղաքն Երուսաղէմ: Յուդա՝ որ յուսացեալն էր յարագահաս օգնականութիւն Տեառն, ոչինչ զանգիտէր արամբք երեք Հարիւրօք կալ ընդդէմ նոցա. յայնժամ ել նա փոքու

գնդաւ իւրով, և ճակատեցաւ ընդդէմ այլազգեացն, և պարտեալ զգունդն արքունի՝ նուաճեաց զանհամար բազմութիւնս զօրաց նոցա :

194. ԼԻՒՍԻԱՍ ՅԱԼԹԻ Ի ՅՈՒԴԱՅ ՄԱԿԱՐԷԻ:

Որք միանգամ յայլազգեաց անտի պարեցան, եկեալ պատմէին Լիւսիայ զամենայն գործն՝ որ գործեցաւ. իբրև լուաւ նա զայն՝ տրտմեցաւ յոյժ, զի ոչ յաջողեցան գործք նորա: Ի հասանել ամին միւսոյ՝ գունդ կազմէր, զօրս բովանդակէր իբրև վեց հազար հետեակ, հինգ հազար հեծեալ սպառազէն, գնալ աւար հարկանել զերկիրն Հրէաստանի: Եւ նոցա ընդ առաջ Յուդա մետասան հազար արամբք, ընդ որս սկսաւ կալ յաղօթս և օրհնել զԱստուած: Հուսկ ապա հարան միմեանց ՚ի դիմի, և անկան ՚ի ժամանակին յայնմիկ ՚ի գնդէ անտի Լիւսիայ՝ հինգ հազար հեծեալ, յորմէ զահի հարեալ մնացելոցն՝ դարձան ՚ի փախուստ:

195. ՅՈՒԴԱՍ ՄՐԲԷ ԶՏԱՃԱՐ ՏԵԱՌԻ:

Իյօսել սկսաւ ապա Յուդա եղբարբքն հանդերձ ընդ ժողովրդեան և ասէ. ահաւասիկ խորտակեցան թշնամիք մեր ՚ի ներքոյ ոտից մերոց. եկայք երթիցուք մաքրեսցուք ըզսրբութիւնսն, մաքրեսցուք զտաճարն առնել նաւակատիս ՚ի նմա: Ժողովեալ ամենեցուն՝ եկին ՚ի լեառն Միօն. տեսին զսրբութիւնսն աւերեալ, զսեղանն աղտեղեալ, ըզգրունսն հրոյ ձարակ տուեալ, թուփ առ թուփ բուսեալ ՚ի սրահսն իբրև յանտառի: Յայնժամ մաքրեաց Յուդա զամենայն, զգրունսն նորոգեաց, շինեաց զսեղանն, և արարին զնաւակատիս աւուրս ութ, մատուցանելով ուրախութեամբ զպատարադս փրկութեան և օրհնութեան. հաստատեաց հանդերձ եղբարբք իւրովք և եկեղեցեաւն, զի

Հանապազ կացցեն աւուրքս այսոքիկ նաւակատեաց 'ի զլուխ տարեկանի աւուրս ութ՝ ուրախութեամբ և ցընծութեամբ:

196. ԱՍՏՈՒԼԾ ՅՈՒՅԱՆԷ ԶՆՇԱՆՍ ԻՆՉ ՏՈՒՂՅՑ ՄԵՎԱԲԷԻ Ի ՄԱՐՏԻ ԱՆԻ ԵՒ ՀԱՍԱՆԷ ՆՄԱ ՅՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Իբրև լուան Հեթանոսք՝ թէ շինեցաւ սեղանն, և նորոգեցաւ սրբութիւնն միւսանգամ, բարկացան յոյժ և խորհեցան ջնջել զամենայն ցեղս նոցա: Տիմօթէոս՝ որ յառաջ 'ի պարտութիւն մատնեցաւ 'ի ձեռաց Եբրայեցւոց, կրկին զօրաժողով լինէր յօտարակողմն կուսաց. զբազում այրուծի զԱսիացւոցն կուտեալ՝ գայր վարել 'ի գերութիւն զերկիրն Հրէաստանի. ընդ մերձենալ նոցա՝ Մակաբայեցիքն 'ի խնդրուածս պնդէին առ Աստուած: Ի ծագել արշալուսոյն՝ երկոքին կողմանքն ընդ միմեանս խառնէին. կիսոցն՝ օր բարենշան զյաղթութիւն մատուցանէր. զի փառքն զօրութեանց յերկնից զօգնականութիւն Տեառն իւրեանց լուսով իջեալ շուրջանակի պատեալ պահէին. կիսոցն զսրտմտութիւն բարկութեան՝ ըստ հպարտութեան զօրավարացն: Այն ինչ լինէր նորա զանողորմ ձեռն պատերազմի 'ի գործ արկանել, երևեցան յերկնից արք Տինգ հեծեալ և սպառազէն՝ վառեալ 'ի զէն ոսկի, որ եկին իջին առ գնդաւն թշնամեաց. դային խառնէին 'ի գունդն Եբրայեցւոց՝ որք 'ի մէջ առեալ զՅուդա Մակաբէ, յառաջ խաղային իւրեանց զինուքն. և յամենայն կողմանց նետք նոցա դային 'ի վերայ առհասարակ 'ի բաց թօթափէին, բուռն դէպ կայեալ 'ի կուրութիւն դարձուցանէին զթշնամիս: Յայնմ աւուր անկեալ գտանէր 'ի գնդէ թըշնամեացն առաջի նոցա քսան հազար և հինգ հարիւր ըսպառազէն:

197. ԱՆՏԻՈՒՔՈՍ ՀԱՐԿԱՆԻ ՉԱՐԱՉԱՐ ՀԱՐՈՒԵԾՈՎՔ:

Առեալ Անտիոքոսի՝ թէ զօրավարք իւր 'ի պարտութիւն մատնեցան յերեսաց Յուդայ Մակարէի, մեծամեծս փքալով Հպարտութեամբ իւրով զմտաւ ածէր անմարդի կացուցանել զԵրուսաղէմ: Իսկ ամենակալ բարձրեալն Աստուած՝ եհար զնա աներևոյթ հարուածովք: Հասին ցաւք ոսկերաց սաստիկք և անհնարինք, և անկան խիթք դառնութեան 'ի փոր մինչև յաչաց անտի եռանդն որդանց բղխեալ սորսորել, և 'ի նեխոյն զօրացն նեղել:

198. ՄԱՀ ԱՆՏԻՈՒՔՈՍԻ:

Յայնմ վայրի սկսաւ Անտիոքոս բեկանել յամբարտաւանութենէ իւրմէ և 'ի խտտութենէ, և սկսաւ խօսել այսպէս. պարտ և պատշաճ է հնազանդել Տեառն Աստուծոյ. աղաչէր, ուխտս զնէր առ այն՝ որ չէր նմա ողորմելոց, գեղեցիկ պատարագօք զարդարեալ զտաճարն սուրբ. զզարդ և զսպաս տաճարին՝ զորս յառաջ տարեալ էր, բազմապատիկ անդրէն դարձուցանել, և զբոլոր ազգն Եբրայեցւոց ազատ կացուցանել 'ի հարկաց. զամենեսին առ հասարակ 'ի պատուի և 'ի մեծարանս ունելով՝ ամենայն ուրեք քարոզել զղօրութիւն մեծութեանց Աստուծոյ. սակայն չողորմեցաւ նմա Աստուած, և ոչ էջ 'ի զղջումն նորա, որով և յանհնարին խտտութիւն ցաւոց կործանեալ՝ սատակամահ եղև սոյն այս Անտիոքոս:

199. ԿՐԿԻՆ ՅԱՂԹԻ ԼԻՍՄԷՍ Ի ՏՈՒՐԱՅ ՄԱԿԱՐԷԻ:

Չկնի մահուան Անտիոքայ անօրինի թագաւորեաց որդի նորա Անտիոքոս փոխանակ նորա, որ վառեալ նախանձու հօր իւրոյ՝ հանապազ 'ի մարտ ելանէր ընդդէմ Իսրայէլի, և յաղթէր 'ի նոցանէ մեծամեծ հարուածովք: Յետ

սակաւ ժամանակաց հազարապետն արքայի Լիւսիաս՝ իբրև տեսանէր զայս անհնարին հարուածս՝ ՚ի մեծ բարկութիւն շարժէր վասն գործոցն. զօրաժողով լեալ գայր անհամար բազմութեամբ ՚ի Հրէաստան, և պատէր զօրօք իւրովք, և ՚ի նեղ մեծ զամուրն հասուցանէր: Իբրև ազգ եղև Մակարայեցւոց պաշարումն ամրոյն, ողբովք և արտասուօք անկեալ աղաչէին զԱստուած, զի հրեշտակ բարութեան առաքեսցէ ՚ի փրկութիւն Իսրայէլացւոց. ինքն Մակարէ զօրօք իւրովք հանդերձ վառեալ՝ պատրաստեալ միաբան յառաջ մատչէր: Այն ինչ լինէր նոցա մերձ ՚ի կողմն քաղաքին Երուսաղէմացւոց հասանել, եկն էջ առաջի նոցա այր մի սպիտակաձի, ճօճէր զնիզակն, և պատրաստէր ՚ի վերայ յարձակել: Իսկ Յուդայի ոչինչ հայեցեալ յայս երկիւղալի տեսարան, առիւծաբար յարձակեալ ՚ի վերայ գնդին թշնամեաց՝ անդէն առ նմին հարկանէր զմետասան հազար ընտիր զօրականս, և զհազար հեծեալս. իսկ ըզմնացեալսն ՚ի փախուստ դարձուցանէր:

200. ԱՆՏԻՈՒՓՈՍ ԱՐՔԱՅ ԱՆՀԱՄԱՐ ԲԱԶՄՈՒԹԵԱՄԲ ԳԱՅ ՅԵՐԳԻՐԸՆ ՀՐԷԱՍՏԱՆԻ:

Ի ժամանակս ինչ գէպ եղև առ Յուդայիւ գալ Անտիոքոսի Լիւսիաւ հանդերձ ՚ի Հրէաստան մետասան բիւրու վահանաւոր զօրօք, հինգ հազար և երեք հարիւր հեծելազօր գնդաւ, և քսան և երկու փղօք, որք ընթանային ընդ առաջ և յորոց վերայ կանգնեալ էին զպատնէշս փայտեղէնս. ուստի և մատչէին սպառազինեալ: Իբրև զայն զգայր Յուդա, պատուէր տայր ժողովրդոց զցայգ և զցերեկ կարգալ առ Տէր. յուսալով յաւետ յԱստուած քան ՚ի բազմութիւ զօրութիւնս. անդէր վազվաղակի զհետ թշնամեաց, ՚ի սուր սուսերի կոտորէր զնոսա, և արկանէր ընդ բանակսն

Թագաւորին 'ի ներքս զսրահակօքն, կոտորէր զգիշերապահ հռնապանսն՝ զարս իբրև զչորս հաղար, և զքաղաքսն աւերեալ հրձիգ առնէր :

201. ԱՄԲԵՐՏԵԱՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՀ ՆԻՊԱՆՈՎԱՐՆԵ:

Գեմետր աւար հարեալ զԱսորեստան, կամեցաւ ևս տիրապետել Հրէաստանի. յոյր սակս կոչեալ զփղապետ Նիկանովը՝ ետ 'ի ձեռս նորա զզօրս, և կացոյց զնա սպարապետ կողմանցն Հրէաստանի. արձակեաց մեծաւ հանդերձաւ բազում պատուիրանաւ, զի զնոյն ինքն Յուդա կալցին ողջամբ, և զգունդն ամենայն յայս կոյս և յայն կոյս ցրեսցեն : Իսկ Յուդա յամենայն ժամ յուսացեալ 'ի Տէր՝ որոյ օգնութիւնն ոչ պակասէր 'ի նմանէ, սակաւաթիւ գընդաւ իւրով քաջաւերէր զզօրս իւր. հապա յարձակեալ գունդն Մակարեան և Յուդա՝ հարին 'ի զօրաց հեթանոսաց ոչինչ պակաս քան զերիս բիւրս և զհինգ հաղարս : Ի գունդս անկելոց գտաւ և Նիկանովը, զորոյ զգլուխն հատեալ և զաջ ձեռն թիկամքն հանդերձ, բարձեալ բերին յԵրուսաղէմ, և կախեցին զայնս 'ի տես բարձրամուր աշտարակին :

202. ՄԸՀ ՅՈՒՒՆՑ ՄՐԿԱՔԵՒՆ:

Ոչինչ լուաւ Գեմետր՝ թէ անկեալ կործանեալ էր Նիկանովը գնդաւն իւրով 'ի Յուդայէ, կրկին առաքեաց ըզբաքիդ յերկիրն Հրէաստանի զօրութեամբ բազմաւ. որոյ եկեալ ճակատեցաւ ընդդէմ Յուդայեան գնդին, և սկսաւ մարտ դնել յերկոցունց կողմանց : Յայնմ վայրի վերաւորք յերկուց կողմանց անկեալ թաւալէին. անդ անկանէր Յուդա առաջին նահատակօքն, և որ մնացեալ էին՝ 'ի փախուստ դառնային. դարձան Յովնաթան և Շմաւօն եղբարք

երկոքին, բարձին զՅուդա, և թաղեցին 'ի շիրիմս Տարց
իւրեանց. լացին կոծեցան որդիքն Իսրայէլի կոծ մեծ ա-
ւուրս բազումս :


203. ՅՈՋՆԱԹԱՆ ԺԱՌԱՆԳ ՅՈՒԻԱՅ ՄԱԿԱՐԷԻ :

Ի տեղի Յուդայի ընտրեցաւ եղբայր նորա Յովնաթան՝
լինել առաջնորդ Իսրայէլի, և տալ պատերազմ՝ ընդ թըշ-
նամիս նորա. սա նախանձաւոր գտեալ Յուդայի 'ի քաջու-
թիւնս, բազում անգամ՝ յաղթեալ նուաճէր զԲաբելոն,
մինչև խօսել նմա զբանս խաղաղութեան. զօրաժողով լի-
նէր արքայն Աղէքսանդրոս Անտիոքեան, գալ տալ պատե-
րազմ ընդ Գեմետրեայ : Եկեալ բաղնեցան թագաւորքն
երկոքին ընդ միմեանս. 'ի փախուստ դառնայր զունդն Գե-
մետրեայ, յաղթական լինէր նոցա Աղէքսանդրոս, որ հաս-
տատեալ էր զդաշն խաղաղութեան ընդ Յովնաթանայ և
տուեալ նմա զպսակ ոսկի և զծիրանիս, զի կացցէ նա հա-
ւատարիմ՝ յուխտին յայնմիկ : Յետ ժամանակաց ինչ ըս-
պանաւ 'ի Տրիփոնայ Յովնաթան, որոյ և զօրքն 'ի պարտու-
թիւն մատնեցան :

204. ՓՈՒԵՆԱԿ ՅՈՋՆԱԹԱՆՈՒ ՏԻՐԷ ԻՍՐԱԵԷԼԻ ՍԻՄԷՈՋԱՆ ԵՂ-

ԲԱՅՐ ՆՈՐԱ :

Իբրև մեռաւ Յովնաթան, ժողովեաց Սիմէոն զժողո-
վուրդան, և քաջալերեալ լիթարէր զնոսա. հասկա բար-
ձեալ Սիմէոնի զմարմին եղբօր իւրոյ՝ թաղէր 'ի շիրիմս
Տարց իւրոց. և զ 'ի տակաւ ժամանակաց ինքն ևս սպանաւ
'ի Պաղոմէոս. զորոյ զժառանգութիւնն էառ Յովհան. և
զկնի միոյ ամի թագաւորութեան իւրոյ մեռաւ և ինքն, և
զ՞ անգութիւնն եթող որդւոյ իւրում Արիստաբուղոսի,
որ առաջին էառ զանուն արքայութեան, և եդ 'ի գլուխ
իւր զթագ :



205. ԻՄՐԱՅԷԼԱՑԻՔ ՏԱՆ ԶՀԱՐԿ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ, ԹԱԳԱՒՈՐԷ
ՀԵՐՈՎՊԷՍ Ի 4000, ԱՄԻ ԶԳՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՀԽԱՐՀԻ:

Օ կնի մահուան Արիստարուղոսի թագաւորեաց որդի նորա Աղեքսանդր՝ փոխանակ նորա: Սա ոչի՛նչ իւրք փառաւորեցաւ. բայց էին նմա երկու որդիք, որ խստութեամբ վիճեալ ընդ միմեանս՝ թեկն ածէին զթագաւորութեան: Լուեալ զայսպիսի երկպառակութիւնս Պոմպէոս առաջնորդըն ազգին Հռովմայեցւոց՝ եկն յերկիրն Յուդայ, և անդորր մատուցեալ խռովութեանն՝ որ ՚ի մէջ երկուց եղբարց, միացոյց զվերոյիշեալ տէրութիւնն ընդ Հռովմեական թագաւորութեան, և զՅուդայ արար հարկատու Հռովմայեցւոց: Յետ ժամանակաց էառ զթագաւորութիւնն Յուդայ՝ Հերովդէս, յորոյ աւուրս ծնաւ Քրիստոս, նախագուշակեալն ՚ի մարգարէից:



Վ Ա Խ Ճ Ա



ՎՐԻՊԱԿԻՔ ՏԱՌԻՑ Ի ՏՊԱԴՐՈՒԹԵԱՆՍ

Էջ.	Տող.	Սխալ.	Ուղեղ :
1.	19.	սանղծ	ստեղծ :
3.	12.	տտտասկ	տատասկ :
—	13.	կերիցեո	կերիցես :
4.	8.	'կ վերայ	'ի վերայ :
5.	7.	Տեր	Տէր :
12.	8.	պատրաստե	պատրաստէ :
15.	5.	երկն չէր	երկն չէր :
16.	4.	Յովսէփայ	Յովսէփայ :
26.	15.	Հաղարապատին	Հաղարապե- տին :
71.	6.	դիտեմ	դիտեմ :

